ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

EUROPEAN
EDUCATIONAL REGIONAL
ACADEMY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2(02)

ԵՐԵՎԱՆ
2013

ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

EUROPEAN
EDUCATIONAL REGIONAL
ACADEMY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 (02)

ԵՐԵՎԱՆ
2013

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել
Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ

ՀԱՄԱՐԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 12 ԱՄՅԱԿԻՆ

Գլխավոր խմբագիր՝

Հովհաննիսյան Դեզի տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ

Հովհաննիսյան Դ.Ն., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աբրահամյան Հ. Մ., պատմագիտության դոկտոր
Աստվածատրյան Ա. Վ., բժշկական գիտ. դոկտոր
Բաղիրյան Գ. Մ., իրավագիտության դոկտոր
Գրիգորյան Յու. Գ., ֆիզմաթ գիտ. դոկտոր
Ղարսլյան Է. Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մովսիսյան Յու. Մ., ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահանյան Գ. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Քրիստոֆ Կրեյտց, ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժող./
Ե 744 ԵՏԱ. Գլխ. խմբ.՝ Դ. Հովհաննիսյան, - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2013:
Գիրք 4 - 236 էջ:

Ժողովածուն ընդգրկում է իրավաբանության, տնտեսագիտության, կառավարման տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИЯ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ISBN 978-9939-840-72-7 ԳՄԴ 72

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2013
© Publishing of European Educational Regional Academy 2013



Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ռեկտոր Անդրանիկ Ավետիսյան

Հարգելի գործընկերներ, սիրելի ուսանողներ, գիտաժողովի հարգելի մասնակիցներ.

Ուրախ եմ ողջունելու Ձեզ Եվրոպական կրթական ակադեմիայի 12-ամյակին նվիրված գիտաժողովի բացման առթիվ: Սա ակադեմիայի շրջանակներում իրականացվող մեր առաջին գիտաժողովն է: Վստահ եմ, որ այն ոչ միայն շարունակական կդառնա, այլև միջազգային բնույթ կստանա:

Այսօր մեր ժողովուրդը նոր պետականություն է կերտում և այդ ճանապարհին կարևորվում է կրթությունը, որից կախված է շատ բան և որը որոշում է ամեն ինչ: Քաղաքագետներն իրենց կարծիքն ունեն պետության, պետականության կայացման առնչությամբ, ես, որպես գիտության, կրթության մարդ, կարող եմ ասել, որ 21-րդ դարը գիտության դար է և մեր ապագան պայմանավորված է նրանով, թե ինչ գիտական պոտենցիալով մենք կներկայանանք աշխարհին: Իսկ գիտության հիմքը միանշանակ հիմնավոր կրթությունն է: Թերևս մի քիչ դանդաղ, բայց կայունորեն փոխվում է մեր տեսլականը կրթության հանդեպ և դրա վառ ապացույցը Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, մեր կրթօջախի գոյությունն է Հա-

յաստանի Հանրապետությունում: Մենք ներդնում ենք, այսպես ասած՝ հայկականացնում ենք եվրոպական կրթական չափանիշները: Հայությունը, հայ ժողովուրդը մեծ ներուժ ունի գիտության, կրթության զարգացման համար: Օրինակները բազմաթիվ են, հարյուրավոր, հազարավոր դեպքեր կարելի է նշել՝ սկսած վաղ անցյալից մինչև բարձր տեխնոլոգիաների մեր ժամանակաշրջանը, երբ հայերս մեծ ներդրում ենք ունեցել այս կամ այն երկրում, գիտության այս կամ այն ոլորտում: Բնականաբար՝ նաև Հայաստանում, որը Սովետական Միության օրոք համարվում էր այդ հսկա երկրի գիտական կենտրոններից մեկը: Այսօր պետք է ոչ միայն պահպանել, այլև արագ տեմպերով զարգացնել դարերի ընթացքում մեր ստեղծած գիտակրթական ավանդույթները: Մենք ուղղակի պարտավոր ենք ժամանակի պահանջներին համահունչ զարգացնել այդ ավանդույթները և մեր այս գիտաժողովը ես կհամարեի այդ ճանապարհին արված հերթական քայլ: Կարծում եմ, որ անհրաժեշտ է կրթության ոլորտում մասշտաբային էֆեկտի կիրառումը, ինչը էական խթան կհանդիսանա նաև մեր երկրի արագ զարգացման համար: Աշխարհում ևս կրթության ասպարեզում հեղափոխական փոփոխություններ են տեղի ունենում: Հատկապես վերջին տասնամյակում, թռիչքային զարգացման արդյունքում, նոր տեխնոլոգիաները էապես փոխել են աշխարհը, և աշխարհի հետ համընթաց շարժվելու համար մենք ունենք բոլոր նախադրյալները՝ Հայաստանում ներդրվող եվրոպական կրթական համակարգ, ի դեմս մեր ակադեմիայի, լուրջ գիտական պոտենցիալ կրող երիտասարդություն և մեծ ցանկություն: Ունենք մտավոր լուրջ ներուժ և ուղղակի պարտավոր ենք այն լիարժեքորեն իրացնել: Դա մեր պարտքն է: Պետք է հասկանանք, որ Հայաստանի մրցունակության բարձրացումը միջազ-

գային ասպարեզում և սոցիալ-տնտեսական ու քաղաքական շատ հարցերի լուծումը միանշանակորեն պայմանավորված է մեր ունեցած գիտական ներուժի զարգացմամբ: Թող վերամբարձ չինչի, բայց Հայաստանը պետք է նախահարձակ լինի կրթական նորագույն տեխնոլոգիաների կրողներից մեկը դառնալու համար: Պարտված, քայքայված Գերմանիան կրթության շնորհիվ ընդամենը մեկ-երկու տասնամյակում դարձավ աշխարհի առաջատար պետություններից մեկը, նույնը՝ Ճապոնիան: Նրանք չխնայեցին և ունեցած սուղ միջոցների հիմնական մասը ներդրեցին կրթության ոլորտում: Նույնն է մեր ուղին՝ հետազոտական հիմնավոր կրթություն և գիտություն: Հավատացած եմ, որ այս գիտաժողովը միտված է հենց դրան: Նորից ողջունում եմ, ցանկանում արդյունավետ աշխատանք:

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի գիտության գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դեզի Հովհաննիսյան

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ և գործընկերներ.

Թույլ տվեք ողջունել և շնորհավորել Ակադեմիայի 12 ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների գիտաժողովի մեկնարկը:

Հայաստանի ապագայի կերտման համար չափազանց կարևորվում է կրթության և գիտության դերը, կրթության և գիտության փոխադարձ ինտեգրումը: Գիտական, հետազոտական մեր համալսարանի ստեղծումը տարածաշրջանի համար հույժ արդիական խնդիր էր: Նախկին խորհրդային կրթահամակարգը, որ ընդօրինակել և յուրացրել էր Վիլհելմ Ֆոն Հումբուլդի հեղինակած համալսարանական կազմակերպման գերմանական մոդելը, իրենից ներկայացնում էր միմյանցից անջատ գործող գիտական և կրթական համակարգեր, որը ժամանակին լիովին կատարեց իր դերը, սակայն 20-րդ դարի վերջում արդեն ճեղքվածք տվեց: Անշուշտ, դա աշխարհում գործող միակ և կենսունակ մոդելը չէր: Զուգահեռ գործում էին նաև այլ, այդ թվում ամերիկյան կրթական համակարգը, ուր ստեղծվել և ստեղծվում են «գիտական» համալսարաններ, հզոր կրթահամալիրներ, որոնք հանդիսանում են աշխարհում

գիտության և կրթության չափորոշիչներ և որոնց շրջանավարտ լինելը դարձել է աշխարհի լիդերների այցեքարտը: Մեր կրթական համակարգը արմատական բարեփոխումների անհրաժեշտություն է զգում և այսօր այդ բարեփոխումների ճանապարհին է:

Եվրոպական ակադեմիան այն կրթահամալիրն է, որը համատեղում, համակցում է արևմտյան կրթական և գիտահետազոտական մոդելը մեր ազգային, ինչու չէ նաև խորհրդային մոդելի լավագույն բաղադրիչների հետ: Մեր Ակադեմիան ձգտում է դառնալ դասական իմաստով եվրոպական հետազոտական համալսարան, ինչը նշանակում է մեր գիտակրթական գործունեության միջազգայնացում, այն է՝ առավելապես արևմտյան չափանիշներով ու սկզբունքներով ուսումնական ծրագրերի ներդրում, դասախոսների վերապատրաստում, գիտության բնագավառում սերտ համագործակցություն արտասահմանյան համալսարանների հետ: Այսօր էլ մեր շրջանավարտները ակադեմիական և պրոֆեսիոնալ ունակությունների առումով արժանանում են ամենաբարձր գնահատականների գործատուների շրջանում: Սակայն դա մեզ համար բոլորովին էլ չափանիշ չէ: Մենք պետք է զարգացնենք մեր Ակադեմիայի գիտական հետազոտական գործունեությունը, որի համար ունենք բոլոր նախադրյալները՝ նյութատեխնիկական բազայով ապահովված լաբորատորիաներ, ասպիրանտների, հայցորդների (թվով 90) ներգրավվածություն գիտական աշխատանքներում, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ակտիվություն գիտական գործընթացներում: Այս և հետագա գիտաժողովներում ամբողջ այդ գործընթացը կբյուրեղանա և Եվրոպական ակադեմիան իր և հանրապետությունում առկա կրթական, գիտական ռեսուրսների օպտիմալ օգտագործման շնոր-

հիվ, ինչպես նաև ինստիտուցիոնալ հետազոտական ռազմավարությամբ կարճ ժամանակամիջոցում կդառնա տարածաշրջանային առաջատար գիտահետազոտական ուսումնական կենտրոն: Ահավասիկ, երիտասարդ գիտնականների այսօրվա հավաքը այդ ճանապարհին արվող առաջին քայլերից մեկն է:

Մաղթում եմ արդյունավետ աշխատանք, փոխադարձ գործակցություն:

ԻՄԻՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Արմինե Մատենցյան

Այսօր «իմիջ» հասկացությունը լայնորեն կիրառվում է մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառներում: Որպես մասնագիտական եզրույթ այն ի հայտ եկավ տնտեսագիտության և մասնավորապես՝ գործարարության ասպարեզում դեռևս 20-րդ դարի առաջին կեսում: Հայտնի է, որ մենեջմենթում «իմիջ» բառը գործնական շրջանառության մեջ դրվեց անցյալ դարի 50-ական թվականներին ամերիկացի տնտեսագետ, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Բոուլդինգի (Kenneth Ewart Boulding, 1910-1993) կողմից, որն առաջին անգամ այն դիտարկեց ոչ միայն իբրև կառավարման գործիք կամ միջոց, այլև իբրև կառավարման օբյեկտ (image management) [1]: Այնուհետև, 60-ական թվականների սկզբին ամերիկացի հասարակագետ, պատմաբան և ԱՄՆ Կոնգրեսի ապագա գրադարանապետ, դոկտոր Բուրսթինը (Daniel Joseph Boorstin, 1914-2004) հանգամանորեն հիմնավորեց իմիջի կարևորությունը կոմերցիոն ոլորտում և հատկապես գործարարական բարգավաճման համար, ինչպես նաև առաջին անգամ դիտարկեց երկրի քաղաքական իմիջի ստեղծման խնդիրը [2]: Ավելի ուշ, ձեռք բերելով յուրահատուկ ֆենոմենի կարգավիճակ, իմիջը ներթափանցեց հոգեբանության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և կառավարման ասպարեզներ, ուր և ձևավորվեց որպես նոր կիրառական ուղղություն:

«Իմիջաբանություն» եզրույթի գիտականության աստիճանը պայմանավորված է նրանով, թե առհասարակ որ ուղղություններն են պատկանում «գիտություն» դասին և որոնք են վերջինիս տեսական և ձևաչափային հատկանիշները: Ելնելով իմիջաբանություն բառի իմաստաբանական կառուցվածքից, որում առկա է «ուսմունք» արմատը (իմիջ + բանություն, այսինքն՝ logos – ուսմունք = ուսմունք իմիջի մասին)՝ ենթադրում ենք, որ այն հավակնում է գիտության կարգավիճակի: Սակայն սա դեռ բավարար հատկանիշ չէ, մանավանդ, որ իմիջաբանությանը նվիրված սակավաթիվ գրական աղբյուրներում այն չի ստանում իր լիարժեք հիմնավորումը:

Գիտության կարևորագույն հատկանիշը որոշակի գիտական խնդրի առկայությունն է: Ո՞րն է իմիջաբանության գիտական խնդիրը: Քանի որ պատասխանը պետք է հիմնավորվի, ապա առաջին հերթին անհրաժեշտ է բնորոշել «գիտական խնդիր» հասկացությունը: Ամենաընդհանուր սահմանումը կարող է հնչել հետևյալ կերպ. *Գիտական խնդիրը պարզաբանում, լուծում պահանջող հարցի ձևակերպումն է՝ գաղափարի կամ հայեցակարգի տեսքով:* Ընդ որում, այդ գաղափարը կամ հայեցակարգը անպայման պետք է բովանդակի որոշակի անհամապատասխանություն կամ հակասություն status id-ի (ցանկալի, կատարյալ իրավիճակի) և status quo-ի (փաստացի իրավիճակի) միջև: Ըստ էության գիտական խնդրի լուծումը կայանում է հենց այդ հակասության հաղթահարման ուղիների և միջոցների որոնման մեջ:

Իմիջաբանության գլխավոր նպատակը տարբեր սուբյեկտների իմիջի կերտման տեսության և պրակտիկայի մշակումն է, որը լիովին համահունչ է այսօրվա իրականության պահանջին: Այս առումով իմիջաբանության status id-ը կայա-

նում է իմիջի ստեղծման միասնական տեսամեթոդական և տեխնոլոգիական բազայի մեջ, որը պետք է հենվի մասնագիտացված *գիտահետազոտական* կառույցների գործունեության վրա: Իրական դրությունը, ասինքն՝ status quo-ն, այլ է.

- աշխարհում դեռևս չկա իմիջի ստեղծման ամբողջական տեսություն,
- իմիջմեյքինգը, իր գործելակերպով, օպերատիվ գործողությունների շարք է և ոչ թե համակարգային, ռազմավարական մոտեցում,
- իմիջմեյքերները հաճախ արհեստավարժներ չեն և աշխատում են ինտուիտիվ մակարդակում,
- գրեթե չկան իմիջաբանության գիտամեթոդական հարցերով զբաղվող և այդ ոլորտում մասնագիտական կրթություն ապահովող ակադեմիական հաստատություններ[1],
- կան բազմաթիվ գիտական ուղղություններ (հոգեբանություն, սոցիոլոգիա, մարկետինգ, կառավարում, մշակութաբանություն և այլն), որոնց խաչման կետում առաջանում է որոշակի սուբյեկտի ցանկալի իմիջի ստեղծման անհրաժեշտություն, որն էլ առաջ է քաշում իմիջաբանությունը որպես կիրառական գիտություն:

Ակնհայտ է status id-ի և status quo-ի միջև առկա անհամապատասխանությունը: Դա մեզ հիմք է տալիս պնդելու, որ իմիջաբանությունն ունի իր ուրույն գիտական խնդիրը (իմիջի

[1] Բացառություն է կազմում ՌԴ-ում 2002թ. հիմնված Իմիջաբանության ակադեմիան (Академия имиджелогии), որն իր գործունեությունը ծավալում է գիտալուսավորչական, հրատարակչական, խորհրդատվական և կրթական ուղղություններով՝ ձգտելով միավորել ազգային և արտասահմանյան լավագույն մասնագետների փորձը:

ստեղծման միասնական տեսության և պրակտիկայի մշակում), որի լուծման հիմնական ուղղությունները երեքն են.

1. Իմիջաբանության տեսության մշակում: Այս ուղղությունը պետք է առաջին հերթին ներառի իմիջաբանության՝ որպես գիտության, կարգավիճակի հստակեցումը: Բացի դրանից, այստեղ պետք է ներկայացվեն տեսություններ այլ գիտություններից, որոնք և կկազմեն իմիջաբանության մեթոդոլոգիական հիմքը:
2. Իմիջաբանության հայեցակարգերի մշակում, օրինակ՝ տարբեր բնագավառներում հաջողության հասնելու հայեցակարգեր, իմիջաստեղծ տեղեկատվության ձևավորման հայեցակարգ, իմիջի հոգեբանական (գիտակցական և ենթագիտակցական) ընկալման հայեցակարգ և այլն:
3. Իմիջմեյքինգի[2] տեխնոլոգիաների մշակում: «Տեխնոլոգիաներ» ասելով պետք է հասկանալ իմիջի ստեղծման պրակտիկ միջոցների, ուղիների, գործիքների համակարգեր, որոնք կիրառելի կլինեն տարբեր բնագավառներում անհրաժեշտ իմիջների ստեղծման համար:

Այսպիսով, կարելի է ասել, որ իմիջաբանությունը համապատասխանում է ինքնուրույն գիտության հիմնական ձևաչափային հատկանիշներին և կարող է բնորոշվել իբրև գիտություն իմիջի ստեղծման տեսության և պրակտիկայի մասին:

---

[2] Անգլ.՝ image making – որոշակի սուբյեկտի իմիջի ստեղծման համար նախատեսված տեխնոլոգիաների, գործողությունների համալիր: Իմիջմեյքինգը կազմում է իմիջաբանության գիտագործնական ճյուղը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Boulding, Kenneth E. The Image: Knowledge in Life and Society. – Michigan University Press, 1956. Pages: 184.
2. Boorstin, Daniel J. The Image: A Guide to Pseudo-Events in America. – New York: Harper Colophon, 1961. Pages: 336.

ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Անի Գոզալյան

Այսօր դժվար է պատկերացնել որևէ զարգացած երկիր՝ առանց լավ զարգացած ապահովագրական շուկայի: Բոլոր զարգացած երկրներում ապահովագրությունը վաղուց արդեն առօրյա է: Ապահովագրական կուլտուրան գտնվում է զարգացման բարձր մակարդակի վրա և ունի երկարամյա հարուստ փորձ:

Հայաստանում, ցավոք, այսօր ապահովագրական շուկան դեռ շատ հեռու է «կատարյալ» լինելուց, ապահովագրության որոշ տեսակներ, որոնք շատ կարևոր են այդ շուկան լիարժեք զարգացնելու համար, ընդհանրապես չեն գործում: Ապահովագրության որոշ տեսակների պարտադիր կիրառման միջոցով լուծվում են կարևորագույն սոցիալական խնդիրներ (օրինակ՝ պարտադիր բժշկական ապահովագրության միջոցով հասարակության առողջապահության խնդրի լուծում):

Հիվանդության դեպքում սոցիալական օգնությունը ստացել է բժշկական կամ, ինչպես այն ժամանակ անվանում էին, հիվանդանոցային ապահովագրության ձև 19-րդ դարի երկրորդ կեսին: Գերմանիայում 1883թ.-ին առաջին անգամ պետականորեն ընդունվեց «Աշխատողների պարտադիր հիվանդանոցային ապահովագրության մասին» օրենքը:

Պարտադիր բժշկական ապահովագրությունը սոցիալական ապահովագրության ձևերից է և հանդիսանում է պետության սոցիալական քաղաքականության հիմնական բաղկացուցիչներից մեկը: Այն ապահովում է բոլոր քաղաքացիներին

բուժօգնություն և դեղորայքային օգնություն ստանալու հավասար հնարավորություն: Հավասար հնարավորությունը պայմանավորված է պարտադիր բժշկական ապահովագրության երկու հիմնական սկզբունքներով՝ «հարուստը վճարում է աղքատի համար», այսինքն՝ անկախ վճարված ապահովագրավճարի մեծությունից, բոլորը ստանում են միևնույն կարգի երաշխավորված մակարդակի բուժսպասարկում, և «առողջը վճարում է հիվանդի համար», այսինքն՝ բոլոր քաղաքացիները չէ, որ հիվանդանում են, հետևաբար նրանց վճարած ապահովագրավճարները ծախսվում են հիվանդ քաղաքացիների բուժման վրա:

ՀՀ-ում առողջապահության համակարգին հատկացվում են միլիարդավոր դրամներ, սակայն բնակչության առողջապահության խնդիրը մնում է չլուծված: Հատկապես խոցելի է մնում բնակչության այն հատվածը, որն ամենից շատ կարիք ունի սոցիալական պաշտպանվածության: Այսինքն՝ պետպատվերի քաղաքականությունը գործում է անարդյունավետ, և պետական միջոցներն էլ վատնվում են ոչ նպատակային:

Այս առումով պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը շատ արդյունավետ այլընտրանք է հանդիսանում: Վերջինիս ներդրման արդյունքում զգալիորեն կբարձրանա տվյալ ոլորտում ֆինանսական հոսքերի վերահսկելիությունն ու թափանցիկությունը: Բացի այդ, համակարգի ներդրման արդյունքում հայաստանյան ապահովագրական շուկան կդառնա շատ գրավիչ օտարերկրյա ներդրումների համար: Ակնհայտ է, սակայն, որ այսօր համակարգի ներդրումը կապված է մի շարք խնդիրների հետ:

Պետության համար համակարգի ներդրումը ենթադրում է լուրջ ծախսեր, որոնց համար հարկավոր են եկամտի աղբ-

յուրներ: Այսօր արդեն պետությունն իրականացնում է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում, որի տարեկան գումարը յուրաքանչյուր աշխատողի համար կազմում է 132, 000 ՀՀ դրամ: 2012թ. այդ նպատակով ծախսվել է 18, 000, 000, 000 ՀՀ դրամ: Սա նշանակում է, որ 136, 360 պետական աշխատող օգտվում է այս փաթեթից: Եթե աշխատողների քանակը բազմապատկենք 52, 000-ով (սա մեկ աշխատողի համար նախատեսված պարտադիր բժշկական ապահովագրության ծառայության բազային փաթեթի ապահովագրավճարի գումարն է), ապա կտեսնենք, որ պետությունը 2012թ. ծախսել է 7,000,000,000 ՀՀ դրամ միայն ապահովագրության համար: Պայմանականորեն պարտադիր բժշկական ապահովագրության համար հիմք ընդունենք բազային ապահովագրավճարի գումարը: Եթե պետական հատվածի բոլոր աշխատողները (260 100 աշխատող 2012թ. դրությամբ) ապահովագրվեն, պետությունը կծախսի 13,525,200,000 ՀՀ դրամ: Բնակչության տնտեսապես ոչ ակտիվ հատվածի, այդ թվում՝ ուսանողների, տնային տնտեսություն վարողներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամների և գործազուրկների թիվը 2012թ.) դրությամբ կազմում է 1,111,100 մարդ: Բնակչության այս հատվածի համար ապահովագրավճարի գումարը կկազմի 57,777,200,000 ՀՀ դրամ: Այս գումարը 7,350,000,000 ՀՀ դրամով պակաս է առողջապահությանը հատկացված 2012թ.-ի գումարից: Այսինքն՝ պետության ծախսերը կլինեն ավելի քիչ, բայց խիստ նպատակային և թափանցիկ:

ՀՀ ապահովագրական շուկայում գործող ընկերությունները չունեն բավարար ռեսուրսներ (կապիտալ, աշխատուժ, նյութական ու տեխնիկական հագեցվածություն և այլն) միան-

գամից տվյալ շուկայում մասնագիտացված և որակյալ գործունեություն ծավալելու համար: Ուստի նախքան համակարգի ներդրումը անհրաժեշտ է գործող ապահովագրական ընկերությունների համար սահմանել ժամկետներ՝ միջոցները համալրելու և մասնագետներ պատրաստելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է մշակել ընկերությունների լիցենզավորման լուրջ մեխանիզմներ: Շատ կարևոր է նաև բուժհաստատությունների և բժիշկների լիցենզավորումը՝ տվյալ համակարգին մասնակցության թույլտվություն ստանալու համար: Ընդ որում՝ բժիշկների որակավորման վկայականները պետք է տրամադրվեն միջազգային հեղինակություն ունեցող կազմակերպությունների կողմից՝ կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար:

ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Անի Կատինյան

Այսօր գործնականում չկա մի այնպիսի ոլորտ, որտեղ այս կամ այն չափով չեն ընթանում ինովացիոն գործընթացներ: Ազգային ինովացիոն տնտեսություն ձևավորելու համար հիմնական խնդիրներից մեկը ինովացիոն գործընթացների բաժանումն է ըստ ոլորտների: Պետական և մասնավոր հատվածի համար նպատակ են հանդիսանում ինովացիոն գաղափարը, ինովացիոն գործունեությունը, նախագծի կարևորության մակարդակն ու նախագծային կառավարման բովանդակությունը: Այս տեսանկյունից սոցիալական ոլորտը հանդիսանում է ինովացիոն ծրագրերի և ինովացիոն գործունեություն ծավալելու համար մեծ հնարավորությունների բացահայտման հետաքրքիր ու ներդրումային դաշտ: Տնտեսապես զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն գործընթացների կառավարման տեսանկյունից՝ ինովացիոն սոցիալական ծրագրերը և գիտատար արտադրությունները հանդիսանում են տնտեսության իրական արագ զարգացող և արդյունավետ ոլորտ, որը զգալի ազդեցություն ունի տնտեսության մյուս ոլորտների վրա: Գիտատեխնիկական գործունեության արդյունքների օգտագործմամբ ստեղծված տեխնոլոգիաները, ինովացիոն ծրագրերը և ընդանրապես ինովացիոն գործընթացների կառավարումը համարվում են պետության հիմնական ռեսուրսները:

Շուկայական տնտեսությունում սոցիալական ինովացիոն գործունեությունը արդյունավետ և ամբողջական չի լինի, եթե բացակայում է այդ գործընթացի պետական աջակցությունը, ինչպես նաև ինովացիոն ծրագրերի իրագործման ընթացքում գործող համապատասխան պետական քաղաքականությունը: Ինովացիոն գործընթացների կառավարման տեսանկյունից ինովացիոն ծրագրերի զարգացման և իրագործման համար պետական սոցիալական քաղաքականության մշակումը պետք է հիմնված լինի գիտահետազոտական աշխատանքների, դրանց կիրառման ուղղությունների և գործընթացի իրականացման տարբեր մեթոդների, խնդիրների ու կանխատեսումների հնարավոր ուղղությունների վրա: Պետական միջոցառումների իրականացման համար առավել նպատակահարմար է հստակեցնել ՀՀ-ում սոցիալական ոլորտի պետական միասնական համակարգի շրջանակները, որի գլխավոր նպատակը կդառնա պետության մասնակցությունը երկարատև սոցիալական ինովացիոն ծրագրերի կազմակերպմանը և իրականացմանը, ինչպես նաև դրանց հետագա ինքնազարգացման համար կձևավորի բարենպաստ սոցիալ-տնտեսական և իրավական միջավայր: Շուկայական տնտեսությունում ինովացիոն գործընթացը ամենաառանցքային խնդիրներից է համարվում, քանի որ վերջինիս արդյունքներից է կախված ինովացիոն ծրագրի տնտեսական հաջողությունը[1]: Ինովացիոն գործընթացների կառավարման տեսանկյունից՝ գործունության ընթացքում կարող են ծագել դրական և բացասական արտաքին արդյունքներ, ինչպիսիք են՝ գործազրկության մակարդակը, աշխատանքի ցածր արտադրողականությունը, ոլորտում օ-

[1] Клеитон К., Реинор М., Решение проблемы инноваций в бизнесе. Как создать растущий бизнес и успешно поддерживать его рост (Бизнес Букс, М., 2004, с. 18-22).

ռենսդրական բազայի բացակայությունը, մասնագետների պակասը և այլն: Զարգացած երկրներում տնտեսական աճի 35-50%-ը ձեռք է բերվում ինովացիոն գործընթացների շնորհիվ[2], որի հիմնական սոցիալ-տնտեսական դրական արդյունքները արտահայտվում են բնակչության զբաղվածության բարձրացմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն չունի արդյունաբերական զարգացման բարձր մակարդակ, ռեսուրսներ, անհրաժեշտություն է առաջանում տնտեսական զարգացումը ուղղելու սոցիալական ոլորտ, որի կայունացումը հանգեցնում է գործազրկության մակարդակի կրճատմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Այս պատճառով է նաև, որ ինովացիոն գործընթացների կառավարման տեսանկյունից՝ պետական քաղաքականությունը անհրաժեշտ է ուղղել սոցիալական ոլորտի զարգացմանը: Մասնավորապես, ծրագրերի զարգացման տեսանկյունից ավելի արդյունավետ է դիտարկել և կիրառել տնտեսապես կայացած երկրների փորձը և զարգացման ընթացքը:

ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործունեություն ծավալելու և նոր ծրագրեր ներդնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել զարգացած երկրների փորձից բխող հետևյալ հիմնախնդիրները.

- կառավարությունը պետք է ապահովի բարենպաստ պայմաններ այնպիսի կազմակերպությունների համար, որոնք շահագրգռված կլինեն ինովացիոն ծրագրեր ներդնել սոցիալական ոլորտում,

[2] Клавдиенко В., Стимулирование инновационной активности: мировые тенденции и Россия // Общество и экономика. – 2006. – N7-8. – С. 130-131

- ֆինանսական, մասնավորապես՝ վարկային միջոցների հասանելիության ապահովման անհրաժեշտություն,
- բարենպաստ հարկային միջավայրի ձևավորում և ներդրում,
- պետական միջամտությամբ մասնավոր հատվածի վերապատրաստման, ուսուցման, համակարգերի կատարելագործման և տեղեկատվության ապահովում,
- կառավարությունը պետք է աջակցի և հետազոտի տարբեր համագործակցության ձևերն ու միջոցները սոցիալական ինովացիոն ոլորտը մեծացնելու նպատակով, մասնավորապես՝ պետության համագործակցությունը և աջակցությունը մասնավոր հատվածին, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել տնտեսական աճին զուգընթաց սոցիալական ծրագրերի ներդրման մատչելիությունը:

Այսպիսով՝ նշենք, որ ինովացիոն գործընթացների կառավարման տեսանկյունից ՀՀ-ում սոցիալ-տնտեսական ոլորտը պետք է գրավիչ լինի ինչպես օտարերկրյա ներդրումների ներգրավման, այնպես էլ ոլորտում զբաղված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների համար: Այստեղ էական նշանակություն ունի բնակչության կենսամակարդակի բարձրացումն ու սոցիալական կայունությունը՝ որպես սոցիալական ոլորտը բնութագրող ցուցանիշ: Այս առումով ՀՀ-ի համար հեռանկարային ուղղություն կարող է հանդիսանալ սոցիալական ոլորտում պետական և միջազգային մաշստաբնեռով ֆինանսական միջոցների ներդրումը, որը կնպաստի գիտատեխնիկական առաջընթացի և սոցիալական հեռանկարա-

յին ծրագրերի մշակմանը: Նման քաղաքականության և ինովացիոն գործունեության իրականացումը մեծապես կարող է ապահովված լինել արդյունավետ սոցիալական համակարգի առկայության և ՀՀ կառավարության աջակցության դեպքում, քանի որ ՀՀ-ում կան այդ գործընթացը կարգավորելու համար անհրաժեշտ նախադրյալներ: Ցանկացած երկրի կայունության համար անհրաժեշտ են սոցիալական երաշխիքներ, այսինքն՝ սոցիալ-տնտեսական և իրավական միջոցներ, որոնք ապահովում են հասարակության անդամների, սոցիալական խմբերի կենսագործունեության պայմանները, նրանց հետաքրքրությունների, զանազան կապերի և հարաբերությունների իրացումը, ինչպես նաև հասարակական ողջ համակարգի գործառնումը և զարգացումը: ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի զարգացումը հնարավորություն կտա սոցիալ-տնտեսական բարեփոխումների աշխուժացման գործընթացում ներգրավել սոցիալական և գիտատեխնիկական ներուժը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Անի Թորոսյան

Ավանդականորեն տնտեսագետները տարանջատում են կապիտալի երեք տեսակ՝ ֆիզիկական, մարդկային և բնական: Տնտեսագիտության մեջ կապիտալի չորրորդ տեսակ է համարվում մշակութային կապիտալը: Մշակութային կապիտալը կարելի է դիտարկել որպես օբյեկտ, որն ունի մշակութային արժեք: Տրոսբին դիտարկում է այս տերմինի տարբեր մեկնաբանումները այլ հասարակական գիտություններում (հիմնականում Բուրդեի մոտ) և համեմատում է դրանք տվյալ տերմինի տնտեսական մեկնաբանման հետ [1]:

Տնտեսագիտական հետազոտությունները մշակութային կապիտալի դերի հետ կապված դեռևս քիչ են:

Երկար ժամանակ մարդկային կապիտալը և հատկապես մարդու կրթական մակարդակը համարվել է տնտեսական աճի վրա ազդող գերիշխող գործոն: Մենք ենթադրում ենք, որ մշակութային և մարդկային կապիտալները կարող են դիտարկվել որպես զարգացման փոխլրացնող (լրացուցիչ) գործոններ: Մշակութային գործունեության դրական ազդեցությունը անձի բազմակողմանի զարգացման հարցում (մտավոր, զգայական, հոգեֆիզիկական) հաստատվում է բազմաթիվ հետազոտությունների կողմից:

Հետաքրքիր հետազոտություն է համարվում իտալացի գիտնականների աշխատանքը, որոնք ծառայությունների արտադրության և սպառման նորդասական մոդելի հիման վրա բացահայտեցին ապրանքների արտադրությունում մարդկային

և մշակութային կապիտալների օգտագործման կախում (կախվածություն): Հիմնական եզրակացությունը կայանում է նրանում, որ արվեստի և մշակույթի դերը՝ որպես կայուն տնտեսական զարգացման գործոն, հիմնականում արտահայտվում է մշակութային և մարդկային կապիտալների հարաբերակցության (դրանց փոխլրացման) վրա ազդեցության միջոցով, որը ծնում է ստեղծագործարարություն: Տնտեսական աճի խթանման հիմնական խնդիրը, հետևաբար, հանդիսանում է կապիտալի տեսակների փոխլրացման ամրապնդումը: Դրան հասնելու հնարավորություններից է հանդիսանում ոչ միայն մշակութային սպառման առաջխաղացումը (ապացուցված է, որ մշակութային կապիտալի բարիքների օգտագործման քանակական աճը չի տանում ուղղակիորեն մշակութային կապիտալի կուտակման), այլ նաև բնօրինակ բարդ փոխհարաբերությունների ուսումնասիրման շրջանակներում մտահղացման զարգացումը, որոնք հանգեցնում են տաղանդի և ունակությունների զարգացմանը:

Եթե ենթադրենք, որ մշակութային կապիտալը ազդում է տնտեսական աճի վրա, ապա գլխավոր հարցը կայանում է նրանում, թե ինչպես չափել մշակութային կապիտալը: Նույնիսկ եվրոպական երկրներում մշակութային հատվածի վիճակագրությունը չունի ընդհանուր հիմք միջպետական համեմատության համար, չնայած որ մշակութային բարիքների արտադրման և օգտագործման առավել մանրամասն տեղեկության պահանջը ակնհայտ է: Քանակապես չափել մշակութային կապիտալը կարելի է մշակութային բարիքների անհատական ծախսերի ճանապարհով: Վերլուծության արդյունքում բացահայտված է, որ առավել զարգացած տնտեսություն ունեցող

երկրների բնակչությունը իսկապես առավել շատ է ծախսեր կատարում մշակույթի և հանգստի համար [2]:

Ժամանակակից գրականության վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել տնտեսական աճի վրա ազդող մշակութային և մարդկային կապիտալների հիմնական ուղիները՝

- արվեստի և կրթության մարդիկ հեշտությամբ են հարմարվում փոփոխություններին, ընկալում են նոր գաղափարները և տեխնոլոգիաները (մարդկային կապիտալի թարմացում),
- արվեստի և կրթության մարդիկ հակված են ձեռներեցության և ռիսկի (ըստ Շումպետերի ձեռնարկատիրական մտածելակերպի),
- արվեստի մարդիկ ցույց են տալիս աշխատուժի բարձր արտադրողականություն,
- արվեստի և կրթության մարդիկ ունենում են բարձր եկամուտներ և ակտիվ մասնակցում են քաղաքային կյանքին (ծախսում են եկամուտների մեծ մասը քաղաքային միջավայրի զարգացման, այդ թվում մշակույթի և ժամանցի համար) բարելավելով կենսատարածքի որակը,
- մարդիկ օգտագործում են իրենց մարդկային կապիտալը այնտեղ, որտեղ բարձր է մարդկային կապիտալի բարձր մակարդակ ունեցող մարդկանց (մարդկային կապիտալի արտաքին արդյունք) համակենտրոնացումը,
- մարդկանց միջև հավասարաչափ կապիտալի մակարդակը, կախված իր իրական օգտագործումից, ունի տարբեր դրսևորումներ, մարդկային կապիտա-

լի ակտիվ օգտագործումը ավելի արտադրողական է, քան պասիվ օգտագործումը (օրինակ՝ բարձրագույն կրթություն ստանալուց հետո մարդիկ կարող են հետագայում չաշխատել, հետևապես չօգտագործել իրենց կապիտալը, կամ աշխատել պակաս որակավորում պահանջող պաշտոնում, փաստորեն չօգտագործել իրենց ունակությունները),

- անհատական մարդկային կապիտալը (կրթության մակարդակը) կարող է աճել արվեստի ոլորտի աշտողների մոտ:

Հարցն այն է, թե ինչն է հանդիսանում մարդկային կապիտալի ստեղծագործական և գեղարվեստական հիմնական աղբյուրը: Ենթադրության հիմք կա, որ հիմնական ստեղծագործական աղբյուր է հանդիսանում մշակութային կապիտալի սերտ համագործակցությունը մարդկային կապիտալի հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Բուչչի, Գ. Սեգրե, Մարդկային և մշակութային կապիտալների փոխլրացումները և ազդեցությունը տնտեսական աճի վրա (07 փետրվար 2009թ.- http://www.economia.unimi.it/index.php/Home/2/0/?&L=1)
2. Դ. Տրոսբի, Մշակութային կապիտալ /Մշակութային տնտեսագիտության ամսագիր, 1999 թ., 23.
3. Դ. Տրոսբի, Տնտեսագիտություն և մշակույթ, Քեմբրիջ, 2001թ.
4. Յ.Ու. Ֆոխտ-Բաբուշկին, Արվեստը մարդկանց կյանքում, Ալետելիա, 2001թ.

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Աննա Հայրապետյան
Տնտեսագիտության թեկնածու

Ներկայումս համայնքային զարգացման ծրագրերը մշակվում են 4 տարվա կտրվածքով և հիմնականում կրում են ձևական բնույթ, քանի որ կազմվում են ընտրությունից ընտրություն: Փոքր աշխատակազմ և մասնագիտական ոչ բավարար կարողություններ ունեցող համայնքներում այդ ծրագրերը վերանայման չեն էլ ենթարկվում:

Տեղական ինքնակառավարման մակարդակում կազմվող զարգացման ծրագրերը չունեն ռազմավարական բնույթ: Հիմնախնդիրները կարելի է բաժանել 2 խմբի:

<u>Առաջին հիմնախնդիրը</u> կապված է ծրագրերի ժամկետների հետ: ՀՀ տեղական ինքնակառավարման մակարդակում երկարաժամկետ (5տ. և ավելի) ռազմավարական ծրագրերի կազմման և ծրագրանպատակային զարգացման համար խոչընդոտ են հանդիսանում՝

- երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորման առկա խնդիրները,
- համայնքի կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական ռեսուրսների կանխատեսման և երկարաժամկետ պլանավորման ու ռազմավարական որոշումների կայացման համար անհրաժեշտ մասնագիտական ոչ բավարար մակարդակը,

- համայնքային նշանակության խնդիրների կարգավորման հարցում տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների) ընդլայնված ազդեցությունը: Սրա պատճառներից մեկն էլ հենց ՏԻՄ-երի մասնագիտական հմտությունների պակասն է, որը մեթոդական աջակցության ոլորտում տարածքային կառավարման մարմինների ազդեցության ընդլայնման տեղիք է տալիս:

Երկրորդ հիմնախնդիրը կապված է ծրագրերի բովանդակության հետ: Նախընտրական ծրագրերի դրույթներով կազմված քառամյա զարգացման ծրագրերում կարող են նախանշված լինել ուղղություններ, որոնք ոչ միայն հիմնավորված չեն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի և ֆինանսական ռեսուրսների ամփոփ վերլուծության գնահատականներով ու կանխատեսումներով, այլև անիրագործելի են: Ընթացքում է պարզվում, որ ծրագիրն այնքան էլ հաջող չէ՝ համայնքի առջև ծառացած հիմնախնդիրների հաղթահարման տեսանկյունից:

Հետևաբար, զարգացման ծրագրերը (լինեն քառամյա թե ավելի երկարաժամետ) պետք է հանդիսանան ծրագրային բյուջետավարման հիմքը, քանի որ ծրագրային նպատակների իրագործումը և համապատասխան աշխատանքների կատարումն ու արդյունքների ստացումն այս դեպքում դառնում են բյուջետային քաղաքականության հիմնական կողմնորոշիչներ: Սա համարվում է բյուջետավարման նորագույն եղանակ, որը ներդրվել է մեծ թվով երկրներում:

Համաձայն տեղական բյուջեների ռազմավարական պլանավորման միջազգային պրակտիկայի՝ այն պետք է կազմակերպվի բոլոր հնարավոր փոփոխությունների և միտումների հեռանկարային կանխատեսումների, համայնքի սոցիալ-

տնտեսական իրավիճակի՝ մի քանի տարվա կտրվածքով կատարված համալիր հետազոտության, հանրության պահանջների և հիմնախնդիրների դինամիկայի ուսումնասիրության և համայնքի ֆինանսական ռեսուրսների գնահատման հիման վրա:

Ծրագրային բյուջետավարումը թույլ է տալիս՝

ա) մեկ միասնության մեջ դիտարկել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր ուղղությունները, հիմնախնդիրները և նպատակները,

բ) բացահայտել համայնքի զարգացումը պայմանավորող կամ խոչընդոտող գործոնները,

գ) կանխատեսել ՏԻՄ-երի գործունեության առաջնային ուղղությունները և պահանջվող ֆինանսական ներդրումները,

դ) կանխել միջոցների ծախսումը ոչ առաջնային կամ ցածր արդյունավետություն ունեցող միջոցառումների վրա (այսինքն՝ դրամական միջոցների փոշիացումը),

ե) վերլուծել և գնահատել նախորդ տարիների ծրագրային առաջադրանքների կատարման արդյունավետությունը:

Ծրագրային բյուջետավարումն իրականացվում է ՆՊԱՏԱԿ → ՈՐՈՇՈՒՄ → ԾՐԱԳԻՐ → ՌԵՍՈՒՐՍՆԵՐ → ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ → ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ հաջորդականությամբ:

Ծրագրային բյուջետավարումը մեծ ջանքեր, մասնագիտական հմտություններ պահանջող գործընթաց է, որը դեռևս նորություն է համայնքային կառավարման ոլորտում: Ծրագրանպատակային բյուջետավարման սխեման, մեր առաջարկմամբ, ընդգրկելու է արդյունավետ կառավարման բոլոր հնարավոր ուղիները՝ սկսած եկամուտների աճի ռեզերվների հայտնաբերումից, վերջացրած արդյունքների գնահատմամբ և հետադարձ կապի ապահովմամբ: Այս գործընթացում կարևոր

տեղ է հատկացվում SWOT վերլուծությանը: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների (SWOT) վերլուծությունը՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատումը ռազմավարական պլանավորման գործընթացի այն կարևոր փուլն է, որը թույլ է տալիս՝

- պատկերացում կազմել համայնքի տեղի, դիրքի, ռեսուրսային և հաղորդակցության հնարավորությունների մասին,
- գնահատել բոլոր ոլորտներում տիրող իրավիճակը,
- բացահայտել համայնքի ֆինանսատնտեսական ներուժը,
- քայլեր ձեռնարկել համայնքի զարգացման հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ,
- սահմանել համայնքի զարգացման և ֆինանսական ռեսուրսների ծախսման առաջնային ուղղությունները,
- մշակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրեր,
- գնահատել կատարված աշխատանքների որակն ու արդյունավետությունը և այլն:

SWOT-վերլուծությունը պահանջում է հսկայական աշխատանք՝ համայնքի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման և դրա համալրման ուղղությամբ:

Այսպիսով, ծրագրային բյուջետավարման մեթոդաբանության առավելություններն են՝

1. կառավարման արդյունավետության, կառավարչական որոշումների որակի և օբյեկտիվության բարձրացում,

2. սահմանափակ ռեսուրսների ծախսման արդյունավետության բարձրացում,

3. գումարների բաշխման հասցեականության ապահովում,

4. պահի թելադրանքով սուբյեկտիվ որոշումների կայացման բացառում,

5. գործառույթների փուլային կատարման և վերահսկելիության մեխանիզմների ստեղծում:

Ծրագրային բյուջետավարման արդյունավետության ուղղությամբ մեր կողմից առաջարկվող քայլերն են՝

- ռազմավարական պլանավորման գծով մասնագետների պրակտիկ ունակությունների զարգացում և խուսափում անհարկի վարչական ծախսերից,
- հետազոտությունների և տվյալների բազաների ստեղծման աշխատանքների համակարգված կազմակերպում,
- մասնագետների և տեխնիկական միջոցների օպտիմալ ծավալների ապահովում,
- խուսափում կամայականություններից և համայնքի ղեկավար-ավագանի ուժերի միջև կառուցողական երկխոսության հաստատում,
- օպերատիվ արձագանքում այն բողոքներին և դժգոհություններին, որոնք բացառապես վերաբերում են ծրագրային արդյունքներից էական շեղումներին, քանի որ, ի վերջո, ծրագրային բյուջետավարման գործընթացի կայացման և համայնքի զարգացման նախադրյալներից մեկն էլ տեղական ժողովրդավարության հաստատումն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թումանյան Դ., Մովսիսյան Վ., «Տեղական ինքնակառավարման համակարգում ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման ձեռնարկ», Երևան, 2006
2. Заусаев В., Воронцова Л., Быстрицкий С., Анисимов А., Стратегическое развитие муниципальных образований: Методология и практика планирования, Дальневосточный научно-исследовательский институт рынка, Москва, 2007
3. Лавров А., Эффективность бюджетных расходов /Региональные Финансы/, Выпуск 5, Москва, 2003, 4. Steinberg F., Strategic Urban Planning in Latin America: Experiences of Building and Managing the Future, IHS Rotterdam, November 2002
5. www.mfe.am

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԸ ՈՐՊԵՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ ԵՎ ԴՐԱ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Անուշ Հակոբյան

Տարիներ առաջ Հայաստանում դժվար էր ընկալվում էլեկտրոնային առևտուր հասկացությունը և համակարգիչների ու համացանցի օգնությամբ շահութաբեր բիզնես ստեղծելու հավանականությունը:

Պաշտոնական տվյալներով 2011 թ. երրորդ եռամսյակում Հայաստանում իրականացվել է 800 մլն դրամի էլեկտրոնային առևտուր: 2010թ. երրորդ եռամսյակում իրականացված էլեկտրոնային առևտրի ծավալը կազմել էր 500 մլն դրամ, 2009թ.՝ 400 մլն դրամ[1]:

Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը նպաստել են մի քանի գործոններ, մասնավորապես՝ համացանց օգտագործողների թվի ավելացումը: Եթե 2008թ. բաժանորդների թիվը մոտ 80 հազար էր, ապա արդեն 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ 385 հազար է[2]: Նշենք նաև, որ Հայաստանը բնակչության քանակի և համացանցի հասանելիության համամասնությամբ զբաղեցնում է առաջին հորիզոնականը ԱՊՀ-ում[3]:

Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացումը, ինչպես նաև համացանցից օգտվողների թվաքանակի աճը, բացի դրական հետևանքներից, ստեղծում է նաև ռիսկեր:

---

[1] www.cba.am – Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ

[2] ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011թ. գործունեության հաշվետվություն

[3] *www.internetworldstats.com*-«InternetWorldStats» միջազգային կազմակերպություն

Համացանցում հայտնվել է օգտվողների մեծ բանակ, որը համացանցային կրթության պակաս ունի և որպես կանոն համացանցային հանցագործների զոհ են դառնում հենց նրանք:

Բացի այդ, Հայաստանն այն երկրներից է, ուր ամենաշատն են օգտագործում ապօրինի, արտոնագիր չունեցող ծրագրեր (ծրագրերի մոտ 90%-ը ապօրինի են), չեն թարմացվում կամ չունեն արտոնագրված հակավիրուսային ծրագրեր, հստակ պատկերացում չեն կազմում անվտանգության լծակների մասին: Իսկ դա նշանակում է, որ նման համակարգիչները խոցելի են համացանցային հարձակումների համար:

Դրա հետևանքով Հայաստանը հակավիրուսային լաբորատորիաների կողմից դիտարկվում է որպես ամենավտանգավոր երկրներից մեկը: Այսպես, Kaspersky Lab-ի տվյալներով, Հայաստանն աշխարհում, Ռուսաստանից և Օմանից հետո, երրորդ երկիրն է, որտեղ օգտվողների համակարգիչների վրա ամենաշատ հարձակումներն են գրանցվում[4]:

Հաշվի առնելով, որ Հայաստանում արդեն իսկ սկսվել է էլեկտրոնային առևտրի ժամանակաշրջանը, հնարավոր վտանգներն առաջիկայում միայն կավելանան:

Այսպիսով, Հայաստանը թիրախ է դառնում համացանցային հանցագործների համար: Եվ քանի որ հասարակության ակտիվ զանգվածի մեծ մասն համացանցի օգտատեր է՝ մենք հայտնվում ենք լուրջ մարտահրավերի առջև, որի հաղթահարման առաջին քայլը պետք է լինի համացանցից օգտվելու վերաբերյալ կրթության մատչելիությունն ու ընդլայնումը:

Կարելի է առանձնացնել էլեկտրոնային առևտուր կատարելիս անվտանգության որոշ կանոններ, որոնց պահպանելու

[4] http://report.gov.am -ՀՀ կառավարություն

դեպքում հնարավոր է զգալի չափով խուսափել համացանցային խաբեբայություններից.

1. Խորհուրդ չի տրվում օգտագործել անձնական տվյալները (PIN-կոդ, գաղտնաբառ, վարկային գծի սահմանաչափ, վճարային քարտի գործողության ժամկետ և այլն) համացանցով առևտուր կատարելիս:

2. Համացանցով գործարքներ կատարելիս օգտվել միայն հայտնի առևտրի կենտրոնների կամ ընկերությունների կայքերից:

3. Համոզվել, որ ինտերնետային կայքի հասցեն ճշգրիտ է, քանզի նմանատիպ հասցեներով և տեսքով կայքերը շատ հաճախ օգտագործվում են անօրինական գործարքներ կատարելու նպատակով:

4. Անձնական տվյալների գաղտնիության պահպանման նպատակով խորհուրդ է տրվում համացանցով գործարքներ կատարելիս օգտվել միայն սեփական համակարգչից:

5. Անձնական համակարգչի վրա տեղադրել լիցենզավորված հակավիրուսային ծրագիր և պարբերաբար թարմացնել այն. վերջինս թույլ կտա կանխել վնասատու ծրագրերի մուտքը համակարգիչ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Անուշ Պետրոսյան

ՀՀ-ում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն է, ինչպես նաև տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող դրույթները:

Օտարերկրյա ներդրումները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը: Օրենքի համաձայն, օտարերկրյա ներդրող է հանդիսանում օտարերկրյա պետությունը, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտական բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի կառավարությունը ներդրումային քաղաքականությունը դիտարկում է որպես իր տնտեսական զարգացման ուղու կարևորագույն ուղղություններից մեկը:[1]

Կառավարությունը խիստ կարևորում է մասնավոր ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավումը, որը կխթանի արդյունաբերության, ինչ-

[1] http://mineconomy.am/arm/34/gortsaruyt.html

պես նաև տնտեսության այլ ոլորտների զարգացումը: «Օտարերկրյա ուղղակի ներդրումները դրանց այնպիսի տեսակ են, որի դեպքում որևէ երկրի ռեզիդենտ ներդրողն իր ակտիվները տեղաբաշխում է այլ երկրում այդ ակտիվների նկատմամբ վերահսկողության ստացման կամ պահպանման պայմանով»:[2]

Արտահանողների համար գոյություն ունեն նաև այլ շարժառիթներ: Օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության կողմից իր կանոնադրական հիմնադրամի համալրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների ներմուծումն ազատվում է մաքսատուրքերի վճարումից:

Օտարերկրյա սեփականության տեսակի, ծավալի, աշխատողների և ֆինանսական աղբյուրների մուտքի սահմանափակում չկա: Չնայած օտարերկրացիները կարող են վարձակալել հողը, օտարերկրացու կողմից գրանցված ընկերությունը, որպես հայ գործարար, իրավաբանական անձ իրավունք ունի գնել հողը: Օտարերկրյա ներդրողներին վերարտադրվող և չվերարտադրվող բնական ռեսուրսների շահագործման իրավունքի վերապահումն իրականացվում է կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք օտարերկրյա ներդրողների հետ կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից՝ կոնցեսիաների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:[3]

Հայաստանում իրականացվող ներդրումների աճի ապահովումը կլուծի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք

---

[2] Report of the Committee on Trade-related investment measures. 2003. WTO. www.wto.org/english/tratop/

[3] http://www.ada.am/arm/for-investors/why-armenia/

են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ նոու-հաուների ներգրավումը (ընդհանուր և ֆինանսական կառավարում, շուկայավարում, նոր տեխնոլոգիաներ, հմտություններ և այլն), նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

Օտարերկրյա ներդրողները կարող են ներդրումներ իրականացնել Հայաստանում օտարերկրյա սեփականությամբ ընկերությունների հիմնադրման միջոցով (այդ թվում ներկայացուցչություններ, հաստատություններ և ճյուղեր), առկա ընկերությունների գնումով, կամ համատեղ ձեռնարկությունների հիմնադրմամբ: Ընկերություն գրանցելու ընթացքը տևում է մեկ շաբաթ: Հայաստանում ներդրումներ կատարելու առավելություններն են՝

- Ներդրումները կարգավորող գրավիչ օրենսդրություն
- Ներդրումային երաշխիքներ
- Կառավարության հանձնառություն՝ ուղղված ՕՈՒՆ-ի ներգրավմանը
- Արագ աճող տնտեսություն
- Դյուրին մուտք ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ
- Լավ կրթված, հմուտ և դյուրին վերապատրաստվող աշխատուժ
- Ոչ մի սահմանափակում անձնակազմի ընտրության հարցում
- Կորպորատիվ հարկային արտոնություններ այն օտարերկրյա ընկերություններին, որոնց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրումների ծավալը կազմում է առնվազն 500 մլն դրամ

- Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ընկերությունների համար եկամտահարկի արտոնություններ
- Օտարերկրացիների կողմից 100%-ով սեփականության տիրապետման թույլտվություն
- Դրամական փոխանցումների սահմանափակումների բացակայություն
- Կայուն բանկային համակարգ և ազգային արժույթ
- Էներգակիրների մրցունակ արժեք
- Մեծ սփյուռք
- Անդամակցություն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը
- Առևտրի ազատական ռեժիմ, ներմուծման նկատմամբ քանակական սահմանափակումների և լիցենզիաների բացակայություն
- Արտահանման տուրքերի բացակայություն և արտահանված ապրանքների և ծառայությունների համար ԱԱՀ-ի վերադարձ
- Արտարժույթի ազատ փոխանակում
- Շահույթի ազատ հայրենադարձում
- Քաղաքական և տնտեսական կայունություն
- Հավելյալ ծախսերի առավել ցածր մակարդակ
- Համապատասխան գույքի ապահովում
- Օդային, երկաթուղային բարձրորակ միջոցների առկայություն

Այսպիսով՝ ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ և կարևոր պայման է հանդիսանում՝ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու կառավարության որդեգրած քաղաքականության անընդհատ բարելավումը:

Օգտագործված գրականություն

1. http://mineconomy.am/arm/34/gortsaruyt.html
2. Report of the Committee on Trade-related investment measures. 2003. WTO. www.wto.org/english/tratop/
3. http://www.ada.am/arm/for-investors/why-armenia/

ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐԻ ԵՎ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ԸՆՏՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Էմիլիա Տեր-Հովհաննիսյան

Ժամանակին և ճիշտ որոշումների ընդունումը յուրաքանչյուր անհատի համար շատ կարևոր խնդիր է: Ուստի որոշում կայացնելիս անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավոր միջոցները լավագույն որոշումը գտնելու համար: Որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է հստակ ձևակերպել, թե ի՞նչ է նշանակում լավագույն որոշում, ո՞ւմ համար է այն լավագույն և ի՞նչ նպատակով է ընդունվում:

Առանձնացվում են օպտիմալության միաչափանիշային և բազմաչափանիշային մեթոդներ, որոնք ստեղծված են տարաբնույթ խնդիրներում օպտիմալ և լավագույն տարբերակի փնտրման համար: Մեթոդների տարատեսակներով պայմանավորված՝ առանձնացվում են միաչափանիշային և բազմաչափանիշային խնդիրներ: Օպտիմալացման խնդիրը լուծող առաջադրանքների բարդությունը կայանում է նախագծվող օբյեկտների որոշ ելքային պարամետրերի առկայության մեջ, որոնք կարող են լինել օպտիմալության չափանիշներ, սակայն առաջադրանքում նպատակային կամ օբյեկտիվ ֆունկցիան պետք է լինի միայն մեկը: Եվ քանի որ նախագծվող ժամանակակից առաջադրանքները հիմնականում բազմաչափանիշային են, ուստի առաջանում է տեխնիկական խնդիր բազմաչափանիշային տվյալների և միաչափանիշային տվյալների միջև [2,3]:

Տարբերակում են օպտիմալության չափանիշների ընտրության մի քանի եղանակներ՝ մասնավոր չափանիշ, հավելման չափանիշ, մաքսիմալային չափանիշ: Մասնավոր չափանիշի դեպքում ելքային պարամետրերի շրջանակներում պարամետրը ընտրվում է ֆունկցիայի միջոցով, իսկ մյուս պարամետրերի աշխատանքային հնարավորությունների նախապայմանը վերաբերում է նախագծի կազմակերպմանը: Այս տարբերակը կիրառելի է այն ժամանակ, երբ իսկապես հնարավոր է լինում բոլոր պարամետրերի միջից առանձնացնել առավել կրիտիկական մեկ պարամետր: Սակայն շատ դեպքերում կարելի է հանգել մասնավոր չափանիշի բացակայությանը [1]:

Հավելման չափանիշը միավորում է ելքային բոլոր պարամետրերը մեկ ընդհանուր նպատակային ֆունկցիայում, որն իրենից ներկայացնում է մասնավոր չափանիշի գումար՝

$$F(X) = \sum_{j=1}^{m} \omega_j y_j(X) \qquad (1)$$

որտեղ ω_j-ն կշռային գործակիցն է, m-ը՝ ելքային պարամետրերի քանակը [7]:

Մաքսիմալային չափանիշը հանդիսանում է առավել նախընտրելի տարբերակ, որը որպես ելքային ֆունկցիա ընդունում է այն ելքային պարամետրը, որն առավել վատ դիրքում է կարողանում կատարել իրեն հանձնարարված առաջադրանքը: Այնուհետև նպատակային ֆունկցիան հասնում է առավելագույն չափանիշին՝

$$F(X) = \min_{j \in [1;m]} Z_j(X) \qquad (2)$$

[1;m] թվային միջակայքն իրենից ներկայացնում է ամբողջ թվերի բազմություն: Վերոնշյալ

բանաձևի մաքսիմալային չափանիշի հաշվարկային առաջադրանքը կայանում է հետևյալում՝

$$F(X) = \max_{X \in D_x} \min_{j \in [1;m]} Z_j(X) \qquad (3)$$

որտեղ D_x թույլատրելի տիրույթը որոշվում է միայն անմիջականորեն վերահսկվող x_i պարամետրերի միջոցով՝ $x_i min < x_i < x_i max$ [5]:

Ավտոմատացված նախագծման համակարգերում օպտիմալացման հիմնական մեթոդները հանդիսանում են որոնման կամ փնտրման մեթոդները: Ներկայացվող խնդրի լուծման համար ևս կիրառվում են որոնման մեթոդներ՝ օպտիմալ տարբերակի որոշման համար: Քանի որ առաջարկվող մեթոդի կիրառման ժամանակ կարող են ընտրվել և դիտարկվել այնպիսի ալգորիթմներ, որոնք խնդիրը լուծելու համար պահանջում են շատ ժամանակ և շատ հիշողություն: Ուստի անհրաժեշտություն է առաջանում դրսևորել առավելագույնս ճիշտ մոտեցում, որպեսզի գնահատվի և ընտրվի առկա այլընտրանքներից ամենանպատակահարմարը: Առաջարկվող խնդրի լուծման համար կկիրառվի պարամետրերի փուլային կամ հաջորդական փոփոխության սկզբունքը՝

$$X_{k+1} = X_k + \Delta X_k \qquad (4)$$

որտեղ պարամետրերի վերածումը ΔX_k վեկտորի հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta X_k = hg(X_k) \qquad (5)$$

X_k-ն կառավարվող վեկտորն է, h-ը՝ քայլը: Ճիշտ քայլերի և պայմանների կատարմամբ հնարավոր կլինի մոտենալ էքստրեմումին:

Այսպիսով, ներկայացվող տարբերակը հնարավորություն կընձեռի իրականացնելու նպատակային տարբերակի ընտրությունն առավել արագ և հուսալի կերպով [4,6]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. S.L.S. Jacoby, J.S. Kowalik, J.T. Pizzo, Iterative methods for optimization problems, 1972, 274 pages
2. Balakrishnan, A.V., On a new computing technique in optimal control, 1968, 149pages
3. C. B. Gupta, Optimization Techniques In Operation Research, 2008, 320 pages
4. Godfrey C. Onwubolu, B. V. Babu, New Optimization Techniques in Engineering, 2004, 712 pages
5. И.П. Норенков, Автоматизированное проектирование, 2000, 188с
6. M. Hutter. The Fastest and Shortest Algorithm for All Well-Defined Problems, 2002, 443 pages
7. Joao S. Neves, Searching for Pareto-Optimal Settlements, 2011, 98 pages

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գրիգոր Ժամակոչյան

Այսօր ժամանակակից հասարակությունը հիմնված է տեղեկատվության ստեղծման, մշակման և տարածման վրա: Արդի համաշխարհային տնտեսության մեջ, ի տարբերություն արդյունաբերական հասարակարգի, գերակշռում են այն ճյուղերը, որոնք հիմնված են մտավոր ունակությունների և մարդկային կապիտալի վրա: Այս հանգամանքներով պայմանավորված՝ մտավոր սեփականությունը և նրա իրավական պաշտպանվածությունը դարձել են արտադրության կարևորագույն գործոններից:

Մտավոր սեփականությունը ներառում է իրավունքի երկու հիմնական ոլորտներ՝ արդյունաբերական սեփականություն և հեղինակային իրավունք:

1967 թվականի հուլիսի 14-ին Ստոկհոլմում ընդունված՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնման մասին կոնվենցիան հնարավորինս ընդարձակ բովանդակում է «Մտավոր սեփականություն» հասկացությունը և նշում արդյունաբերական սեփականություն հանդիսացող կամ հեղինակային իրավունքով պաշտպանվող աշխատանքների շրջանակը *(1)*:

Ապրանքային նշանների միջազգային պաշտպանության անհրաժեշտությունը ակնհայտ դարձավ, երբ 1973 թվականին Վիեննայում տեղի ունեցած նորույթների միջազգային ցուցահանդեսին հրավիրված օտարերկրյա մասնակիցները հրա-

ժարվեցին մասնակցել միջոցառմանը: Նրանք իրենց այդ քայլը պատճառաբանեցին նորույթների կրկնօրինակման վտանգի առկայությամբ *(2)*:

ԳՏԱ-ի ներկա մակարդակի պայմաններում բազում ապրանքների և ծառայությունների տարածման հիմքը տեղեկատվությունն է: Հայաստանի Հանրապետության համար գիտատեխնիկական նորարարությունների ներդրման հիմնական հնարավորությունը միջազգային ապրանքային նշանների ներգրավումն է: Այն իր հերթին հնարավորություն է տալիս միջազգային հայտնի ապրանքանշանների միջոցով մուտք գործել միջազգային շուկա՝ ձևավորելով երկրի բրենդը միջազգային շուկայում: Դա իր հերթին նպաստում է միջազգային շուկայում տեղական ապրանքային նշանների նկատմամբ վստահության աճին:

Ապրանքային նշանների իրավական պաշտպանությունը կարևորվում է նրանով, որ այն ունի իր օգտագործումից և զարգացումից ստացվող եզակի արժեք:

Ապրանքային նշանների իրավական պաշտպանությունը կարևոր խթան է հանդիսանում նաև հայրենական ապրանքային նշանների կայացման համար, ինչը իր հերթին առաջնային նշանակություն ունի միջազգային շուկայում ապրանքների արդյունավետ ներկայացման գործում:

Ապրանքային նշանների իրավական պաշտանության բացակայության պարագայում արդյունաբերական սեփականության անօրինական տարածումը կանխելու միակ միջոցը կլինի վերջինիս գաղտնի պահելը, այստեղից կարելի է եզրակացնել, որ ապրանքային նշանների իրավական պաշտպանությունը հնարավորություն է տալիս ընդլայնել տեխնոլոգիաների

միջազգային փոխանցման գործընթացում ներգրավվածությունը:

Միջազգային համաձայնագրերի գերակշռող մասն ուղղված են արդյունաբերական սեփականության, մասնավորապես ապրանքանիշների պաշտպանությանը:

Հիմնական արդյունքները և նորույթը

- Ապրանքային նշանների իրավական պաշտպանության հնարավոր տնտեսական օգուտները գալիս են փաստելու դրա կարևորությունը զարգացող երկրների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար: Առաջին հերթին դա անհրաժեշտ է երկրում ստեղծված նոր տեխնոլոգիաները օգտագործելու, մրցակցային առավելությունները պահպանելու համար, իսկ զարգացող երկրներին՝ անհամեմատ քիչ ֆինանսական միջոցներով նոր տեխնոլոգիաները սեփական տնտեսություններում ներդնելու համար:
- Հայաստանի Հանրապետության համար տեխնոլոգիաների միջազգային փոխանցմանն ինտեգրվելու լավագույն տարբերակը միջազգային ապրանքային նշանների ներգրավումն է, որի համար կարևորագույն գործոն է մտավոր և արդյունաբերական սեփականության իրավական պաշտպանվածության բարձր աստիճանը:
- Մտավոր սեփականության պաշտպանության հիմնական խնդիրը ՀՀ-ում արդեն իսկ կեղծված կամ շփոթության աստիճանի նմանեցված ապրանքային նշաններով ապրանքների մուտքն է շուկա: Ապրանքանիշի ինստիտուտը կկայանա և կզարգանա այն պարագայում, երբ չեն խա-

թարվի դրա իրականացրած գործառույթները՝ թե՛ իրավական, թե՛ տնտեսական: Այդ պատճառով անհրաժեշտ է մտավոր սեփականության պատշաճ պահպանություն և մրցակցային տնտեսության առկայություն: Վերջինս ապրանքանիշին հնարավորություն է տալիս լիակատար իրականացնել իր հիմնական տնտեսական գործառույթներից մեկը՝ տարբերակման գործառույթը:

- ՀՀ տնտեսության համար որպես արտաքին առևտրային հաշվեկշռի բարելավման եղանակ կարող է հանդիսանալ արտադրության միջազգային կոոպերացման գործընթացներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Մտավոր սեփականության իրավունք», Բարսեղյան Տ.Կ., ԵՊՀ հրատ., 2002թ.
2. Նշանների պատկերային տարրերի միջազգային դասակարգումը հիմնադրող Վիեննայի համաձայնագիր, 1985թ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Հասմիկ

Տնտեսագիտական և մանկավարժական գրականության մեջ կրթության դերի ու նշանակության գնահատման հետ միասին, կրթության հասկացության մասին տրվում են տարբեր ձևակերպումներ: Այդ ձևակերպումների շրջանակներում մեր կողմից ավելի գիտական է համարվել այն սահմանումը, ըստ որի կրթությունը դիտարկվում է մի այնպիսի գործընթաց, որը մարդուն տալիս է գիտելիքներ, հմտություններ և դրանք ստեղծագործաբար զարգացնելու կարողություն, որով գնալով ընդլայնվում են աշխատանքային ռեսուրսների և մասնավորապես մասնագետ կադրերի տեսական, գործնական, որակական ունակությունները:

Այս տեսակետից ուսումնական գործընթացը տնտեսագետ գիտնականների կողմից դիտարկվում է որպես երիտասարդությանը, ուսանողին տրվող երեք տիպի ծառայության մատուցում՝ գիտելիք, կարողություն և հմտություն: Դա անշուշտ հնարավորություն է տալիս գիտականորեն սահմանել կրթության նպատակները և հիմնական խնդիրները՝ կախված կրթության առանձին մակարդակներից[1]:

Բարձրագույն կրթության գործունեության տնտեսական կողմը ուսումնասիրություններում դիտարկվում է որպես հասարակական վերարտադրության կարևոր բաղկացուցիչ:

---

[1] Сборник статей «Актуальные экономические проблемы российской высшей школы» под ред. Е. Н. Жильцова, С. И. Голоуховой, В. П. Панкратовой, М. ТЕИС, 2005, И. Г. Тепешова, «Направления совершенствования системы образования», стр. 67.

Դրանով հանդերձ հիմք է դրվում տնտեսագիտության նոր ուղղության, որը և համարվում է կրթության տնտեսագիտություն: Այս ամենով հանդերձ կրթության տնտեսագիտությունն առանձնահատուկ նշանակություն ունի անհատի գիտելիքների, նրա հմտությունների և ստեղծագործաբար գործելու հնարավորությունների շրջանակների ընդլայնման համար անհրաժեշտ գիտական դրույթների մշակման գործում, որը կարող է իրականացվել կրթության միջոցով, որը միաժամանակ դիտարկվում է որպես այդ ոլորտի գործունեության հետևանք և ձեռք է բերվում ինչպես մարդու, անհատի ուսուցման գործընթացում, այնպես էլ նրա ինքնակրթության միջոցով:

Կրթության տնտեսագիտության կարևոր խնդիրներից է նաև կրթության և արտադրության միջև փոխկապվածության հիմնավորումը, որով գնահատվում ու կարևորվում է կրթության դերը արտադրության զարգացման գործում:

Այս առումով կրթության տնտեսագիտությունը որպես գիտություն միաժամանակ ուսումնասիրում է այն արտադրական, տնտեսական և աշխատանքային հարաբերությունները, որոնք կապված են արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման հարաբերությունների հետ: Ինչպես նկատում ենք, կրթության տնտեսագիտությունը, որպես ինքնուրույն գիտություն, հետազոտում է կրթության ոլորտում նյութական և դրամական ռեսուրսների շարժը, որով ապահովում է որակյալ աշխատուժի վերարտադրությունը կրթության համակարգի միջոցով:

Անշուշտ, կրթության տնտեսագիտության կարևոր խնդիրն է հիմնավորել աշխատուժի վերարտադրության ապահովման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցող այնպիսի կարևոր հիմնախնդիրներ, ինչպիսին է աշխատանքի

վարձատրության ապահովման կազմակերպման հետազոտությունը կրթության համակարգում, որը դրսևորում է որոշակի առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ինչպես մյուս ոլորտներում, անպես էլ կրթության ոլորտում աշխատանքը իրենից ներկայացնում է տնտեսության մասշտաբով մասնագետ կադրերի պատրաստման նկատմամբ պլանաչափ սկզբունքով մանկավարժական գործունեությանն ուղղված կրթական ծառայությունների մատուցում՝ մատաղ սերնդի դաստիարակություն և ուսուցման կազմակերպում հանրակրթական դպրոցներում, մասնագետ կադրերի պատրաստում միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Անշուշտ, այսօր ցանկացած երկրում պետությունը մանկավարժական կադրերի մեծ պահանջարկ ունի, քանի որ նրանցով է պայմանավորված միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ մասնագետ կադրերի պատրաստման գործընթացի արդյունավետությունը[2]:

[2] Захарчук Л.А. «Экономика образования», 2011, стр 74

‘LA STRATEGIE DES MULINATIONALES: DU LOCAL AU GLOBAL

Hovhannes Yeritsyan

«Etre ou ne pas être multinational» est une vision simpliste du phénomène de mondialisation de la production des grandes firmes. La multinationalisation de l’entreprise s’intègre dans une dynamique comprenant plusieurs stades, engendrant eux-mêmes une intensité de la multinationalisation de plus en plus forte. Cette progression peut s’observer à travers l’évolution de l’organisation nationale et internationale de la firme. L’entreprise est une structure complexe multi-fonctionelle et multi-produits. Lors de sa multinationalisation, c’est cette structure complexe qui évolue et se déforme.

Selon Raymond Vernon la stratégie mondiale des firmes est à mettre en parallèle avec le cycle de vie des produits qu’elles proposent [1, 199-201].

- Dans un premier temps, le produit tout juste conçu doit être testé: le marché national est alors le plus indiqué. Ce dernier doit suffire à tirer profit d’une nouveauté du fait de l’absence de concurrents. De plus le prix élevé de ce produit inédit correspond justement au niveau de vie du marché national (on considère que les entreprises innovantes sont celles des pays riches).
- Arrivant à un stade de maturité, l’entreprise sur le point de perdre l’exclusivité sur le produit est incitée à le vendre sur les marchés étrangers avant l’arrivée de ses futurs concurrents. Le produit, s’il connaît un

important succès est produit en des quantités plus importantes ce qui provoque une baisse de son prix. Il devient donc accessible aux consommateurs de pays moins aisés.

- Lorsque le produit atteint un stade de standardisation et se banalise, l'entreprise se doit d'en délocaliser la production dans les pays à bas salaires pour le réexporter par la suite dans les pays riches. Elle peut éventuellement aussi en délocaliser la production dans d'autres pays riches qui profiteraient d'avantages technologiques, le tout étant de réduire le plus possible les coûts de production dans un contexte de concurrence sur les prix.

Plus tard, Raymond Vernon rajoutera que les entreprises produisant un même produit voient leur part du marché domestique se stabiliser et sont réduites à en grignoter des parts insignifiantes. Elles se doivent donc de conquérir les marchés étrangers afin de poursuivre leur croissance, l'acquisition et l'implantation de filiales (de production ou de distribution locale) implantées sur le marché visé permettent d'accroître l'efficacité de cette nouvelle stratégie.

Le concept de cycle de vie a émergé dans un contexte où la localisation à l'international des activités des entreprises était un processus beaucoup plus lent qu'aujourd'hui et les avantages technologiques associés à certains pays ou zones géographiques plus durables. Néanmoins, ce cadre théorique reste d'actualité dans la mesure où il permet de comprendre l'évolution des choix de localisation effectués dans les secteurs manufacturiers tels que le textilehabillement, l'électronique et l'automobile.

Il est aussi intéressant de présenter les différents modes d'entrée de l'entreprise sur les marchés internationaux [2, 86]. Donc la figure suivante conclue dans une manière brève ces modes.



Modalités d'exploitation d'un marché étranger

Il faut aussi analyser une tendance assez répandue: beaucoup de multintionales préfèrent poursuivre la stratégie des alliances dont un bon exemple peut se servir le cas de l'alliance entre les sociétés British Petroleum (BP), Mobil (la Standard Oil of New York) et THK (Тюменская Нефтяная Компания) [3, 195]. Cette stratégie a permis à chacune d'accéder facilement des marchés où elles étaient pas présentes. Alors, grâce à cette alliance BP a eu la possibilité d'entrer sur le marchés russe et ceux de la CEI. Outre cela, cette stratégie avait pour but la

réduction des coûts de fabrication et de transport. Les alliances BP-Mobil et BP-THK ont permis de bénéficier des effets d'échelle réduisant ainsi considérablement les coûts. Il est à noter que ces alliances contribuent non seulement à la distribution des chaînes de valeurs, mais son principal avantage réside dans les «manœuvres de marketing», qui vont permettre d'avoir accès à des plus marchés importants.

Ainsi quoi que soit la stratégie d'une multinatonale, sa structure et les modes de stratégie, chaque stratégie vise un seul but: augmentation des bénéfits, renforcement des positions sur le marché et possession des avantages concurentiels.

Bibliographie

1. International Investment and International Trade in the Product Cycle, Quarterly Journal of Economics, USA, 1966, Harvard Graduate School Of Business Administration
2. Jean-Louis Mucchielli, Multinationales et mondialisation, France, 1998
3. Приоритеты Разработки Стратегии Развития Транснационалных Корпораций В Современной Экономике, И.М. Колпашников, Россия, 2009

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Կարինե Սարգսյան

Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումն ու լայն կիրառումը վերջին տասնամյակների զարգացման գլոբալ միտումներից է: Տեղեկատվության հավաքման, մշակման և փոխանցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը գնալով դառնում է թե պետական և թե մասնավոր հատվածներում տնտեսության մրցունակության և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման կարևոր գործոն:

Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառման կարևորագույն ոլորտներից է պետական կառավարման համակարգը: Մեծ քայլերով առաջ շարժվող աշխարհում ժամանակի թելադրանքն է ունենալ պետական ավտոմատացված կառավարման համակարգ, այսինքն՝ վիրտուալ կառավարում: Այլ կերպ ասած, դա պետական կառավարման համակարգում պետության կողմից մատուցվող ծառայություններում ՏՏ համակողմանի կիրառումն է, որի արդյունքը էլեկտրոնային կառավարման համակարգի (էլեկտրոնային կառավարության) ստեղծումն է:

Էլեկտրոնային կառավարումը կառավարման գործընթացը դարձնում է թափանցիկ և վերահսկելի քաղաքացիների կողմից, քանի որ քաղաքացիների համար հնարավորություն է ստեղծվում մասնակցելու կառավարման գործընթացին: Հատկանշական է, որ անցումը էլ. կառավարման համակարգին ենթադրում է, որ պետական ծառայությունները կմատուցվեն ին-

տերնետի միջոցով, որը, իհարկե, կնվազեցնի պետական ծառայողի և քաղաքացու շփումը, հետևապես նաև կոռուպցիոն ռիսկերը:

Լայն իմաստով վիրտուալ կառավարությունը պետական կառավարման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով սեփական արժեքների ստեղծման գործընթաց է:[14] Ընդ որում՝ հասարակական արժեքի ստեղծման պոտենցիալը ի հաշիվ էլեկտրոնային կառավարության կախված է նրանից, թե ինչքանով են համապատասխան ծրագրերն ու դրանց արդյունքները արտացոլում հասարակության պահանջներն ու նախասիրությունները:

Պետք է նշել, որ պետական կառավարման գործառույթների համակարգչայնացմանը պետք է նախորդի կառավարության և իշխանության այլ մարմինների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետների պահանջարկի վերլուծությունը: Դրանից հետո անհրաժեշտ է մշակել և կազմակերպել կադրերի վերապատրաստման և որակավորման անընդհատ բարձրացման կուրսեր: Արդիական է նաև կրթական ստանդարտների մշակումը պետկառավարման համակարգչայնացման մասնագետների պատրաստման համար[15]:

Պետական կառավարման տեղեկատվայնացման հնարավոր արդյունքներն ու հետևանքները բնորոշելիս վիրտուալ կառավարության առաջին նախագծերի մշակողները հենվել են հիմնականում մասնավոր հատվածի փորձի վրա: Ներքին և արտաքին փոխազդեցությունների էլեկտրոնային մեթոդների

---

[14] World public sector report 2003: e-Government at the Crossroads. Department of Economic and social affairs. United Nations, 2003 (էլեկտրոնային ռեսուրս). – հասանելի է http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/un/unpan 012733.pdf հաստատված

[15] Ваганян Г., Ваганян О. Виртуальные технологии менеджмента (системо-техника электронного управления), Ереван, “Нжар”, 2005, стр. 136

զարգացման առավելությունների մեջ առանձնացվում են հիմնականում ծախսերի կրճատումը, քաղաքացիների սպասարկման որակի բարձրացումը, կառավարության հասանելիության և հաշվետվողականության մեծացումը և այլն: Սակայն այս ծրագրերի իրագործումները ոչ միշտ են միանշանակ ընկալվում որպես ծախսերը նվազեցնող, քանի որ դրանք ուղեկցվում են բավականին ծավալուն ներդրումներով, որոնց վերադարձման ժամկետները բավականին երկար են:

Հենց սա էլ ստիպում է, որ մշտապես վերլուծությունների կիզակետում հայտնվի էլեկտրոնային կառավարության ներդրման արդյունավետության հարցը:

Սակայն պետք է նշել, որ էլեկտրոնային կառավարման ներդրումից հնարավոր օգուտների ստացումն առաջին հերթին կախված է երկրի սկզբնական վիճակից: Էլեկտրոնային կառավարության զարգացման արդյունքում ստացվող հնարավոր օգուտներն ու դրանց բաշխումը բերված են աղյուսակ 1-ում:

Յուրաքանչյուր պետությունում էլեկտրոնային կառավարության զարգացման նախադրյալները անհրաժեշտ է համադրել սկզբնական վիճակի հետ, որոնք ոչ միայն գնահատում են պետական ծառայության առանձին տեսակների առցանց ռեժիմի փոխանցումը, այլ նաև պայմանավորում են կոնկրետ յուրաքանչյուր երկրի համար առանձնահատուկ ծառայությունների զարգացումը էլեկտրոնային կառավարության շրջանակներում:

Աղյուսակ 1

Էլեկտրոնային կառավարության զարգացման արդյունքում ստացվող հնարավոր օգուտներն ու դրանց բաշխումը

Օգուտներ ստացողներ	**Օգուտներ և դրանց բաշխում**
Պետական կառավարման մարմիններ	• Ներքին (միջգերատեսչական) և արտաքին (քաղաքացիների ու կազմակերպությունների հետ) տեղեկատվական փոխանակության ծախսերի կրճատում • Պետական կառավարման մարմիններում օպերացիոն և կառավարչական գործընթացների օպտիմալացում • Օգտագործվող ռեսուրսների արդյունավետության բարձրացում • Կառավարության ինտեգրում • Կառավարչական կառույցների ճկունության մեծացում
Քաղաքացիներ	• Կառավարության հասանելիության մեծացում, տեղեկատվության շուրջօրյա հասանելիություն • Պետական ծառայությունների որակի բարելավում • Պետական կառավարման մարմինների հետ հարաբերություններում ժամանակային և ֆինանսական ծախսերի խնայում • Քաղաքացիների ներգրավում կառավարման գործընթացում
Բիզնես կառույցներ	• Բիզնեսի զարգացման տեղեկատվական աջակցություն • Կառավարչական խոչընդոտների նվազեցում • Պետական կառավարման մարմինների հետ փոխհարաբերությունների ծախսերի կրճատում

ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիլիթ Ավանեսյան

Ժամանակակից շուկայական տնտեսությունում փոքր ու միջին ձեռնարկատիրությունը (այսուհետ՝ ՓՄՁ) տնտեսական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկն է, որն էական դեր է խաղում տնտեսության կայունության և դինամիկ զարգացման գործում: ՓՄՁ-ն յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է: ՓՄՁ հատվածը ցանկացած տնտեսական համակարգի անբաժանելի և օբյեկտիվորեն անհրաժեշտ սեգմենտն է, առանց որի տնտեսությունն ու հասարակությունը չեն կարող զարգանալ: Այն գործարարարարության առավել զանգվածային, դինամիկ ու ճկուն ոլորտ է:

ՓՄՁ-ն ներառում է տնտեսության բավականին լայն հատված, ներկայացնում է արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը և այլն: Այն խթանում է մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, օգնում դիվերսիֆիկացնել տնտեսական գործունեությունը և կարող է էական ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման ծավալների մեծացման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում: ՓՄՁ զարգացումը արդյունավետ նախադրյալ է բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Համաշխարհային փորձը վկայում է, որ ՓՄՁ զարգացումը շուկայական տնտեսության կայացման անհրաժեշտ նախադրյալներից մեկն է: Հայաստանի նման երկրներում այն ապահովում է մրցակցության վրա հիմնված մասնավոր հատվածի ձևավորում, ստեղծում է բազմաթիվ աշխատատեղեր, հնարավորություն է ընձեռում համեմատաբար կարճ ժամանակահատվածում ապահովել կայուն տնտեսական աճ:

Ցավոք, դեռևս հայրենական տնտեսությունում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց բախվում են ՓՄՁ-ի սուբյեկտները: Հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններով, մասնավորապես՝ ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների դժվար մատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման, կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներում առաջ մղման հետ կապված խնդիրներով, սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար գործարար հմտությունների պակասով:

Չնայած որ վերջին տարիներին ՀՀ-ում մասամբ լուծվել են ՓՄՁ սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հիմնախնդիրներ՝ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության ուղղություններում, սակայն դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի հետագա զարգացմանը:

Հիմնախնդիրները կարելի է պայմանականորեն դասակարգել ըստ օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և

ենթակառուցվածքային գործոնների, որոնք խոչընդոտող ազդեցություն ունեն թե՛ սկսնակ, և թե՛ գործող սուբյեկտների գործունեության վրա: Առկա հիմնախնդիրների դրսևորումները և սրությունը խիստ տարբերվում է նաև կախված ձեռնարկությունների գործելու վայրից (Երևան/ՀՀ մարզեր): Այդ տարբերությունները հատկապես սուր են արտահայտվում հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում:

Ոլորտի զարգացմանը խոչընդոտող օրենսդրական հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ սուբյեկտների և պետական մարմինների փոխհարաբերություններում առկա մի շարք վարչարարական բնույթի խնդիրների: Մասնավորապես, կապված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման, տնտեսավարող սուբյեկտներում անհարկի ստուգումներ իրականացնելու հաճախականության փաստերի հետ և այլն:

ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ճյուղի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցներից օգտվելու անհնարինությանը, պայմանավորված դրանց կարճ ժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ: Նաև երկարաժամկետ ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար:

ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը:

Այս ենթատեքստում կարևորվում են տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը: Այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը դեռևս բավարար չէ:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման մեթոդները և ուղիները պայմանավորված են այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են տվյալ երկրի տնտեսության զարգացման ուղղվածությունն ու մակարդակը, շուկայական հարաբերությունների կայացման աստիճանը, ազգային մտածելակերպը, համապատասխան օրենսդրական դաշտի առկայությունը, ֆինանսական, հարկային, մաքսային համակարգերի գործառնության արդյունավետության աստիճանը և այլն:

ՓՄՁ հետագա զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծմանը կարող են նպաստել մոնիտորինգի, արտոնագրման, հարկային պարտավորությունների ամրագրման, ներմուծման և արտահանման հարցերը կարգավորող օրենսդրութան կատարելագործումը, ինչպես նաև նոր ստեղծվող այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են բիզնես ինկուբատորները, տեխնոպարկերը, բիզնես ինովացիոն կենտրոնները և այլն:

Գրականություն

1. Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները, Երևան, 2000 թ.

2. Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա # 12. 2007թ., 10.2013թ.
3. Բաբայան Է.Ա., Կարապետյան Ի.Վ. «Փոքր բիզնեսի կարևորությունը ազգային տնտեսության զարգացման գործում», «Ասողիկ» հրատ., Երևան, 2003 թ.,
4. www.smednc.am
5. www.mineconomy. am

ՀԱՅ ՎՐԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մարգարիտ Կասիմյան

Ինչպես հայտնի է, երկրները համաշխարհային տնտեսությանը լիարժեքորեն ինտեգրման նպատակով իրենց հարաբերությունները սկսում են կառուցել տարածաշրջանային ինտեգրացման ուղով՝ հետագայում հնարավորություն ստանալով էլ ավելի ընդլայնել իրենց համագործակցության շրջանակները: Այս տեսանկյունից բացառություն չէ նաև մեր հանրապետությունը, և կարծում ենք, որ վերջինիս տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում ներգրավմամբ, ինչպես նաև հարևան երկրների հետ տնտեսական համագործակցության խորացմամբ է պայմանավորված երկրի հետագա տնտեսական աճը և զարգացումը: Տարածաշրջանային համագործակցության համատեքստում հատկապես կարևորում ենք Վրաստանի հետ տնտեսական համագործակցության հետագա զարգացման ու կատարելագործման անհրաժեշտությունն ու հրատապությունը: Ընդհանուր առմամբ, հայ-վրացական հարաբերություններն ավանդաբար բարեկամական են եղել և, բացի այդ, երկու ժողովուրդների և մշակույթների փոխհարստացումը, ավանդույթները և շատ առումներով նաև պատմական ճակատագիրը ամուր հիմք են հանդիսանում բարիդրացիական տնտեսական կապերի հետագա խորացման համար: Վրաստանը, շնորհիվ իր՝ Ռուսաստանի և ասիական պետությունների միջև ընկած աշխարհագրական հարմար դիրքի, ոչ միայն յուրահատուկ ազդեցություն ունի տարածաշրջանում, այլև կապող օղակ է հանդիսանում Հայաստանի և Ռուսաստա-

նի միջև, ինչպես նաև մեծ հնարավորություններ ունի Հայաստանը Սև ծովի և մնացյալ աշխարհի հետ կապելու գործում: Հատկանշական է, որ սերտ համագործակցության շնորհիվ հնարավոր կդառնա հաղթահարել Հայաստանի փոքր շուկայի սահմանափակությունը և թույլ կտա օտարերկրյա մասնավոր և պետական ներդրումների ներգրավմամբ իրագործել մի շարք միջկառավարական (տրանսպորտի, բնապահպանության և այլ ոլորտներում) նշանակության ծրագրեր: Համագործակցության հետագա կատարելագործումը կնպաստի նաև երկրների տնտեսական զարգացման մակարդակների բարձրացմանը, փոխադարձ առևտրից ակնկալվող օգուտների էականորեն մեծացմանը, ինչպես նաև տարածաշրջանում նշանակության ավելացմանը:

Սակայն, չնայած տնտեսական համագործակցության արդյունավետության մեծ հավանականությանը, կարող ենք պնդել, որ ներկայումս հայ-վրացական համագործակցությունը ընդամենը դիվանագիտական և բավականին ցածր մակարդակի վրա գտնվող, ինչպես նաև տնտեսական, մասնավորապես՝ առևտրային հարաբերություններից այն կողմ չանցնող համագործակցություն է: Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների, ներդրումային համագործակցության, ինչպես նաև տնտեսական մյուս կապերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ անկախացումից հետո երկրները փորձել են ազատ առևտրի, ինչպես նաև միասնական տնտեսական տարածքի ստեղծման նպատակով համագործակցության խորացման և ընդլայնման համար միջկառավարական համաձայնագրերի միջոցով ապահովել համագործակցության բոլոր անհրաժեշտ հիմքերը, ինչի հետևողական և մանրակրկիտ իրականացման պայմաններում վերջիններս աշ-

խատանքի բաժանման խորացման, կապիտալ ներդրումների իրականացման և տնտեսական կապերի այլ բնագավառների զարգացման պայմաններում կհասնեին փոխադարձ կապվածության և կախվածության բավականին բարձր ցուցանիշների: Սակայն դրանք պարզապես հնարավորությունները նախատեսող, բայց համագործակցության համար բավարար պայմաններ չստեղծող փաստաթղթեր էին, քանի որ զուտ իրավական հիմք ապահովելու տեսանկյունից կնքված երկկողմ համաձայնագրերը չէին կարող լուրջ հաջողություններ արձանագրել տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Բացի այդ, սա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ երկու երկրներն էլ իրենց արտաքին քաղաքականությունը մշակելիս տարբեր կողմնորոշվածություն և ուղղություններ են ընտրել: Մասնավորապես, Վրաստանը առավելապես կողմնորոշված է դեպի Արևմուտք, իսկ երկրի զարգացումը հիմնականում կապվում է արևմտյան աշխարհի հետ: Դա է պատճառը, որ հայ-վրացական կապերն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ տնտեսական համագործակցությունը գտնվում է զարգացման բավականին ցածր մակարդակի վրա: Քիչ թե շատ զարգացած բնագավառ է հանդիսանում առևտրատնտեսական համագործակցությունը, ինչն էլ հիմնականում ներառում է տարանցման և վրացական տարածքով դեպի Հայաստան և հակառակ ուղղությամբ ապրանքաշրջանառության, ինչպես նաև Վրաստանի տարածքով էներգառեսուրսների ներկրման հարցերը: Ուստի նման պայմաններում ակնհայտ է համագործակցության հետագա խորացման անհրաժեշտությունը և հրատապությունը: Ինչի նպատակով էլ առաջնային խնդիր է հանդիսանում հետևել տարբեր տարածաշրջաններում դրական արդյունքներ ապահովող ինտեգրացիոն գործընթացների և ին-

տեգրացիոն միավորումների օրինակներին, միջկառավարական մակարդակով մշակել և իրականացնել երկու երկրների ընդհանուր տնտեսական և քաղաքական շահերը շոշափող համատեղ ծրագրեր և նախաձեռնություններ, որոնք իրենց հեռահար պլաններով կընդգրկեն հարկային արտոնությունների տրամադրման, մաքսային ընթացակարգերի դյուրինացման, ինչպես նաև փոխադարձ ներդրումների ծավալների ավելացման մի շարք միջոցառումներ: Բացի այդ, ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրի հետագա խթանման նպատակով առաջարկվում է նաև ստեղծել երկրների ընկերությունների կողմից արտաքին առևտրում ներգրավվածությունը խթանող և խրախուսող ենթակառուցվածքներ, ուղղված միմյանց համար մեծ հետաքրքրություն ներկայացնող ապրանքատեսակների առավել մեծ ներուժային հնարավորություններ ունեցող ճյուղերի ֆինանսավորմանը և աջակցությանը: Նշվածը, բնականաբար, կմեծացնի փոխադարձ առևտրից ստացվող դրական արդյունքները, կնպաստի ներդրումային համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև տնտեսական կապերի այլ բնագավառների զարգացմանը՝ հետագայում տանելով համագործակցության էլ ավելի բարձր աստիճանների՝ ազատ առևտրային գոտու, ինչպես նաև մաքսային միության ձևավորման հնարավորությունների ստեղծմանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՆԱՆԿԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻ

Մարինա Պետրոսյան

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության գործարար ակտիվությունը և հուսալիությունը բնութագրվում է նրա ֆինանսական դրությամբ: Դա շուկայի բոլոր մասնակիցների շահերի իրագործման երաշխիքն է, քանի որ բավականին մեծ է հետաքրքրությունը յուրաքանչյուր կազմակերպության ֆինանսական դրության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացման նկատմամբ: Շուկայի մասնակիցները մշտապես շահագրգռված են իրենց գործընկերների մրցունակության և հուսալիության գնահատման հիմնահարցերով: Բարվոք ֆինանսական դրության ապահովման համար կազմակերպությունը պետք է ձևավորի ակտիվների ճկուն կառուցվածք՝ այնպես կազմակերպելով դրանց շարժը, որ եկամուտները գերազանցեն ծախսերին և արձանագրվեն կայուն ֆինանսական արդյունքներ: Կազմակերպության ֆինանսական դրությունը պայմանավորված է իր գործունեության վերջնական արդյունքներով: Բիզնես-ծրագրի հաջող իրագործումը դրականորեն է ազդում կազմակերպության ֆինանսական դրության վրա, հակառակ դեպքում բարձրանում է ծախսերի մակարդակը, նվազում շահույթի գումարը և վատանում կազմակերպության ֆինանսական դրությունը: Ֆինանսական դրության վերլուծության գլխավոր նպատակն է հայտնաբերել և վերացնել ֆինանսական գործունեության անբավարարու-

թյուններն ու թերությունները, գտնել ձեռնարկության դրության և վճարունակության բարելավման ռեզերվները:

Նախկին խորհրդային ժամանակներից մեր երկիրը ժառանգել է տնտեսական հզոր ներուժ, ինչը ժամանակին ուներ նաև քաղաքական ենթատեքստ: Սակայն այսօր հանրապետությունով մեկ տարածված են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք արդեն շուկայական հարաբերությունների պայմաններում դժվարանում են մասնակցել արտադրական գործընթացներին, ապահովել սեփական արտադրանքի իրացման տարածքները: Այսօր արդյունաբերական ձեռնարկությունների շուրջ 80 տոկոսի ուսերին դրված է ապառքների բեռը: Օբյեկտիվորեն հարց է առաջանում, թե ո՞րն է ճանապարհը, ինչպե՞ս պետք է վերագործարկել այդ կազմակերպությունները, հնարավորություն տալով աշխատել և ազատվել սեփական պարտքերից: Այս տարիների ընթացքում վերջնական մոտեցում չի որդեգրվել այս հարցի կարգավորման ուղղությամբ: Սահմանափակելով տնտեսական կապերն ու կորցնելով իրացման շուկաները, ձեռնարկությունները կանգնում են հումք ձեռք բերելու, արտադրական հնարավորությունները կրճատելու, ինչպես նաև արտադրանքի մրցունակությունը ցածրացնելու փաստի առաջ: Պարտքերը դարձել են անխուսափելի և, բնականաբար, վիճակը հանգեցնում է սնանկացման: Ելքը կամ պետական աջակցությունն է՝ պարտքերը սառեցնելու, հարկային արտոնություններ տրամադրելու ճանապարհով, կամ սնանկացման դեպքում առավել արդյունավետ վաճառքի գործարք իրականացնելը, որի արդյունքում ձեռնարկությունը կարող է գտնել իր նոր սեփականատիրոջը և ներդրումների ու բիզնես ծրագրերի միջոցով կազմակերպել հետագա գործունեությունը: Թեման չափազանց արդիական է և պահանջում է

համակողմանի վերլուծություն և միկրոմակարդակում, և մակրոմակարդակում: Այսպիսով՝ բարվոք ֆինանսական դրությունը երջանիկ պատահականության դրսևորում չէ, այլ կազմակերպության գործունեության արդյունքները որոշող բոլոր գործոնների արդյունավետ կառավարման ամբողջական հետևանք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բադանյան Լ., «Կարճաժամկետ ֆինանսական կանխատեսումը արտադրական կազմակերպությունում», Եր., 2000թ.
2. Բայադյան Ա., «Տնտեսվարող սուբյեկտների սնանկացման և ռիսկերի գնահատման մեթոդիկան», Եր., Աստղիկ, 2001
3. Ա. Սարգսյան, Կ. Առաքելյան, «Տնտեսական գործունեության վերլուծություն» Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005
4. Ա. Բայադյան, «Ֆինանսական վերլուծություն», Երևան, 2008

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մայրանուշ Մանվելյան,
Նարեկ Ավետիսյան

2013 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը: Վերջինս հանդիսանում է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի (այսուհետ՝ ՓՄՁ ոլորտ) հարկ վճարողների կողմից վճարվող հիմնական հարկատեսակներից մեկը: Այդ առումով կարևորվում է նաև Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներում (Հայաստանի Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն և Ադրբեջանի Հանրապետություն) եկամտային հարկի գործող դրույքաչափերի համեմատությունը:

Համաձայն բոլոր 3 երկրներում գործող հարկային օրենսդրությունների՝

- ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է հանդիսանում տվյալ երկրում և նրա սահմաններից դուրս ստացված հարկվող եկամուտը,
- ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է հանդիսանում տվյալ երկրի աղբյուրներից ստացված եկամուտը,
- հարկվող եկամուտը հաշվետու ժամանակահատվածում հարկ վճարողի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունն է /1,2,3/:

Տարածաշրջանի երկրների եկամտային հարկի դրույքաչափերի ուսումնասիրությունը փաստում է, որ աշխատավարձից եկամտային հարկը Հայաստանում և Ադրբեջանում հաշ-

վարկվում է պրոգրեսիվ սանդղակով (աղյուսակներ 1-2) /1,3/: Ի տարբերություն վերջիններիս՝ Վրաստանում, անկախ աշխատավարձի չափից, սահմանված է 20% դրույքաչափ /2/:

Աղյուսակ 1. ՀՀ-ում հարկային գործակալի կողմից եկամտային հարկի հաշվարկվող դրույքաչափեր

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 120 000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
120 000 -2 000 000 դրամ	29 280 դրամին գումարած 120 000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
2 000 000 դրամից ավելի	518 080 դրամին գումարած 2 000 000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Աղյուսակ 2. Ադրբեջանում ամսական եկամուտներից եկամտահարկի հաշվարկվող դրույքաչափեր

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 2 500 մանաթ*	Հարկվող եկամտի 14 տոկոսը
2 500 մանաթից ավելի	350 մանաթին գումարած 2 500 մանաթը գերազանցող գումարի 25 տոկոսը

Ինչպես երևում է աղյուսակների տվյալներից, աշխատավարձից եկամտային հարկի ամենացածր դրույքաչափը սահմանված է Ադրբեջանում, իսկ ամենաբարձրը՝ Հայաստանում: Սակայն 5500 մանաթից բարձր աշխատավարձի դեպքում Վրաստանում կիրառվող 20% դրույքաչափի արդյունքում գանձվող եկամտային հարկը ավելի ցածր է, քան Ադրբեջանում (օրինակ՝ 5501 մանաթ աշխատավարձի դեպքում Վրաս-

* 1 մանաթ = 521.6 դրամ (2013թ. հունվար-հունիս ամիսների միջին ամսական փոխարժեք)

տանում կգանձվի 1100.2 մանաթ եկամտային հարկ, իսկ Ադրբեջանում՝ 1100.25 մանաթ):

Աշխատավարձից տարբերվող եկամուտների մասով եկամտային հարկի դրույքաչափերը տատանվում են 5-20%-ի շրջանակում (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Աշխատավարձից տարբերվող եկամուտների մասով եկամտային հարկի դրույքաչափերն ըստ առանձին երկրների

Եկամտի տեսակը	Հայաստանի Հանրապետություն	Վրաստանի Հանրապետություն	Ադրբեջանի Հանրապետություն
Ռոյալթիներ և գույքի վարձակալությունից ստացված եկամուտներ	10 տոկոս	20 տոկոս	14 տոկոս
Տոկոսներ և շահաբաժիններ	10 տոկոս	5 տոկոս	10 տոկոս
ԱՁ-ների ստացած եկամուտ**	ամսական 5000 դրամ	20 տոկոս	-
Գործարքի վերաբերյալ գրավոր պայմանագիր չկնքելու դեպքում	11 տոկոս	-	-
Կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակում ստացված կենսաթոշակներ	10 տոկոս	-	-

** «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և /կամ/ «Արտոնագրային հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված և /կամ/ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով հարկ վճարողները եկամտային հարկը հաշվարկում և վճարում են ամսական 5000 դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար:

Բոլոր 3 երկրներում սոցիալական աջակցության նպատակով եկամուտների մի մասն ազատված է հարկումից (օրինակ՝ հաշմանդամության հետ կապված եկամուտները, տուն-ինտերնատներում գտնվող երեխաների ստացած եկամուտները, ժամանակավոր անաշխատունակության նպաստները և այլն): Չեն հարկվում նաև գյուղատնտեսական գործունեության արդյունքում ստացված եկամուտները, միջազգային մրցույթներում ստացված պարգևները, պետական մրցանակները:

Բացի վերոնշյալ արտոնություններից Վրաստանում ՓՄՁ ոլորտին աջակցելու նպատակով գերփոքր (միկրո) ձեռնարկատիրությունն ազատված է եկամտային հարկից (աշխատակիցներ չունենալու դեպքում), իսկ փոքր ձեռներեցների ստացած եկամուտները հարկվում են 3% կամ 5% դրույքաչափերով՝ օրենքով սահմանված կարգով: Նշված արտոնությունը չի կիրառվում ո՛չ Հայաստանում, ո՛չ Ադրբեջանում, սակայն գտնում ենք, որ Հայաստանում վերջինիս կիրառությունը կնպաստի նորաստեղծ փոքր ձեռնարկությունների կայացմանը և տնտեսական զարգացմանը:

Գրականություն

1. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք
2. Налоговый кодес Республики Грузия
3. Налоговый кодекс Республики Азербайджан

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արմինե Մխիթարյան

Յուրաքանչյուր տնտեսական սուբյեկտի հիմնական խնդիրն է հանդիսանում իրար մեջ մրցակցող օգտագործման ոլորտներում սահմանափակ ռեսուրսների տեղաբաշխումը: Այդպիսի ընտրություն ստիպված են կատարել ինչպես առանձին ձեռնարկությունները, այնպես էլ տվյալ երկրի տնտեսությունը:

Տնտեսության համար խնդիրը կայանում է նրանում, թե ինչպես տեղաբաշխել արտադրական գործոնների սահմանափակ ռեսուրսները, օրինակ՝ աշխատուժը (որակավորման տարբեր մակարդակների), կապիտալ ներդրման համար միջոցները, արտարժույթը օգտագործման տարբեր ձևերի մեջ: Այս ռեսուրսների օգտագործումը միայն մեկ խնդրի լուծման համար (օրինակ՝ կապիտալ ներդրում արդյունաբերության զարգացման համար) սահմանափակում է դրանց հասանելիությունը այլ նպատակների համար: Միջոցների համար մրցակցային պայքարին մասնակցում են նաև ավելի ընդհանուր նպատակներ, ինչպես օրինակ՝ տնտեսական աճի առաջնահերթությունը և եկամուտների տեղաբաշխման նպատակային կառուցվածքը: Ձեռնարկության դեպքում դա ընտրության խնդիր է՝ ունեցած միջոցները կամ այն միջոցները, որոնք կարելի է ստանալ, ներդնելու հնարավոր ուղղությունների միջև: Ընտրություն, որը ձեռնարկության տեսանկյունից ապահովում է դրանց արդյունավետ օգտագործումը:

Բազմաթիվ ներդրումային նախագծերի միջև ընտրության խնդիրը հատկապես կարևոր է Հայաստանի տնտեսության համար: Ներկայումս երկիրը կարիք ունի ներդրումների արդյունավետության գնահատման մեթոդների և գործընթացների մշակման, որոնք թույլ կտան սահմանափակ ֆինանսական միջոցները ՀՀ դրամով և արտարժույթով ուղղել ձեռնարկություններ, որոնք հնարավորություն են ստեղծում Հայաստանում տնտեսության զարգացմանը:

Ձեռնարկությունների իրական ինքնուրույնության և նրանց վարած իսկական շուկայական խաղի հեռանկարը անհրաժեշտություն է առաջացնում նրանց ապահովելու արդյունավետ գործիքներով իրենց ընդունած որոշումների պոտենցիալ հետևանքների գնահատման համար:

Նման գործիքներով ապահովելու հնարավորություններից մեկն է հանդիսանում հայկական տնտեսական պրակտիկայի յուրացումը և դրան հարմարվելը, հիմնականում՝ ներդրումային նախագծերի արդյունավետության մեթոդների գնահատականը, որոնք օգտագործվում են և տարածվում Վերականգնման և զարգացման միջազգային բանկի կողմից:

Ճիշտ է, այս մեթոդները մշակվել են հաշվի առնելով զարգացած երկրների պահանջները, սակայն դրանք համարվում են ընդհանուր, և բացի այդ, ամբողջական բնույթը թույլ է տալիս օգտագործել դրանց արդյունավետությունը ցանկացած ճյուղում և ներդրումային նախագծերում՝ անկախ նախատեսված գործունեության մասշտաբներից:

Այն փաստը, որ այս մեթոդների մեջ օգտագործվում են որոշումներ, որոնք բնորոշ են շուկայական զարգացած տնտեսություն ունեցող երկրներին, չի նվազեցնում նրանց օգտագործման հնարավորությունները Հայաստանի տնտեսության

ներդրումային քաղաքականության մեջ: Ներդրումային նախագծերի ընտրությունը, որը նախատեսված է արտահանման համար, իրականացվել է հենց այս մեթոդներով:

Բացի այդ, այդպիսի գործընթացների օգտագործումը կարող է ունենալ կարգավորիչ նշանակություն տնտեսական այնպիսի չափանիշների համար, ինչպիսիք են, օրինակ, գները, արժութային փոխարժեքը կամ տոկոսային դրույքների սիստեմը և հարկային դրույքները: Դա կարող է նաև դրական ազդեցություն ունենալ ձեռնարկությունների մակարդակով ծախսերի հաշվարկի կատարելագործման վրա:

Հիմնական արդյունքները և նորույթը

1. ՀՀ-ում միջազգային վարկային ներդրումների արդյունավետ տեղաբաշխման ուղիների և առևտրային բանկերում վարկային գործառնությունների արդյունավետության հետազոտությունները դիտարկվում են որպես միջազգային վարկային ներդրումների տեղաբաշխման արդյունավետության գնահատման փաստացի գիտական արդյունք:

2. ՀՀ բանկային համակարգում միջազգային վարկային ներդրումների արդյունավետության վերլուծությունների արդյունքում առևտրային բանկերում վարկային քաղաքականության սկզբունքների կատարելագործումը դիտարկվում է որպես միջազգային վարկային ներդրումների արդյունավետության բարձրացման հիմք:

3. ՀՀ առևտրային բանկերում միջազգային վարկային ներդրումների արդյունավետ տեղաբաշխման վերլուծության հիման վրա, ինչպես նաև Համաշխարհային բանկի մեթոդաբանության համաձայն վարկավորման տեխնիկա-տնտեսական հաշվետվությունների կազմման մեթոդների արդիակա-

նացումը դիտարկվում է որպես միջազգային վարկային ներդրումների արդյունավետության բարձրացման գործոն:

4. ՀՀ և զարգացած երկրների արտադրական բանկերի վարկային գործառույթների արդյունավետության գնահատման վերլուծությունների հիման վրա, ինչպես նաև Համաշխարհային բանկի մեթոդաբանության համաձայն վարկերի ֆինանսական և տնտեսական արդյունավետության գնահատման և վերլուծության մեթոդների ստեղծումը դիտարկվում է որպես միջազգային վարկային ներդրումների արդյունավետության բարձրացման գործոն:

Ներկայացվածի շրջանակներում միջազգային վարկային ներդրումներին առնչվող հիմնահարցերի տեսական դրույթների, միջազգային վարկային ներդրումներին վերաբերող տեղեկատվական նյութերի հիմնարար վերլուծությունների հիման վրա ստացված եզրակացություններն ու արված առաջարկությունները կարող են օգտագործվել վարկային քաղաքականության նոր ռազմավարության ձևավորման օրենսդրական դրույթների վերանայման ուղղությամբ նոր միջոցառումների մշակման համար: Մասնավորապես միջազգային ներդրումների արդյունավետության տեխնիկա-տնտեսական հաշվետվությունների կազմման և արդյունավետության գնահատման և վերլուծության մեթոդների ներդրումը ՀՀ բանկային համակարգում կապահովեն միջազգային վարկերի անհրաժեշտ արդյունավետություն, կխթանեն ամբողջ բանկային համակարգի արդյունավետության բարձրացումը:

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Նաիրա Գրիգորյան

Յուրաքանչյուր երկրում անշարժ գույքի գնահատումը զարգացել է առկա շուկայական պայմաններին և բնապատմական ավանդույթներին համապատասխան[1]: Բնականաբար, յուրաքանչյուր երկրի, այդ թվում և Հայաստանի անշարժ գույքին և դրա շուկաներին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ: Հաշվի առնելով այդ առանձնահատկությունները, Հայաստանում անշարժ գույքի գնահատման զարգացման հետագա հեռանկարները նպատակահարմար է կապել ոչ թե արտասահմանյան մոդելների կրկնօրինակման հետ, այլ՝ հնարավորինս կատարելագործելու միջոցով դրանք համապատասխանեցնել Հայաստանում ձևավորված անշարժ գույքի շուկայի փաստացի վիճակին, գնագոյացման համակարգերին և շինարարական աշխատանքների ու արտադրության ստանդարտներին:

Հայաստանում անշարժ գույք հասկացությունը ակտիվ գործնական շրջանառության մեջ է մտել 1990 թվականից, երբ սկսվեց մասնավորեցման գործընթացը:

Շուկայի ձևավորման արդյունքում արմատավորվեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ գնահատում, գնահատող և շուկայական արժեք: Հետևաբար՝ շուկայի ակտիվացմանը զուգընթաց տնտեսության նոր ոլորտի՝ անշարժ գույքի գնահատման համար օրենսդրական և մեթոդական

[1] Տես **Тэпман Л.** Оценка недвижимости // М.: ЮНИТИ, 2002 г., с.23

հիմքերի ձևավորումը և զարգացումը դարձան ակնհայտ անհրաժեշտություն և հրատապ խնդիր:

Անշարժ գույքի գնահատման անհրաժեշտությունը պայմանավորված է դիտարկվող ոլորտից բխող բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրների լուծմամբ: Մասնավորապես, անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքի շուրջ բանակցությունների ժամանակ կարևորվում է անշարժ գույքի արժեքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվությունը: Քանի որ վարկատուները վարկի գումարի չափը կապում են գրավադրվող գույքի շուկայական արժեքի հետ[2]: Հետևաբար՝ գնահատումը ներդրողներին և/կամ վարկատուներին օգնում է տարբերակել գույքը՝ հիմնվելով նրանցում ներդրումների համեմատական ռիսկայնության վրա: Անշարժ գույքի շուկայական արժեքի և եկամտաբերության (վարձավճարների) հաշվարկման ու վերլուծության անհրաժեշտությունն ակնհայտ է անշարժ գույքի պորտֆելի կառավարման համար[3]:

Այսպիսով՝ պետության կողմից սեփականատիրոջից վերցված գույքի դիմաց փոխհատուցումը սեփականատերերը ստանում են գնահատողի կողմից տրված շուկայական արժեքի վերաբերյալ եզրակացության հիման վրա (օրինակ՝ «Հյուսիսային պողոտա» և «Կասկադ» ծրագրերը): Անշարժ գույքին վերաբերող վեճերը (գույքի բաժանում, ժառանգության մասնաբաժնի ստացում և այլն) և պարտքերի դիմաց գույքի առգրավումը դատական կարգով լուծում են ստանում՝ հիմնվելով շուկայական գնահատողի գրավոր եզրակացության վրա և այլն:

---

[2] Տես **Фридман Д.**, **Ордуэй Н**. Анализ и оценка приносящей доход недвижимости. М.: Дело, 1997 г. с.56.

[3] Տես **Джухи В., Киреева В.**, Оценочная деятельность в экономике. Учеб. пособие/ – М.: ИКЦ «Март», 2003 с.19.

Հարկ ենք համարում նշել, որ տնտեսական բարեփոխումների և իրավական պետության ստեղծման գործընթացի համատեքստում հրատապ խնդիր է նաև անշարժ գույքի հարկային դաշտի կարգավորումը: Մինչև 26.12.2002թ. «ՀՀ գույքահարկի մասին» նոր օրենքի և 29.12.2003թ. «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը, պետական և համայնքային բյուջեները կրում էին զգալի կորուստներ՝ գնահատման համարժեք մոտեցումների բացակայության և, համապատասխանաբար, անշարժ գույքի շուկայում առկա անշարժ գույքի շուկայական գներից կադաստրային արժեքների շեղվածության պատճառով[4]: Շեղված այս արժեքներից էլ իրականացվում էր գույքահարկի գանձումը և պետության ու համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը (ուղղակի կամ աճուրդային կարգով), ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում՝ վաճառքի կամ մեկնարկային նվազագույն գների հաշվարկը:

Այդ իսկ պատճառով պետք է ձեռնարկել միջոցառումներ անշարժ գույքի գնահատման համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝ գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը սահմանելիս:

Հետևաբար՝ իրականացնելով հայեցակարգային փոփոխություններ պետք է.

---

[4] Տես «ՀՀ բնակ. հողերի կադաստր. գնահատման կարգը, տարածագն. գոտիական. գործակիցները և սահմանները հաստատելու մասին» 24.12.2003թ. N1746-Ն կառավարության որոշումը:

1. Նպաստել անշարժ գույքի (հողամասերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների) շուկաներում գնային իրավիճակի կայունացմանն ու շուկայի զարգացմանը:

2. Ստեղծել ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հանրապետության տարածքում պատկանող անշարժ գույքի (հողի և շենքերի, շինությունների) միավորների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվական բազա:

3. Զարգացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանցը:

4. Ամրապնդել գույքային հարկերի՝ որպես սեփականությունից գանձվող հարկերի կիրառության հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքները:

5. Բարձրացնել սահմանված հարկային արտոնությունների համակարգի արդյունավետությունը:

6. Մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն պարզեցնել ու կատարելագործել անշարժ գույքի գնահատմանն առնչվող գործառույթները:

7. Իրականացնել ընթացակարգային փոփոխություններ՝ ներդնելով անշարժ գույքի միասնական գնահատման ստանդարտ:

Հատկանշականն այն է, որ ՀՀ գույքահարկի հարկման համակարգի արդյունավետության բարձրացումը պետք է իրականացվի հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝

1) անշարժ գույքի (հողամասերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների) միասնական գնահատման համակարգի ներդրմամբ, ինչը հնարավորություն կընձեռի հողամասերը գնահատել որպես անշարժ գույք, իսկ դրանց վրա

կառուցված շենքերը և շինությունները՝ որպես այդ հողամասերի բարելավումներ,

2) միասնական հարկի հաշվարկման նպատակով միասնական հարկվող օբյեկտի, միասնական հարկման բազայի և միասնական դրույքաչափերի սահմանմամբ,

3) անշարժ գույքի միասնական հարկման բազայի ձևավորման նպատակով անշարժ գույքի միասնական գնահատման մեթոդաբանության և տեղեկատվության տրամադրման միասնական բազայի ստեղծմամբ,

4) անշարժ գույքի շուկայական գնագոյացման չափանիշների ներդրմամբ,

5) հողամասերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների միասնական տարածագնահատման գոտիների ձևավորմամբ,

6) հարկային բեռի առավել արդյունավետ վերաբաշխմամբ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրարժեք գույքի համար գույքահարկը հաշվարկել ավելի բարձր դրույքաչափերով՝ միաժամանակ չավելացնելով առավել ցածրարժեք գույքային միավորների համար սահմանված հարկային բեռը,

7) արտոնությունների համակարգի՝ առավելապես սոցիալական կողմնորոշման ապահովմամբ:

Այդուամենայնիվ՝ հողի հարկի և գույքահարկի գործող համակարգերից անշարժ գույքի միասնական հարկին անցումը ենթադրում է նաև որոշակի խնդիրների կանոնակարգում: Մասնավորապես, միասնական անշարժ գույքի (հողամասերի և դրանց վրա կառուցված շինությունների) արժեքի գնահատման մեխանիզմի ներդրումը միասնական հարկի ներդրման կարևորագույն բաղադրամասն է:

Հատկանշականն այն է, որ ՀՀ գույքի և հողի գնահատման գործառույթներն իրականացվում են տարբեր ընթացակարգերով: Այսինքն՝ գույքահարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում շենքերի, շինությունների կադաստրային գները, սակայն հողամասերի (մասնավորապես, բնակելի կառուցապատման հողամասերի) հողի հարկի հաշվարկման համար քաղաքներում և քաղաքատիպ ավաններում հիմք են հանդիսանում կադաստրային գները, իսկ գյուղական համայնքներում՝ զուտ եկամուտը[5]: Հետևաբար՝ հարկման նպատակով տարբեր արժեքային համակարգերի (զուտ եկամուտ, կադաստրային գին) առկայությունը խոչընդոտում է հողի և գույքի արժեքների շուկայական գնագոյացմանը, ինչպես նաև՝ դրանց մասով շուկայական արժեքների ձևավորմանը:

Այսպիսով՝ նպատակահարմար կլինի նշված համակարգի ներդրումն իրականացնել փուլ առ փուլ՝ ըստ յուրաքանչյուր բնակավայրում անշարժ գույքի գրանցման և անհրաժեշտ տեղեկատվության նախապատրաստման ավարտման հերթականության: Այդուհանդերձ՝ հաշվի առնելով վերոնշյալ դրույթները անհրաժեշտություն է առաջանում ընդունել «Անշարժ գույքի հարկի մասին» ՀՀ օրենք, զուգահեռաբար՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման հարաբերությունները կարգավորելով առանձին օրենքով:

Հետևաբար՝ ըստ վերոնշյալ դրույթների կարելի է փաստել, որ անշարժ գույքի գնահատման հայկական համակարգը պետք է համապատասխանի միջազգային նմանատիպ համակարգերին՝ թե մեթոդաբանության, թե տերմինաբանության տեսակետից, հասկանալի և մատչելի լինի միջազգային պո-

[5] Տես՝«ՀՀ օրենքը գույքահարկի մասին»՝ ընդունված 2002թվականի դեկտեմբերի 26-ին, http://syunik.gov.am/files/legislation/338.pdf

տենցիալ ներդրողներին և, ամենակարևորը, մեր և արտասահմանյան գնահատողների կողմից իրականացվի միասնական գնահատման ստանդարտ, որպեսզի կատարված գնահատումները համարժեքորեն ընդունվեն և Հայաստանում, և նրանից դուրս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ օրենք՝ գույքահարկի մասին» ընդունված 2002 թվականի դեկտեմբերի 26-ին, URL:-http://syunik.gov.am/files/legislation/338.pdf
2. «ՀՀ հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնային գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» 24.12.2003թ. N1746-Ն կառավարության որոշումը:
3. Тэпман Л. Оценка недвижимости // М.: ЮНИТИ, 2002 г. с.63
4. Фридман Д., Ордуэй Н., Анализ и оценка приносящей доход недвижимости. М., Дело, 1997 г., с.72
5. Джухи В., Киреева В., Оценочная деятельность в экономике. Учеб. пособие/ М., ИКЦ« 2003., с.19

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Նարինե Դեմուրչյան

Համաշխարհային տնտեսության, մասնավորապես՝ համաշխարհային ֆինանսական շուկայի գլոբալացումը որոշում է միջազգային վարկային շուկային հայրենական բանկերի ինտեգրման հիմնախնդրի ուսումնասիրության և ինտեգրման օպտիմալ ուղղությունների մշակման արդիականությունը[1]:

Որոշ հեղինակներ առանձնացնում են միջազգային վարկային շուկային հայրենական բանկերի ինտեգրման մի շարք մոդելներ՝ առևտրային բանկի դուրս գալը արդյունաբերական զարգացած երկրի շուկա, մասնաճյուղերի միջազգային ցանցի զարգացումը, հայրենական բանկերի ինտեգրումը միջազգային վարկային շուկային ԱՀԿ անդամակցության պայմաններում, համատեղ ձեռներեցությունը[2]: Սակայն, մեր տեսանկյունից, ինտեգրման ուղղությունները ավելին են, քան վերը թվարկվածներն են:

Մեր կարծիքով, ինտեգրման ուղղությունների բնորոշման ավելի հիմնավորված մոտեցում է հետևյալը, քանի որ իրենից ներկայացնում է ինտեգրացիոն հարաբերությունների մեջ մտնող սուբյեկտների փոխգործունեության մեխանիզմի պարզեցված մոտեցում:

---

[1] Думная Н. Н., Петров М. А., Формирование международных интегрированных рынков в условиях глобализации.
URL:http://www.worldneweconomy.ru/ru/docs/dum_integro.pdf (дата обращения: 01.05.2011)

[2] Петров А. В., Макроэкономические аспекты интеграции российских банков в мировую финансовую систему, Волгоград, 2003, с.52

1. **Անկախ ինտեգրում**, որը բնութագրվում է նոր կառուցվածքի ստեղծմամբ, հաշվետվության համակարգի առկայությամբ, իր զարգացման ռազմավարությամբ և այլն: Նման կառույցի ստեղծումը թույլ է տալիս հենց սկզբից հաշվի առնել բանկային գործունեություն ծավալելու կանոնները՝ ընդունված տվյալ երկրում: Այդ ինտեգրացիոն մոդելի առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս կիրառել ընդունող կողմին բնորոշ բիզնեսի վարման, բանկային ծառայությունների մատուցման, մարկետինգային ռազմավարությունների ձևերը, ինչպես նաև որոշումների արագ ընդունման հնարավորություն է ընձեռում՝ առանց համապատասխան համաձայնեցումների գլխավոր ընկերության հետ: Որպես այդ ինտեգրացիոն մոդելի թերություն կարելի է առանձնացնել օպերատիվ վերահսկողության բացակայությունը հիմնադիրների կողմից, ներքին ինֆորմացիայի ձևափոխման անհրաժեշտությունը հետագա վերլուծության համար:

2. **Կախյալ ինտեգրում**, որը գործում է հիմնադիրներից մեկի մոդելի համաձայն և կիրառում է նրա անձնակազմի կառավարման և խթանման համակարգերը: Ինտեգրման այս մոդելի առավելությունը մայր ընկերությունում մշակված բիզնես տեխնոլոգիաների կիրառումն է: Որպես թերություն կարելի է առանձնացնել ընդունող կողմի առանձնահատկությունները հաշվի չառնելը:

3. **Փոխկապված ինտեգրում**, որը ակնհայտորեն համարվում է ամենատարածված ուղղությունը: Դրա շրջանակներում մենեջերները պահպանում են ֆունկցիոնալ և կարիերային կապերը իրենց հիմնադիր-ընկերությունների հետ, մասնակցում են նրանց նյութական խրախուսման սխեմաներին:

Այս մոդելը թույլ է տալիս չեզոքացնել նախորդ երկուսի թերությունները:

Ինտեգրացիոն գործընթացների իրականացման այս փուլերի առանձնացումը նպաստում է ինտեգրացիոն միջոցառումների ավելի որակյալ գնահատմանը, միջազգային ինտեգրման համալիր քաղաքականության ձևավորմանը:

Այսպիսով, ՀՀ առևտրային բանկերի միջազգային վարկային շուկային ինտեգրման ժամանակակից ուղղությունների վերլուծությունը թույլ տվեց արդեն գոյություն ունեցող հիմնական ուղղություններին ավելացնել բանկային ինտեգրման ևս 3 ուղղություն: Սակայն բանկի կողմից ինտեգրման այս կամ այն ուղղության ընտրության անհրաժեշտությունը պետք է հենց սկզբից հիմնվի բանկի կողմից միջազգային ինտեգրման իր հնարավորությունների և պոտենցիալի հստակ տեսլականի վրա, որոնք պետք է գնահատվեն շատ օբյեկտիվորեն: Այս հիմնախնդրի արդիականությունը հաստատում է նաև այն փաստը, որ գրականության մեջ առաջարկվող բանկի ինտեգրման հեռանկարները գնահատող մոտեցումները հաշվի չեն առնում արտաքին գործոնների ազդեցությունները ինչպես բանկի, այնպես էլ այն երկրի համար, որտեղ բանկը պետք է հիմնադրվի: Դրա հետ կապված, ակնհայտ է բանկի միջազգային ինտեգրման պոտենցիալի գնահատման մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունը: Դրա կիրառությունը թույլ կտա բանկի ղեկավարությանը ընդունել սկզբունքային որոշումներ բանկի ռեսուրսների բավարարության և արտաքին տնտեսական միջավայրի բարենպաստության մասին՝ ինտեգրացիոն գործընթաց սկսելու համար:

ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԿԱ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Նարինե Էլիզբարյան

Զբոսաշրջությունը Հայաստանում տնտեսության այն բացառիկ ճյուղերից է, որը նույնիսկ տնտեսության ընդհանուր անկման պայմաններում ոչ շատ դինամիկ, բայց այնուամենայնիվ զարգանում է: Սակայն, Հայաստանը, զգալի զբոսաշրջային ներուժ ունենալով հանդերձ, այսօր շատ փոքր տեղ է զբաղեցնում միջազգային զբոսաշրջային շուկայում: Դա պայմանավորված է Հայաստանի՝ որպես համեմատաբար նոր առաջացած երկրի համաշխարհային տնտեսությանն ինտեգրման, տարածաշրջանային ծրագրերում ակտիվ մասնակցության, Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդման, ներդրումային և առևտրա-տնտեսական ոլորտներում ծրագրային քաղաքականության իրականացման ոչ բավարար գործընթացներով:

Հայաստանի զբոսաշրջային ներուժը գնահատելիս անպայման պետք է հաշվի առնել այն փաստը, որ Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում նոր առաջացած երկիր է, ինչը նրան շատ գրավիչ է դարձնում միջազգային զբոսաշրջային հանրության համար: Ունենալով այս զգալի ներուժը և զարգացման հնարավորություն ընձեռող զբոսաշրջության բազմազան տարատեսակներ, միաժամանակ առկա են զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Դրանք են՝

1. Հայաստանի զբոսաշրջային արդյունքի ցածր որակը:

2. Հայաստանի զբոսաշրջային արդյունքի ոչ մրցունակ գները միջազգային զբոսաշրջային շուկայում, մասնավորա-

պես՝ տարածաշրջանի երկրների հետ մրցակցության պայմաններում:

3. Հայաստանը որպես միջազգային շուկային նոր ինտեգրված երկիր լավագույն ձևով չի ներկայացված միջազգային հանրությանը, չի ձևավորված «Հայաստանը զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր» նկարագիրը, չնայած այն բանին, որ այսպիսի պահանջարկ արդեն ձևավորված է:

4. Քաղաքական և տնտեսական ցնցումները:

5. Հայաստանի մասնակի շրջափակումը:

Հայաստանում զբոսաշրջային արդյունքի ցածր որակը և ոչ մրցունակ գները պայմանավորված են զբոսաշրջային արդյունքի բաղկացուցիչներ հանդիսացող ծառայությունների անկատարությամբ և բարձր մենաշնորհային գներով:

ա/ Հայաստան մուտքի զբոսաշրջային արտոնագրի ստացումը մի շարք երկրներում բարդացված է հյուպատոսական ծառայությունների բացակայության պատճառով: Բարձր են մուտքի արտոնագրերի ստացման տուրքերի չափերը:

բ/ Քաղաքացիական ավիացիայի ոլորտում մինչև վերջերս գործող մենաշնորհը և դրա հետևանքով առաջացած բարձր գներն ու ծառայությունների ցածր որակը: Հատկանշական է, որ Հայաստանի ազգային ավիափոխադրողի շուկայից դուրս գալը հանգեցրեց գների նոր աճի:

գ/ Հյուրանոցային տեղերի սահմանափակ լինելը խոչընդոտում է ազատ մրցակցային դաշտի ձևավորմանը: Հյուրանոցային տնտեսությունն ունի բազմաթիվ չլուծված հիմնախնդիրներ, և միջազգային զբոսաշրջությանը որոշակիորեն բավարարող փոքրաթիվ հյուրանոցները կենտրոնացած են հիմնականում մայրաքաղաքում, իսկ դա նշանակում է, որ օրինակ՝

Սանահին-Հաղպատ երկարատև զբոսաշրջային երթուղուց հետո զբոսաշրջիկները ստիպված վերադառնում են Երևան՝ գիշերելու համար: Այս երկուսը նույնպես զբոսաշրջային արդյունքի թանկացման և ցածր որակի գործոններն են:

դ/ Զբոսաշրջային կացարանի և հանրային սննդի կազմակերպությունների կենտրոնացումը էապես խոչընդոտում է տարածաշրջանային համաչափ զարգացման վրա զբոսաշրջությունից ակնկալվող ազդեցության նշանակությունը:

ե/ Գյուղական և ներմարզային ճանապարհները հիմնականում գտնվում են քայքայված վիճակում, մինչդեռ այդ ճանապարհներն են, որ տանում են դեպի զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերը:

զ/ Զբոսաշրջային երթուղիները և կենտրոնները կահավորված չեն անհրաժեշտ ենթակառուցվածքներով և չեն բավարարում զբոսաշրջային սանիտարահիգիենիկ պայմաններին, որը և ամենազսպող գործոնն է միջազգային, ոչ հայազգի զբոսաշրջիկի Հայաստան այցելելու համար:

է/ Բարդացված է հուշանվերների, մշակութային արժեքներ պարունակող իրերի արտահանման կարգը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Շուշան Հարությունյան

Հայաստանը, որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ երկիր, մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ: Դրա համար, սակայն, անհրաժեշտ է ավելի բարձր որակավորված աշխատուժ, ավելի մեծ ներդրումներ, ավելի բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, հետազոտությունների ավելի ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ, ավելի նպաստավոր գործարար միջավայր:

ՀՀ զբոսաշրջության ոլորտում առկա են հետևյալ հիմնախնդիրները՝

1. Զբոսաշրջիկների այցելությունների հետ կապված հիմնախնդիրներ: Ըստ Հայաստան այցելած զբոսաշրջիկներին վերաբերող վիճակագրության մեր երկիր ամենաշատը այցելում են Ռուսաստանից և Վրաստանից: Սրանք հիմնականում մեր հայրենակիցներն են և ամենաքիչ ծախսումներն են կատարում, ինչը նշականկում է, որ զբոսաշրջությունից ստացված եկամուտներն ավելի քիչ են:

2. Սեզոնայնության հիմնախնդիրը: Հայաստանում զբոսաշրջության սեզոնայնությունը կարևոր հիմանխնդիր է համարվում: Զբոսաշրջիկների գերիշխող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով այցելողները, հանրապետություն են ժամանում մայիսից հոկտեմբեր ընկած ժամա-

նակահատվածում, որը հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության աշխատանքում ստեղծում է ծանրաբեռնվածություն: Տարվա մնացած հատվածում զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններում եկամուտը ցածր է, հյուրանոցների զբաղվածությունը նվազում է և ոլորտում աշխատատեղերից շատերը կրում են սեզոնային բնույթ:

3. Զբոսաշրջային արդյունքի բազմազանության բացակայություն: Հայաստանը բացի դասական էքսկուրսիոն տուրերից միջազգային շուկայում հայտնի չէ հանգստի կազմակերպման այլ տեսակներով: Ներկայումս մեծ մասսայականություն են վայելում արկածային, էքստրեմալ զբոսաշրջության տեսակները, էկո և ագրոզբոսաշրջությունը: Որոշ տուրոպերատորներ սեփական ջանքերով փորձում են բավարարել զբոսաշրջային շուկայի արդի պահանջները, սակայն դրանք դեռևս չեն ձևավորում Հայաստանի նոր զբոսաշրջային արդյունք, որովհետև զբոսաշրջային նոր արդյունքների ձևավորման հարցերում չկա համակարգված պետական մոտեցում:

4. Զբոսաշրջային արտադրանքի դիրքավորում: Չնայած հարուստ պատմամշակութային և բնական զբոսաշրջային ռեսուրսների առկայությանը՝ Հայաստանը ներկայումս չի գտնվում համաշխարհային զբոսաշրջային ուղղությունների շարքում և համաշխարհային շուկայում որպես զբոսաշրջային ուղղություն ունի պատշաճ կերպով դիրքավորման կարիք: Հայկական տուրոպերատորների և «Զբոսաշրջության զարգացման գործակալության» իրականացրած մարկետինգային միջոցառումները համակարգված և արդյունավետ չեն, չկա բավարար ֆինանսավորում պետության կամ մասնավոր հատ-

վածի կողմից գովազդատեղեկատվական, ճանաչողական և այլ տիպի խթանման միջոցառումներ իրականացնելու համար:

5. Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներ: Պետական կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է տարածքային համաչափ զարգացման ապահովումը: Հայաստանում տրանսպորտային միջոցների, զբոսաշրջային օպերատորների, հյուրանոցային, սննդի և զվարճանքի օբյեկտների, ինչպես նաև այլ զբոսաշրջային ենթակառուցվածքների մեծամասնությունը կենտրոնացած է Երևանում: Ներկայումս զբոսաշրջությունից ծագած եկամուտների շատ փոքր մասն են փոխանցվում մարզեր, ինչը չի արդարացնում նույնիսկ ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված զբոսաշրջության պետական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը՝ համաչափ տարածքային զարգացումը, չնայած նրան, որ Հայաստանի այլ համայնքներում առկա է զբոսաշրջային գործունեության զարգացման և ծավալման մեծ ներուժ:

6. Հյուրընկալության ոլորտում առկա հիմնախնդիրները: Հյուրընկալության ոլորտը զբոսաշրջության հիմնարար տարրերից մեկն է: Հյուրանոցային տնտեսության օբյեկտները զբոսաշրջային փաթեթների հիմնական մասն են և գտնվում են զբոսաշրջիկների համար առաջնային ուշադրության կենտրոնում, որոնք առավելագույնս պետք է իրենց գնային և որակական հատկանիշներով ներդաշնակ լինեն և բավարարեն զբոսաշրջիկի պահանջմունքները և սպասելիքները: Տարածաշրջանում մրցունակ գին ձևավորելու համար անհրաժեշտ է պետական միջամտություն: Ինտեգրումը համաշխարհային հայտնի հյուրանոցային ցանցերին Հայաստան կներմուծի սպասարկման որակի նոր չափանիշներ և ավելի գրավիչ ու վստա-

հություն ներշնչող կլինի օտարերկրյա զբոսաշրջիկների համար, ինչպես նաև առողջ մրցակցային միջավայր կստեղծի տեղի շուկայում:

7. Հասարակական սննդի, մշակութային, ժամանցի օբյեկտներ: Սնունդը զբոսաշրջության կարևոր նախապայմաններից է: Հայաստանն ունի յուրօրինակ համեղ ավանդական խոհանոց, սակայն շատ ռեստորաններում և սննդի օբյեկտներում սանիտարահիգենիկ պայմանները և սպասարկման մակարդակը բավականին ցածր են՝ հատկապես Երևանից դուրս: Չի գործում որակի վերահսկման համակարգը: Բացի այդ, չկան համաշխարհային համբավ ունեցող և օտարերկրացիների մոտ նախապատվություն վայելող այլընտրանքային խոհանոցների առկայություն և արագ սննդի սպասարկման հայտնի ապրանքանիշեր:

8. Տրանսպորտի հիմնախնդիրը: Ներկայումս ՀՀ զբոսաշրջային այցելությունները իրականացվում են հիմնականում օդային տրասպորտի միջոցով: Տարածաշրջանի այլ ուղղությունների համեմատությամբ օդային ուղևորափոխադրման ծախսերը բավականին բարձր են, ճանապարհային ցանցը սահմանափակ է, ուղիղ չվերթները թիրախային շուկաներից շատ քիչ են, իսկ թռիչքի ժամանակացույցերը՝ (մասնավորապես դեպի արևելյան Եվրոպա) անհարմար: Օդային փոխադրման վճարները ակնհայտորեն բարձր են և զբոսաշրջիկները ենթարկվում են երկու տեսակի հարկման (մուտքի արտոնագրի տուրք, ելքի (մեկնման) տուրք): Անհրաժեշտ է ընդունել «բաց երկնքի» քաղաքականություն՝ խրախուսելով օդային փոխադրողների ավելի մեծ քանակությունը, ավելի լայն ցանցը և առողջ մրցակցությունը:

Ամփոփելով արձանագրենք, որ բարձրացված հարցերը օրակարգային են և պահանջում են հետևողական աշխա-

տանք, որի արդյունքում կունենանք զարգացած ենթակառուցվածքներ, որոնք ոչ միայն կարևոր են զբոսաշրջության, այլ ողջ տնտեսության զարգացման տեսանկյունից: Դրանք կարող են նպաստել հասարակության բարեկեցության բարձրացման գործընթացին: Այս ամենը հաշվի առնելու և համալիր լուծում տալու դեպքում, կստեղծվեն իրական և ամուր հիմքեր՝ Հայաստանի զբոսաշրջային արդյունքը միջազգային հանրությանը պատշաճ ներկայացնելու համար: Վերոնշյալ խնդիրների լուծման արդյունքում կմեծանա զբոսաշրջության տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում:

Գրականություն

1. Հայաստան միջազգային այցելությունների հետազոտություն սեպտեմբեր 2006թ. – օգոստոս 2007թ. արդյունքների հաշվետվություն, Երևան, 2007:
2. Հայաստանն ըստ 2011թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, Մամուլի հաղորդագրություն, Երևան, 07 մարտի 2011թ.:
3. Foreign Tour Operators' Survey Reporting Tables, USAID, CAPS. March, 2010
4. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Պաշտոնական տեղեկագիր 6/305/, Երևան, 2004:
5. Հարությունյան Շ. Լ., Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն. - Երևան, 2004:

ԱՐԴՅՈՔ ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆԵՆ ՆԱԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՉԱՓԱՆԻՇԸ

Վահան Սահակյան

Ցանկացած երկրում գործարար միջավայրի վիճակը վերլուծելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել փոքր և միջին ձեռնարկատիրությանը, նրա մասնաբաժնին, զարգացման հնարավորություններին և ՓՄՁ պետական աջակցությանը: Ըստ էության, բոլոր երկրներում մշակվել և իրականացվում են գործարար միջավայրի զարգացման հատուկ պետական քաղաքականություն և ռազմավարություն, իսկ մի շարք երկրներում, նաև ՀՀ-ում, ընդունվել է ՓՄՁ-ների զարգացման վերաբերյալ օրենք[1], որոնք կարգավորում են դրանց գործունեությունը և նպաստում ոլորտի զարգացմանը: Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը հիմնականում կանխորոշում է տնտեսական աճի տեմպերը՝ համախառն ներքին արդյունքի կառուցվածքում կազմելով 50-60%, իսկ որոշ ճյուղերում՝ մինչև 70-80%[2]: ՀՀ համախառն ներքին արդյունքում ՓՄՁ տեսակարար կշիռը 2009 թ.-ին կազմել է 42.5%՝ 2008 թ.-ի 41.7%-ի և 2007 թ.-ի 41.0%-ի դիմաց:

ՀՀ գործարար միջավայրի ընթացիկ հիմնախնդիրների բացահայտման նպատակով մեր կողմից անցկացվել է հարցում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

---

[1] «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2000 թվականի դեկտեմբերի 5-ին:

[2] Jobber David H., Lancaster Geoff M. Selling and Sales Management, 5th edition, Harlow, 2000, p. 64.

տարբեր ոլորտների 300-ից ավելի գործարարների և ընկերությունների ղեկավարների շրջանում: Հարցման հիմնական նպատակն էր բացահայտել ընկերությունների կողմից կարևորվող ներկայիս հիմնախնդիրները: Հարցման արդյունքների ամփոփ վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս ՀՀ-ում գործարարության զարգացմանը խոչընդոտում են ներքին շուկայի ցածր պահանջարկը, մի շարք ֆինանսական և վարչարարական խնդիրներ: Մեր կողմից անցկացված հետազոտության համաձայն՝ ՀՀ և ԼՂՀ ընկերությունների ղեկավարների 75 %-ը խիստ անհրաժեշտ են համարում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների իրականացումը:

Գծապատկեր 1.1. Ինչպե՞ս կգնահատեիք հետևյալ գործոնների ազդեցությունը ընկերության գործունեության վրա



Գծապատկեր 1.2. ՀՀ և ԼՂՀ գործարար միջավայրի վրա բացասաբար ազդող գործոնների տարանջատումը



«Ինչպե՞ս կգնահատեիք հետևյալ գործոնների ազդեցությունը ընկերության գործունեության վրա» հարցին (Գծապատկեր 1.1), որտեղ 1-ը՝ «Խիստ բացասական», 5-ը՝ «Խիստ դրական», 0՝ «դժվարանում եմ պատասխանել», առավելագույն քանակով «Խիստ բացասական» կամ «Բացասական» գնահատականներ ստացած գործոններն են արտարժույթի փոխարժեքի տատանումները, դատական համակարգի անկատարությունը, սեփականության իրավունքի պաշտպանությունը, արտահանման և արտասահմանում մարկետինգի օժանդակումը, ֆինանսավորման մատչելի ուղիների պակասը:

Նշված գործոնները խոչընդոտում են ընկերությունների բնականոն զարգացմանը: Վերոնշյալ բացասական գործոննե-

րի վերացումը երկարաժամկետ կտրվածքում լուրջ խթան կհանդիսանա ՀՀ-ում գործարար միջավայրի բարելավման առումով: Սակայն, այս հարցի պատասխանների խորքային վերլուծությունը հայտ բերեց ևս մեկ փոփոխականի բացահայտում, որն էականորեն կարող է բարձրացնել գործարարությանն ուղղված ջանքերի արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ գործարարությանը խոչընդոտող գործոնները տարբեր են՝ կախված տվյալ ընկերության աշխարհագրական դիրքից:

Այսպես՝ գծապատկեր 1.2-ում տարանջատված են ՀՀ-ում և ԼՂՀ-ում գործող ընկերությունների պատասխանները: ՀՀ-ում գործող ընկերությունները «Խիստ բացասական» կամ «Բացասական» գնահատականներ են տվել. «Կոռուպցիա»՝ 58 %, «Ֆինանսավորման մատչելի ուղիները»՝ 55% և «Արտահանման մարկետինգի օժանդակումը»՝ 45 %: Իսկ ԼՂՀ-ում գործող ընկերությունների ղեկավարների 55%-ը նշել են որպես ամենաբացասական գործոն «Արժույթի փոխարժեքի տատանումները»: ԼՂՀ ընկերությունների համար ամենաբացասական գործոնների շարքին են պատկանում նաև «Հարկերի չափը և հարկային վարչարարությունը» և «Արտահանման օժանդակումը»՝ համապատասխանաբար 51% և 33%: Այսպիսով՝ գործարարության բարելավմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար: Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը առանձին հանրապետություններ են, որտեղ գործում են տարբեր կառավարությունների կողմից մշակված տարբեր ռազմավարություններ, սակայն առանձին գործոնների մասով ևս, նույն հանրապետության

տարբեր շրջաններում գրանցվել են տարբեր պատասխաններ: Օրինակ, ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ-ում գործարարության վրա ամենաբացասական ազդեցություն ունեցող գործոնը արժույթի փոխարժեքի տատանումներն են: Այս գործոնի գնահատումները Բերձորի շրջանում ստացել են համեմատաբար ավելի բարձր կամ դրական գնահատականներ, քան օրինակ՝ Շուշիի շրջանում, որտեղ հարցման մասնակիցների 70 %-ից ավելին տվել են «Խիստ բացասական» կամ «Բացասական» գնահատականը (Աղյուսակ 1.1):

Աղյուսակ 1.1. Արժույթի փոխարժեքի տատանումների ազդեցության գնահատումները ըստ ԼՂՀ շրջանների

	Գնահատականներ					
Շրջաններ	**1**	**2**	**3**	**4**	**5**	**0**
Շուշիի շրջան	29%	43%	14%	7%	7%	0%
Մարտունու շրջան	27%	18%	27%	0%	0%	27%
Մարտակերտի շրջան	32%	29%	18%	14%	0%	7%
Հադրութի շրջան	15%	40%	45%	0%	0%	0%
Բերձորի շրջան	0%	31%	47%	22%	0%	0%

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի ընկերության չափից և գործունեության ոլորտի փոփոխականներից, գործարարության բարելավման ռազմավարությունների մշակման գործընթացում պետք է հաշվի առնել նաև տվյալ ընկերության գործունեության վայրի տարածքային խնդիրները: Մեր կարծիքով ՀՀ կառավարության ջանքերը չպետք է

սահմանափակվեն միայն այնպիսի համակարգային խնդիրնե-
րի լուծմամբ, ինչպիսիք են կոռուպցիայի վերացումը և վարչա-
րարական գործընթացների բարելավումը: Կարճաժամկետ
կտրվածքով տվյալ տարածքում հրամայական խնդիրերի բա-
րելավումը էականորեն կբարձրացնի տնտեսական ակտիվու-
թյունը և ընկերությունների բնականոն աշխատանքը:

ОБ ОДНОЙ ТЕОРЕМЕ ЕДИНСТВЕННОСТИ

Овсанна Мурадян

Существует ряд работ различных авторов, в которых изучались такие вопросы полноты систем, где в расчет, наряду с близостью приближающего агрегата к приближаемой функции, принимались величины коэффициентов приближающего агрегата. Первой работой, трактовавшей вопросы учета величин коэффициентов приближающих агрегатов с общей точки зрения функционального анализа явилась статья Дейвиса и Фань – Цзи [1]. Дальнейшее развитие общая теория аппроксимационных процессов получила в работах С.Я. Хавинсона [2], [3] и т.д.

Известно, что изучение полноты системы в банаховом пространстве часто можно свести к рассмотрению теорем единственности теории аналитических функций. Подобно этому, исследование вопросов о полноте, учитывающей величины коэффициентов, связано с такими теоремами единственности теории аналитических функций, когда заключение $F(z) \equiv 0$ делается исходя из того, что $F(z)$ достаточно мала в определенных точках. Имеется довольно много теорем единственности в этом направлении для тех или иных классов функций и для различных способов убывания на различных множествах (линии, последовательности точек и т.д.). Такие теоремы единственности отражают то явление,

когда аналитическая функция, имеющая определенный рост, не может слишком быстро убывать.

Изложение ряда результатов в этом направлении для целых функций или функций аналитических в полуплоскости имеется в монографиях [4], [5], [6], [7], а также в статьях [8], [9], [10].

В последних работах для решения исследуемых задач важным шагом являются теоремы единственности, представляющие самостоятельный интерес.

Доказательство основной леммы ([8], стр. 547) базируется на методе перевала (saddle point method) - по мнению самих же авторов довольно длинное.

Мы предлагаем другое доказательство, используя конформные отображения и понятие гармонической меры.

Пусть D – некоторая область, а E - некоторое множество, расположенное на границе этой области. Обозначим через $\omega(z,E,D)$ решение задачи Дирихле в области D с граничными данными, равными единице на множестве E и нулю на остальной части границы D (если конечно, такое решение существует). Функцию $\omega(z,E,D)$ мы назовем гармонической мерой множества E относительно области D в точке z .

<u>Теорема.</u> Пусть D – выпуклая область, а E – дуга граничной кривой этой области. Тогда

$$\omega\left(z,E,D\right) \le \frac{1}{\pi}\varphi\left(z,E,D\right),$$

где $\varphi(z,E,D)$ – угол, под которым дуга E видна из точки z. Если D - полуплоскость, то неравенство обращается в равенство.

Для оценок аналитических функций гармоническая мера применяется с помощью теоремы о двух константах.

<u>Теорема.</u> Пусть функция $f(z)$ регулярна в области D с границей C, а

E – некоторое множество, лежащее на C. Если

$$\overline{\lim_{z\to\zeta}}|f(z)|<m\ (\zeta\in \mathrm{E}),\qquad \overline{\lim_{z\to\zeta}}|f(z)|<M\quad (\zeta\in \mathrm{C},\ \zeta\overline{\in}\mathrm{E}),$$

то $\ln|f(z)|<\omega(z,E,D)\ln m+(1-\omega(z,E,D))\ln M,\ \mathrm{z}\in \mathrm{D}$.

Основное место в настоящей статье занимает рассмотрение вопросов единственности такого рода функций, имеющих вид

$$G(s)=\int_{\gamma} e^{s\zeta}\,d\mu(\zeta),$$

где γ гладкая дуга находится в левой полуплоскости, кончается в точке нуль и в каждой своей точке составляет с горизонталью угол $\alpha<\frac{1}{2}\pi$, μ – комплексная борелевская мера на γ.

В работе [8] решение поставленной задачи основано на следующей лемме:

Основная лемма (рост вдоль положительной действительной оси).

Пусть γ дуга ограниченного наклона кончается в точке 0, μ – комплексная борелевская мера со следующим свойством: существуют положительные константы δ и η и

последовательность $B_k \to \infty$ положительных чисел, для которых $G = Ld\mu$ преобразование Лапласа

$$G(\sigma) = 0(e^{-\delta\sigma}) \text{ на } \bigcup [B_k, (1+\eta)B_k].$$

Тогда μ в окрестности точки 0 обращается в нуль.

Основной способ доказательства – преобразование Лапласа меры на дуге.

Тогда

$$G(s) = \int_\gamma e^{s\zeta} d\mu(\zeta)$$

целая функция экспонециального типа ограничена в угле (рис.1).



Рис.1

$$A(\beta) : |\arg s| < \beta = \frac{1}{2}\pi - \alpha$$

Действительно, $\zeta = re^{i\varphi}$, $s=\rho e^{i\theta}$, $s\zeta=r\rho e^{i(\varphi+\theta)}$.

Имеем $\frac{\pi}{2} + \beta \le \varphi \le \frac{3}{2}\pi - \beta$, отсюда $\cos(\varphi+\theta) \le 0$.

Используя цикл конформных отображений приведем сектор с разрезом на стандартную область (рис.2).



Рис. 2

а) функция $w=\left(\dfrac{z}{r}\right)^{\frac{2\pi}{\varphi}}$ конформно отображает сектор на единичный круг с двумя разрезами,

б) функция $w_1 = i\dfrac{t+1}{1-t}$ (t=w) конформно отображает круг с двумя разрезами на верхнюю полуплоскоть с двумя разрезами,

в) функция $w_2=\sqrt{\dfrac{w_1^2+b^2}{w_1^2+1}}$ конформно отображает верхнюю полуплоскость с разрезами на верхнюю полуплоскость.

Имеем

$$a = w(B_k) = \left[\frac{B_k}{(1+\eta)B_k}\right]^{\frac{2\pi}{\varphi}} = \frac{1}{(1+\eta)^{\frac{2\pi}{\varphi}}}$$

$$w_1(a) = i\frac{1+\dfrac{1}{(1+\eta)^{2\pi/\varphi}}}{1-\dfrac{1}{(1+\eta)^{2\pi/\varphi}}} = i\frac{1+(1+\eta)^{2\pi/\varphi}}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}$$

$$w_2=\sqrt{\frac{w_1^2+b^2}{w_1^2+1}}, \quad \text{b}=\frac{1+(1+\eta)^{2\pi/\varphi}}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}.$$

Имеем

$$w_2=\sqrt{\frac{\left(\frac{t+1}{1-t}\right)^2-\left[\frac{1+(1+\eta)^{2\pi/\varphi}}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}\right]^2}{\left(\frac{t+1}{1-t}\right)^2-1}},$$

Используя правило Лопиталя, можно показать, что

$$\lim_{t\to 0}\frac{\left(\frac{t+1}{t-1}\right)^2-1}{4t}=1$$

Поэтому

$$w_2=\sqrt{\frac{4t+1-\left[\frac{(1+\eta)^{2\pi/\varphi}+1}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}\right]^2}{4t}}$$

Обозначив $1-\left(\frac{(1+\eta)^{2\pi/\varphi}+1}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}\right)^2=-A,$ A>0, получим

$$w_2=\sqrt{1-\frac{A}{4t}}=i\sqrt{\frac{A-4t}{4t}}=\frac{i\sqrt{A}}{2\sqrt{t}}\sqrt{1-\frac{A}{4t}}\sim\frac{i\sqrt{A}}{2}\frac{1-\frac{2}{A}t}{\sqrt{t}}=\frac{i}{2}\frac{A-2t}{\sqrt{t}\sqrt{A}}\sim\frac{1}{2}\sqrt{\frac{A}{t}}$$

$$1-\frac{(1+\eta)^{2\pi/\varphi}+1}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}=\frac{-2}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}=\frac{-2}{\frac{2\pi}{\varphi}\eta}=-\frac{\varphi}{\pi\eta}.$$

Отсюда $1+\frac{\varphi}{\pi\eta}=1-\left(\frac{(1+\eta)^{2\pi/\varphi}+1}{(1+\eta)^{2\pi/\varphi}-1}\right),$ A=$\left(1+\frac{\varphi}{\pi\eta}\right)^2-1.$

Найдем гармоническую меру относительно последней области (рис. 3).



Рис.3

$$1=|w_2|tg\frac{\alpha}{2},\ \ tg\frac{\alpha}{2}=\frac{1}{|w_2|}\quad \frac{\alpha}{2}=arctg\frac{1}{|w_2|},\ \alpha=2arctg\frac{1}{|w_2|},\ \alpha\sim\frac{2}{|w_2|}=\frac{2}{\frac{1}{2}\sqrt{\frac{A}{t}}}$$

$$\alpha\sim 4\sqrt{\frac{\mathrm{t}}{\mathrm{A}}}$$

$$\omega(w_2)=\frac{a}{\pi}=\frac{4}{\pi}\frac{\left(\frac{x}{r}\right)^{\pi/\varphi}}{\sqrt{\left(1+\frac{\varphi}{\pi\eta}\right)^2-1}}$$

В связи с ограниченностью данной функции и ее роста вдоль положительной действительной оси заключение теоремы о двух константах примет вид

$$\ln|G(x)|\le-\frac{4}{\pi}\delta\sigma\frac{\left(\frac{x}{r}\right)^{\pi/\varphi}}{\sqrt{\left(1+\frac{\varphi}{\pi\eta}\right)^2-1}}\qquad (*)$$

Имеем (рис. 4).



Рис.4

$$B_{k+1} \le x \le (1+\eta)B_{k+1} = r$$

$$\frac{\pi}{\varphi} > 1, \text{ поэтому } \left(\frac{x}{B_{k+1}}\right)^{\pi/\varphi} \ge \frac{x}{B_{k+1}},$$

откуда $-\left(\frac{x}{B_{k+1}}\right)^{\pi/\varphi} \le -\frac{x}{B_{k+1}}, \quad \left(\frac{x}{r}\right)^{\pi/\varphi} = \left(\frac{x}{(1+\eta)B_{k+1}}\right)^{\pi/\varphi} = \frac{1}{(1+\eta)^{\pi/\varphi}}\left(\frac{x}{B_{k+1}}\right)^{\pi/\varphi}$

Из (*) получаем

$$\ln\left|G(x)\right| < \frac{-4\delta\sigma x}{(1+\eta)^{\pi/\varphi} B_{k+1}\pi\sqrt{\left(1+\frac{\varphi}{\pi\eta}\right)^2 - 1}}.$$

Окончательно, $\ln\left|G(x)\right| < -Cx,$ где

$$C = \frac{4\delta\sigma}{\pi B_{k+1}(1+\eta)^{\pi/\varphi}\sqrt{\left(1+\frac{\varphi}{\pi\eta}\right)^2 - 1}}.$$

Полученная оценка гарантирует использование леммы 3, чем и заканчивается доказательство.

Лемма 3. Пусть E – замкнутое множество, не разбивающее плоскость и не имеющее внутренних точек.

Пусть целая функция $F(\zeta)$ представима вне E интегралом типа Коши-Стильтьеса

$$F(\zeta)=\int_E \frac{d\mu(u)}{\zeta-u},$$

где мера μ, заданная на E, имеет конечную вариацию

$$\int_E |d\mu| < +\infty .$$

И если $\infty \in E$, то $\mu(\infty)=0$. Тогда $\mu \equiv 0$.

Автор признателен профессору С. Рафаеляну за полезное обсуждение работы.

Ключевые слова: гармоническая функция, гармоническая мера, комплексная борелевская мера, конформные отображения, метод перевала

Литература

1. Ky Fan and Ph.Davis. Complete sequences and approximation in normed linear spaces, Duke Math, journ, 24, N2, 1957, pp 189-192
2. Хавинсон С.Я. Некоторые вопросы полноты систем. ДАН СССР, 137, N4,1961, 793-796 с.
3. Хавинсон С.Я. О понятии полноты, учитывающем величины коэффициентов аппроксимирующих полиномов. Изв. АН Арм.ССР, сер.матем. У1,N 2-3, 1971, 221-234с.
4. Левин Б.Я. Распределение корней целых функций. ГТТИ, М., 1956, 630 с.
5. N.Levinson, Gap and density theorems, New York, 1941, p.246

6. A.P.Boas, Entire Functions, New York, 1954, p.275
7. Евграфов М.А. Аналитические функции. Москва, 1970. 423с.
8. M.Dixon and J.Korevaar. Nonspanning sets of powers on curves: Analyticity theorem. Duke Mathematical Journal, Vol.45,No.3, 1978, pp 543-558.
9. A.F.Leont'ev. On the completeness of a system of exponentials on a curve, Sibirsk.Mat.Z.15,1974, pp 1103-1114
10. Мурадян О.А. О росте коэффициентов аппроксимирующих агрегатов в теореме Мюнца.Изв. АН Арм.ССР, 8, N 1, 1973, 70-87с.

ПРЕДСТАВЛЕНИЕ ХИМИЧЕСКИХ СТРУКТУР В АРИФМЕТИЧЕСКИХ ГРАФАХ

Армен Петросян

Одной из актуальных проблем современной химии является проблема установления связи между структурой и свойствами молекул [1]. Такая связь позволяет получить информационную оценку структуры химического графа молекулы, как меры её неоднородности или разнообразия. Например, из двух графов G_1 и G_2 с равным числом вершин, граф G_1 является более сложным, чем G_2, если множество вершин графа G_1 разбивается на большее число классов эквивалентности, чем в случае графа G_2. Следует отметить, что информационное содержание графа неоднозначно и зависит от способа, с помощью которого на множестве было определено отношение эквивалентности. Особый интерес для химиков представляет изоморфизм и кодирование графов [2] - направление связания с теорией арифметических графов [3].

Для удобства изложения последующих вопросов приведём некоторые определения, связанные с понятием арифметического графа. Согласно [3,4,5] любой конечный граф может быть закодирован с помощью целых чисел и представлен в некоторой стандартной теоретико-числовой форме, известной как арифметический граф .

Статистические свойства арифметических графов, установленные в [6], создали соответствующие предпосылки для изучения информационных свойств химических графов.

Определение 1. Арифметическим графом называется пара G (N,M), где N-множество вершин графа, (n_i, n_j)- его ребро, если $n_i + n_j \in M$; M - порождающее множество, а число $n_i + n_j = m_r$ - вес ребра $(n_i + n_j)$. В работе [4] было показано, что понятия арифметического графа (а.г.) и графа в классическом смысле [6] эквивалентны. Для отличия от обычных графов, а.г. обозначим G (N/M).

Из определения 1 возникла идея введения специального отношения эквивалентности над ребрами химического графа, под которым понимается молекулярная структура, где атомы представляются вершинами, а ковалентные химические связи - ребрами. Такой граф описывает связанность атомов в молекуле независимо от метрических свойств пространства, в котором она существует. Поэтому химические графы являются топологическими представлениями молекулярных структур. В дальнейшем будем рассматривать помеченные химические графы (ПХГ), в котором атомы помечены индексами из натуральных чисел { 1,2,….,p } произвольным образом. При таком подходе множество ребер (ПХГ) можно разбить на подклассы, состоящие из ребер одного типа (a,b), где a,b-обозначения атомов. В частности, существуют химические графы, состоящие всего из одного типа ребра. Например, для метана (CH_4) имеются 4 ребра типа (CH) и соответствующий класс эквивалентности - единственный K (CH).

Для удобства понимания последующего материала приведём пример химического графа бутанол-1 [Рис.1], на котором будет иллюстрироваться предложенный метод.



Рис.2



Рис. 1

На рис.2 представлен (ПХГ) бутанол-1 с числом вершин p=15, в котором число атомов водорода 10, углерода - 4, кислорода - 1. Согласно определению 4 число классов эквивалентности в L равно 4 (по числу типов ковалентных связей: (CH), (OH), (CO), (CC)). Соответствующие классы эквивалентности обозначим: $K_{(CH)}, K_{(OH)}, K_{(CO)}, K_{(CC)}$. Общее число ребер q в L равно 14.

$$q = |K_{(CH)}| + |K_{(OH)}| + |K_{(CO)}| + |K_{(CC)}| = 9 + 1 + 1 + 3 = 14$$

Следует отметить, что предложенный метод является общим и основан на теории арифметических графов [3].

Литература

1. Химические приложения топологии и теории графов. Под редакцией Кинга, Москва, “Мир", 1987г., .стр.560.
2. Lasky J., Henderson J. W. Republic Scence, 1982, Nov., p. 79.
3. Григорян Ю.Г. Теоретико-числовые, алгебраические и геометрические основы арифметических графов. Автореф. дис. д-ра физ.- мат. Наук / РАН. Вычисл. Центр., М., 1992, 135с.

4. Григорян Ю.Г., Маноян Г.К. Некоторые вопросы арифметической интерпретации неориентированных графов. Кибернетика, 1977, N3, с. 129-131.
5. Григорян Ю.Г. Геометрия арифметических графов. Кибернетика, 1982, N4, с. 1-4.
6. Григорян Ю.Г. Классификация и статистические свойства арифметических графов. Кибернетика, 1979, N6, с. 9-12.
7. Харари Ф. Теория графов. М., “Мир", 1973г.
8. Магнусон В., Д. Харрис, Бейсак С. Химические приложения топологии и теории графов. Москва, “Мир", 1987г., с. 206-221.
9. Григорян Ю.Г. Группа арифметических автоморфизмов простых циклов. Кибернетика, 1990, N4, с. 9-15.

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Արմինե Զոբանյան

Հայաստանի Հանրապետությունն անկախության առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ դատաիրավական բարեփոխումների արդիականացմանը՝ ձգտելով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացմանը, ինչը նախատեսում է անկախ և կենսունակ դատաիրավական համակարգերի առկայություն:

Ինչպես գիտենք, դատաիրավական բարեփոխումների հիմնական խնդիրն արդար և արդյունավետ դատական իշխանության կայացումն է և դրանով պայմանավորված իրավական ու դատական բարեփոխումները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության գլխավոր առաջնահերթություններից՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Սակայն մեկ ուղղությամբ կատարված բարեփոխումները կարող են իմաստազուրկ կամ նվազ արդյունավետ լինել, եթե այդ բարեփոխումները չկատարվեն փոխկապակցված այլ ուղղություններով: Հետևաբար, խնդրի արդյունավետ լուծումը պահանջում է համակարգային մոտեցում՝ զուգահեռաբար բոլոր ուղղություններով, մասնավորապես՝ կատարելագործել և խթանել մեդիա-

ցիայի[1] և արբիտրաժի[2] միջոցով վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները:

Ներկայացված թեման դատահիրավական բարեփոխումների համակարգում արդիական է, որի գործընթացները դեռևս կայացման փուլում են, որտեղ առավել կարևորություն է ստանում իշխանությունների տարանջատման մեխանիզմում դատական իշխանության և այլընտրանքային ինստիտուտների հետ կապված հիմնահարցերի հետազոտությունը:

Թեմայում արծարծված են վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ, ինչպես օրինակ՝ արբիտրաժի, ֆիանանսական արբիտրաժի, ֆինանսական համակարգի հաշտարարի, մեդիացիայի, կոլեկտիվ աշխատանքային վեճերի միջնորդական կարգավորման և մի շարք այլ նմանատիպ հարցեր:

Ի տարբերություն մնացած վեճերի լուծման այլընտրանքային եղանակների, համառոտ ներկայացնենք մեդիացիայի, ֆինանսական արբիտրաժի, ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի և կոլեկտիվ աշխատանքային վեճերի մինչդատական կարգավորման գործունեությունը.

- Մեդիացիան վեճերի այլընտրանքային լուծման արտադատական մեթոդ է երրորդ՝ անկողմնակալ և չեզոք կողմի մասնակցությամբ՝ մեդիատորի, որն օգնում է վեճի շրջանակներում ներգրավված և մեդիացիային կամավոր մասնակցող կողմերին՝ մշակելու

---

[1] Արմինե Չոբանյան, «Մեդիացիան որպես վեճերի քննության այլընտրանքային եղանակների համակցություն», «Դատական իշխանություն» ամսագիր, 12/161, Երևան, 2012թ,. էջ 86:

[2] Արմինե Չոբանյան, «Առևտրային արբիտրաժը Հայաստանի Հանրապետությունում», «Պետություն և Իրավունք» ամսագիր, թիվ 4 (58), Երևան, 2012թ., էջ 75:
Արմինե Չոբանյան, «Վեճերի լուծման այլընտրանքային տարբերակները և դրանց կայացումը Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն» ամսագիր, 4-5/93-94, Երևան, 2007թ., էջ 95:

վեճի լուծման փոխադարձաբար ընդունելի համաձայնություն: Այլ խոսքով, մեդիացիան չեզոք միջնորդի մասնակցությամբ բանակցությունների առանձնահատուկ ձև է, որի նպատակը կառուցողական հանգուցալուծումն է:

- Ֆինանսական արբիտրաժի իրավասությանն է պատկանում կամայական գումարի ֆինանսական վեճերի քննությունը, որն ընդունվել է 2010 թվականի մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետության բանկերի միության խորհրդի կողմից:
- Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ, ի տարբերություն ֆինանսական արբիտրաժի, կարող են դիմել միայն ֆիզիկական անձինք, որի դեպքում վեճի առարկա հանդիսացող գումարի մեծությունը չի գերազանցում 10 (տաս) միլիոն ՀՀ դրամը: «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2008 թվականի հունիսի 17-ին և ուժի մեջ է մտել նույն թվականի օգոստոսի 2-ին:
- Ելնելով շուկայական հարաբերությունների իրավական ապահովման սկզբունքներից, օրենսդիրը սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում կարևորագույն նշանակություն է տալիս աշխատանքային վեճերի լուծման և իրավունքների պաշտպանության նոր ինստիտուտի կայացմանը, որը հնարավորություն է տալիս աշխատողների և գործատուների միջև ծագած վեճերի կարգավորում խաղաղ ճանապարհով:

Թեմայում արծարծված հարցերը մեր կողմից ուսումնասիրվում և մշակվում են արդեն բավականին երկար տարիներ: Որոշ հարցեր ինչ-ինչ պատճառներով դուրս էին մնացել պետական կառույցների ուշադրությունից: Ներկայումս Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրում ներկայացված է դրանց կատարման ժամանակացույցը: Դա լրացուցիչ կարգով ապացուցում է թեմայի առավել քան արդիական լինելը:

Ի վերջո արդար և արդյունավետ դատական իշխանությունն իրավունքի գերակայության, արդար դատաքննության և արդյունավետ արդարադատության կարևորագույն նախադրյալներից է, որին ձգտում է մարդու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք հռչակած ամեն մի պետություն:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարատ Ափովմյան

Աշխատանքային հարաբերությունների բազմազանությունը, աշխատողի և գործատուի փոխհարաբերությունների երբեմն հակասական բնույթը, ինչպես նաև աշխատողի և գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության չիմացությունը, գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության նորմերի խախտումները և տնտեսական բարդությունները առաջացնում են աշխատանքային վեճեր՝ անհատական և կոլեկտիվ:

Անհատական աշխատանքային վեճերի լուծման ընթացակարգը Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ) և Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) տարբերվում են:

Ռուսաստանում անհատական աշխատանքային վեճերի լուծման իրավական համակարգին բնորոշ է աշխատանքային վեճերի հանձնաժողովների (ԱՎՀ) կողմից վեճերի լուծման մինչդատական ընթացակարգը: ՌԴ աշխատանքային օրենսգրքի 382-րդ հոդվածի համաձայն անհատական աշխատանքային վեճերը լուծվում են աշխատանքային վեճերի հանձնաժողովների և դատարանների կողմից: Նույն օրենսգրքի 384-րդ հոդվածի համաձայն ԱՎՀ-ները ձևավորվում են աշխատողների (նրանց ներկայացուցչական մարմնի) և/կամ գործատուի (կազմակերպության, անհատ ձեռներեցի) նախաձեռնությամբ՝ աշխատողների և գործատուի ներկայացուցիչների հավասար թվաքանակով: ԱՎՀ-ն դիտարկում է անհատական

աշխատանքային վեճը, եթե աշխատողը ինքնուրույնաբար կամ իր ներկայացուցչի մասնակցությամբ չի կարգավորել տարաձայնությունները գործատուի հետ անմիջական բանակցությունների միջոցով:

Փաստորեն, ՌԴ աշխատանքային օրենսգիրքը հորդորում է աշխատողներին հարթել գործատուների հետ իրենց տարաձայնությունները բանակցությունների միջոցով և հետո նոր դիմել ԱՎՀ-ին: Աշխատողը կարող է դիմել հանձնաժողովին եռամսյա ժամկետում՝ այն օրվանից, երբ նա իմացել է կամ պետք է իմանար իր իրավունքի խախտման մասին: Եթե սահմանված ժամկետը բաց է թողնվել հարգելի պատճառներով, ապա ԱՎՀ-ն կարող է այն վերականգնել և լուծել վեճն ըստ էության:

Հանձնաժողովը պարտադիր կերպով գրանցում է աշխատողի դիմումը: ԱՎՀ-ն պարտավոր է լսել անհատական աշխատանքային վեճը՝ դիմումը ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում: Հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի կողմից, այնուհետև հաստատվում է հանձնաժողովի կնիքով:

Հանձնաժողովը որոշումը կայացնում է գաղտնի քվեարկությամբ, նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Հանձնաժողովի որոշման ստորագրված և կնքված պատճենները տրամադրվում են աշխատողին և գործատուին որոշումը կայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում: Հանձնաժողովի որոշումը ենթակա է կատարման եռօրյա ժամկետում՝ բողոքարկման համար նախատեսված տասնօրյա ժամկետի ավարտվելուն պես: Նշված ժամկետում որոշման չկա-

տարման ընթացքում հանձնաժողովը աշխատողին տրամադրում է վկայական, որը համարվում է կատարողական փաստաթուղթ: Վկայականը եռամսյա ժամկետում ներկայացնելու դեպքում հարկադիր կատարողը ապահովում է ԱՎՀ-ի որոշման կիրառումը հարկադիր կարգով:

Դատարաններում անհատական աշխատանքային վեճերը քննվում են աշխատողի, գործատուի կամ արհմիության դիմումների հիման վրա, երբ նրանք համաձայն չեն ԱՎՀ-ի որոշման հետ կամ եթե աշխատողը դիմում է դատարան առանց հանձնաժողովին դիմելու, ինչպես նաև դատախազի դիմումի հիման վրա, եթե հանձնաժողովի որոշումը չի համապատասխանում աշխատանքային օրենսդրության նորմերին:

Ռուսաստանում դատական կարգով քննվում են նաև աշխատանքի ընդունելու մերժման հետ կապված անհատական աշխատանքային վեճերը:

Աշխատողը իրավունք ունի դիմելու դատարան եռամսյա ժամկետում՝ այն օրվանից, երբ նա իմացել է կամ պետք է իմանար իր իրավունքի խախտման մասին, իսկ աշխատանքից ազատման հետ կապված վեճերով՝ ազատման մասին հրամանի օրինակը ստանալու կամ աշխատանքային գրքույկը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Գործատուն իրավունք ունի դիմելու դատարան աշխատողի կողմից պատճառված վնասի հատուցման գործերով՝ վնասի հայտնաբերման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային վեճերը ենթակա են քննության դատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նույն օրենսգրքի 265-րդ հոդվածի համաձայն՝ աշխա-

տանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը նախատեսում է միայն կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման համար:

Փաստորեն օրենսդիրը Հայաստանում անհատական աշխատանքային վեճերի լուծման մինչդատական փուլ չի նախատեսել:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կարապետ Հակոբյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Իրենից մեծ կարևորություն է ներկայացնում քաղաքացիական հասարակության առանցքային ինստիտուտներից մեկը՝ հասարակական միավորումների համակարգը: Իրավունքով պաշտպանվող հասարակական միավորումները քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների հետ կարող են մեծ դերակատարում ունենալ Հայաստանի Հանրապետության զարգացման և տեղի ունեցող գործընթացների վրա: Իրականությունը ցույց է տալիս, որ առանց համապատասխան ինստիտուտների իրավական կարգավորման արդյունավետ մեխանիզմի առկայության քաղաքացիական հասարակության տեսությունը չի կարող վերածվել հասարակական պրակտիկայի:

Այսօր հասարակական-քաղաքացիական ոլորտը հայտնվել է ոչ միայն իրավաբանների, սոցիոլոգների և փիլիսոփաների, այլ նաև հասարակական միավորումների ներկայացուցիչների, քաղաքական գործիչների, լայն հասարակության ուշադրության կենտրոնում: Այդ փաստն ինքնին նշանակալից է, քանի որ հասարակական միավորումների դերը շատ մեծ է մեր հասարակության՝ քաղաքացիական հասարակության վերածվելու գործում:

Հասարակական միավորումները, որոնք շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում, կազմում են այսպես կոչված «երրորդ սեկտորը»: Այս անվանումը փոխառված է

արևմտյան տերմինաբանությունից: Ներկայիս ՀՀ օրենսդրությունը առանձնահատուկ կարգավիճակ է տալիս այնպիսի հասարակական միավորումներին, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, կուսակցությունները և կրոնական կազմակերպությունները: Այս առումով շատ կարևոր է հասարակական միավորումների և պետական մարմինների փոխհարաբերության հիմնախնդիրը: Իշխանությունը պետք է ելնի քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման սկզբունքից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորումը նոր է սկսվում: Կախված նրանից, թե ինչքանով է կատարյալ այդ հարաբերությունների ձևավորման նորմատիվ-իրավական հիմքը, պայմանավորված է նրանց համագործակցության մեխանիզմների ու ընթացակարգերի կենսունակությունն ու կառուցողականությունը, ինչն էլ հանդիսանում է Հայաստանում քաղաքացիական հասարակության բնականոն կենսագործունեության կարևոր գրավականը:

Մեր երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ է ուժեղ, գործունակ պետություն: Ներկայիս իրավիճակն այնպիսին է, որ պետությանն անհրաժեշտ է պաշտպանել քաղաքացիական հասարակության առանձին տարրերի դրսևորումներից, որոնց գործունեությունը կարգավորված չէ իրավունքով: Հասարակություն-պետություն համագործակցությունը դուրս է եկել նոր հարթության վրա, նրանք փոխկապակցված են և փոխօգնության կարիք ունեն:

Հասարակական միավորումների իրավական կարգավիճակին վերաբերող ելակետային նորմերը ամրագրված են ա-

ռաջին հերթին 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

Միավորումներն անհատների շահերի ընդհանրության և օրենքի հիման վրա, կամավոր ստեղծված հասարակական կառույցներ են, որոնց նպատակն անդամների հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարումն է: Հասարակական միավորումները հսկայական դեր ունեն ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության կայացման գործում: Հասարակական միավորումներն իրենց բնույթով բազմազան են: Այսպիսով, Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին մասն ամենից ընդհանուր դրույթն է, որն ամրագրում է անհատների միավորումներ կազմելու իրավունքը: Նշված հոդվա-

ծի 1-ին մասի իրավաբանական բովանդակությունը ենթադրում է երկու իրավական հնարավորություն. ա) յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք. այս իրավունքն անհատական չէ, քանի որ դրա իրականացման համար անհրաժեշտ է այլ անձանց հետ համագործակցություն, որի արդյունքը պետք է լինի միավորում կազմելը, բ) յուրաքանչյուր ոք ունի հասարակական միավորումներին անդամագրվելու իրավունք. այս իրավունքը, ի տարբերություն նախորդի, անհատական է: Անկախ կրոնական, ռասայական, սեռային, լեզվական և այլ հատկանիշներից, յուրաքանչյուրը պետք է ունենա գործող հասարակական միավորումներին միանալու կամ անդամագրվելուց հրաժարվելու, ինչպես նաև՝ դրանցից անարգել դուրս գալու իրավունք: Միավորման իրավունքը մարդկանց հնարավորություն է տալիս իրականացնել այնպիսի խնդիրներ, իրագործել այնպիսի նպատակներ ու շահեր, որոնք հնարավոր չէ իրականացնել անհատապես: Մարդիկ ստեղծում են հասարակական միավորումներ՝ համատեղ ջանքերով իրենց կողմից որոշակի ընդհանուր շահերի իրագործման նպատակով[1]:

[1] Տես ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի.- Եր., «Իրավունք», 2010թ., էջ 318:

ԴԱՏԱԽԱԶԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ամիդա Թադևոսյան
Իրավագիտության մագիստրոս

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որպես ուղենիշ ունենալով քրեական դատավարության ոլորտում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության հայեցակարգային խնդիրը, բովանդակում է մի շարք դատավարական մեխանիզմներ, որոնք կոչված են համակողմանիորեն երաշխավորելու անձի հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Խնդրո առարկա հարցի շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի վարույթին հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորման մեխանիզմների հետազոտությունը: Ինչպես նշում է Ս.Ս. Ամպենովը, վարույթի հանրային մասնակիցներին բացարկ հայտնելը վարույթում ներգրավված մասնավոր մասնակիցների՝ օրենսդրությամբ ամրագրված սուբյեկտիվ միջոցն է վարույթից հեռացնելու իշխանական լիազորություններով օժտված այն սուբյեկտներին, որոնց օբյեկտիվության և անաչառության կապակցությամբ առկա է հիմնավոր կասկած, քանի որ նման դեպքում հանրային մասնակիցները իրենց դատավարական կարգավիճակի ուժով կարող են ազդել գործի ոչ օբյեկտիվ ելքի վրա՝ այդպիսով ոտնահարելով մասնավոր մասնակիցների իրավունքներն ու օրինական շա-

հերը[1]: Նախագծի 6-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ վարույթի հանրային մասնակիցներն են դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը, հետաքննիչը: Սույն հոդվածի շրջանակներում վերլուծության կենթարկվեն քրեական վարույթին դատախազի մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորման կառուցակարգերը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության գործող օրենսգրքով (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) նախատեսված իրավակարգավորումները հետազոտվող ինստիտուտի առումով Նախագծի շրջանակներում էական բովանդակային փոփոխություն չեն կրել: Վարույթին դատախազի մասնակցությունը բացառող հանգամանքները հիմնապես խարսխված են վարույթին նրա անաչառ, անկողմնակալ, երրորդ անձանցից անկախ մասնակցությունը ապահովելու սկզբունքների վրա: Հարկ է նշել, որ ի տարբերություն գործող օրենսգրքի 91-րդ հոդվածի, որը սպառիչ կերպով սահմանում է դատախազի վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների շրջանակը, Նախագծի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, հղում կատարելով 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, սահմանում է, որ դատախազը չի կարող մասնակցել վարույթին, եթե առկա են այլ հանգամանքներ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ վարույթի հետ կապված նրա անկողմնակալության վերաբերյալ: Փաստորեն, նշված դրույթի ուժով Նախագծով քննարկվող հանգամանքների շրջանակը արդարացիորեն չի սահմանափակվել: Միևնույն ժամանակ, վերոգրյալ հանգամանքների առկայության դեպքում, ինչպես

[1] Ампенов С.С., Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: диссертация кандидата юридических наук.- Тюмень, 2010, с.97-98:

ՀՀ քր. դատ. օր.-ով (հոդված 88, մաս 2), այնպես էլ Նախագծով (հոդված 64, մաս 2) դատախազի վրա դրված է դատավարական պարտականություն վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության տիրապետման դեպքում այդ մասին հայտնել վարույթի շահագրգիռ մասնակիցներին, իսկ այն դեպքում, երբ առկա է համոզմունք իր մասնակցությամբ վարույթի բնականոն ընթացքի անհնարինության վերաբերյալ, հայտնել ինքնաբացարկ: Այսպիսով, դատախազը վերոնշյալ նորմի ուժով կրում է ինքնաբացարկ հայտնելու դատավարական պարտականություն, որը չկատարելը պետք է դիտել իբրև վերջինիս կողմից դատավարական խախտում՝ հանգեցնելով համապատասխան դատավարական սանկցիայի կիրառման, այն է՝ վարույթին մասնակցությունից հարկադիր հեռացման: Քննարկվող ինստիտուտի վերաբերյալ համանման դիրքորոշում բազմիցս արտահայտվել է նաև մասնագիտական գրականության մեջ: Ինչպես նշում է ի.գ.թ. Ա. Ս. Տարանը, քրեական դատավարության շրջանակներում բացարկը/վարույթից հեռացնելը վարույթին մասնակցելուց ազատելն է, որի արդյունքում օրենքով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում սուբյեկտը զրկվում է իր դատավարական իրավունքները իրականացնելու հնարավորությունից և կորցնում իր դատավարական կարգավիճակը[2]: Նշված մոտեցումը միանգամայն արդարացված է, քանզի սուբյեկտի նկատմամբ քրեադատավարական սանկցիաներ կիրառվում են վերջինիս կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու, քրեադատավարական պարտականությունները չկատարելու դեպքում, ինչպես օրինակ՝ ինքնաբա-

[2] Таран А.С., Отвод адвоката как юридическая ответственность. // Вектор науки ТГУ. №3(3). 2010, ст. 199.

ցարկ չարամտորեն չհայտնելը: Խնդրո առարկա հարցի շրջանակներում պետք է մեկնաբանել «չարամտորեն» հասկացությունը: Բացատրական բառարաններում այս հասկացությունը սահմանվում է որպես «չարամիտ կերպով, այն է՝ չար դիտավորությամբ կատարված, նենգաբար, չարանենգ»[3]:

Այսպիսով՝ նպատակահարմար ենք համարում, Նախագծի 148-րդ հոդվածով, ի թիվս դատախազի նկատմամբ վարույթից հեռացնելու սանկցիա կիրառելու այլ հիմքերի, նախատեսել նաև Նախագծի 67-րդ հոդվածով ամրագրված վարույթին դատախազի մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության դեպքում չարամտորեն ինքնաբացարկ չհայտնելու հիմքով դատախազին վարույթից հեռացնելը որպես դատավարական սանկցիա:

[3] Աղայան Է. «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան-1976թ., էջ 1156-1157:

Գործող օրենսգրքով և Նախագծով դատախազի մասնակցությունը բացառող հանգամանքների իրավակարգավորումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳԻՐՔ *Հոդված 91. Դատախազին բացարկելը*	**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ** *Հոդված 67. Վարույթին հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքները*
1. Դատախազը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝ 1) առկա է սույն օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը. • դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ. • դատավորը՝ որպես մասնավոր անձ, ականատես է այն փաստերին, որոնք վիճարկվում են դատաքննության ընթացքում. • դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու,	1. Վարույթի հանրային մասնակիցը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե՝ 1) առկա է սույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հանգամանք. • կանխակալ վերաբերմունք ունի վարույթում ներգրավված որևէ անձի նկատմամբ. • որպես մասնավոր անձ ականատես է եղել այն փաստերին, որոնք քննվում են վարույթի ընթացքում. • նա կամ նրա ամուսինը կամ նրանց հետ ազգակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը հանդիսացել, հանդիսանում կամ ողջամտորեն կարող է հանդիսանալ (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) վարույթում ներգրավ-

որ նա կիանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ: Սույն օրենքի իմաստով, անձի հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք. • դատավորը գիտի, որ նա անձամբ կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ: 2) համապատասխան քրեական գործը կամ նյութը քննող դատա-	ված անձ. • անձամբ նա կամ նրա ամուսինը կամ նրանց հետ ազգակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վարույթի էության կամ կողմերից մեկի հետ. • առկա են այլ հանգամանքներ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ վարույթի հետ կապված նրա անկողմնակալության մեջ: 2) համապատասխան վարույթն իրականացնող դատավորի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ: 2. Դատախազի մասնակցությունը մինչդատական վարույթին, ինչպես նաև դատարանում նրա կողմից մեղադրանքը պաշտպանելը համապատասխան վարույթին որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: 3. Համապատասխան վարույթին նախկինում որպես քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննիչ կամ հետաքննության մարմնի պետ մասնակցելը տվյալ վարույթին որպես հանրային մասնակից նրանց հետա-

վորի հետ գտնվում է ազգակցական, կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ: 2. Դատախազի մասնակցությունը քրեական գործի քննությանը, ինչպես նաև դատական նիստում նրա կողմից մեղադրանքը պաշտպանելը համապատասխան քրեական գործով վարույթին որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: 3. Դատախազին հայտնված բացարկը լուծում է վերադաս դատախազը, իսկ դատական նիստին մասնակցելիս՝ համապատասխան դատարանը:	գա մասնակցությունը բացառող հանգամանք չէ:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱՐՃՈՒՄԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիլիթ Զիրոյան

Քրեական դատավարությունն իրականացնող մարմիններ-ը պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպես-զի քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած յուրա-քանչյուր ոք բացահայտվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կա-տարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրա-վունքների և ազատությունների այլ սահմանափակման: Այս խնդիրների իրականացմանը նպատակամղված է նաև քրեա-կան գործի կարճման կամ քրեական հետապնդման դադա-րեցման քրեադատավարական ինստիտուտը: Քրեադատավա-րական գործող օրենսդրությամբ մանրամասն կարգավորված են քրեական գործի կարճմանը և քրեական հետապնդման դադարեցմանը վերաբերող հարցերը: Նախկին օրենսդրու-թյան համեմատությամբ քրեական դատավարության գործող օրենսգրքում նախատեսված են բազմաթիվ երաշխիքներ, ո-րոնք ապահովում են անձի իրավունքների և օրինական շահե-րի պաշտպանությունը:

Որպես կանոն՝ սկսված քրեական գործը պետք է ա-վարտվի կամ դատավճռի կայացմամբ, կամ քրեական գործը կարճելու մասին որոշմամբ: Քրեական գործով նախնական քննությունն ավարտելը հանդիսանում է դատավարական գոր-ծունեության կարևոր էտապ, որն ունի ինքնուրույն նշանակու-

թյուն: Քրեական գործը մինչդատական վարույթից անցնում է դատական քննության փուլ, բայց կարող է նաև ստանալ իր վերջնական լուծումը քրեական գործը կարճելու ձևով[1]: Ըստ Վ.Ա. Միխայլովի[2] քրեական գործի կարճմամբ ըստ էության լուծվում է մեղադրյալին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը: Նման կարծիք հայտնել է նաև Ս.Ա. Շչեյֆերը[3], ըստ նրա քրեական գործի կարճումը անձին անհիմն քրեական պատասխանատվության չենթարկելու երաշխիք է:

Քրեադատավարական գործող օրենսդրությամբ քրեական գործի կարճումը ներկայացվում է որպես նախնական քննության ավարտման ձև (ՀՀ քր. դատ. օրենսգրքի հոդված 196-րդ, մաս 1):

Պետք է նշել, որ օրենսդիրը նախնական քննության ավարտման ձև է ներկայացնում միայն քրեական գործի կարճումը և ոչ թե քրեական հետապնդման դադարեցումը: Ճիշտ է, քրեական հետապնդման դադարեցմամբ վարույթը դադարեցվում է կոնկրետ անձի նկատմամբ, բայց տվյալ գործով քննությունը շարունակվում է: Նախկին, այսինքն ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում էր քրեական հետապնդման դադարեցումը և իրավաբանական գրականության մեջ կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործի կարճումը ներկայացվում էր որպես քրեական գործի մասնակի կարճում, որովհետև մյուս մեղադրյալների մասով գործի քննությունը շարունակվում էր: Կարծում ենք, որ քրեական դատա-

---

[1] Տես Соловьев А.Б., Багаутдинов Ф.Н., Филиппов М.Н. Прокурорский надзор за всесторонностью, полнотой и объективностью расследования преступлений, М., 1996, стр. 20:

[2] Տես Михайлов В.А., Процессуальный порядок прекращения уголовных дел в стадии предварительного расследования, Волгоград, 1970, стр 10:

[3] Տես Щейфер С.А., Прекращение дел в советском уголовном процессе, М, 1963, стр 8:

վարության գործող օրենսգրքում քրեական հետապնդման նախատեսումը արդարացված է նաև այս առումով, որովհետև քրեական գործը մի ամբողջություն է և գործի մասնակի կարճումը այնքան էլ ընդունելի հասկացություն չէ:

Ինչպես արդեն նշեցինք, քրեական գործի կարճումը չպետք է ներկայացնել սոսկ դատավարական ակտ, այսինքն՝ որոշում, որի միջոցով դադարեցվում է քրեական գործի հետագա քննությունը: Որպես նախնական քննության ավարտման տեսակ այն հանդիսանում է ինքնուրույն ինստիտուտ, որի բովանդակության մեջ մտնում են մի շարք հարցեր, որոնք լուծվում են քրեադատավարական օրենսդրությամբ:

Քրեական գործի կարճման ընթացքում պետք է լուծվեն հետևյալ հարցերը՝

1) հավաքված ապացույցների վերլուծությունը և գնահատումը, որոնք հիմք են տալիս հանգելու այն որոշման, որ հնարավոր չէ շարունակել գործի քննությունը, որովհետև առկա են վարույթը բացառող օրենքով նախատեսված հանգամանքներ,

2) քրեական գործը կարճելու մասին որոշման կայացումը,

3) բոլոր այն հարցերի լուծումը, որոնք բխում են քրեական գործը կարճելու մասին որոշումից (մասնավորապես՝ մեղադրյալի կամ կասկածյալի նկատմամբ խափանման միջոցի վերացումը, գույքի վրա դրված կալանքի վերացումը, մեղադրյալից վերցված առարկաները նրան վերադարձնելը և այլն), 4) կասկածյալին, մեղադրյալին, ինչպես նաև գործով շահագրգռված այլ մասնակիցներին քրեական գործը կարճելու մասին տեղյակ պահելը, նրանց իրավունք վերապահել ծանոթանալու կարճման որոշման հետ և նրանց բացատրել այդ որոշումը բողոքարկելու իրենց իրավունքի մասին: Ինչպես տեսնում ենք,

քրեական գործի կարճումը որպես նախնական քննության ավարտման տեսակ ներառում է միմյանց հաջորդող դատավարական գործողությունների համակցություն, որոնք պետք է ապահովեն քրեական գործի կարճման օրինականությունն ու հիմնավորվածություն, և դրանով նաև անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Քրեական գործի կարճումը սերտորեն կապված է քրեական գործի հարուցումը մերժելու հետ: Պատահական չէ, որ ինչպես քրեական գործի վարույթը, այնպես էլ քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով: Այսինքն այն հիմքերով, որոնցով բացառվում է քրեական գործով վարույթը, հավասարապես նաև այդ հիմքերով կարող է քրեական գործը կարճվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել: Բացի դրանից, օրենքով նախատեսված այդ հիմքերը վկայում են այն մասին, որ դրանց առկայության դեպքում չի կարելի քրեական գործով վարույթ սկսել և այն շարունակել:

Քրեական գործի կարճումը նաև հանդիսանում է իրավաբանական ակտ, որը վերացնում է համապատասխան մարմինների իրավասությունը տվյալ գործով քննություն իրականացնելու, իսկ շահագրգիռ անձանց մոտ առաջացնում է այդ ակտը բողոքարկելու իրավունք:

Անմեղ անձանց ազատելով քրեական պատասխանատվությունից, քրեական գործի կարճումը հնարավորություն է տալիս դատարանին ազատել ավելորդ քննություն կատարելուց, որովհետև չկան անհրաժեշտ պայմաններ դատական քննություն իրականացնելու համար: Սրանից հետևում է, որ քրեական գործի կարճումը երաշխիք է ինչպես արդարադա-

տության իրականացման, այնպես էլ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, 2003:
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, 2002:
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003:
4. ՀՀ գլխավոր դատախազի հիմնական հրամանների և ցուցումների ժողովածու, Երևան, 2003:
5. Հ. Դանիելյան, Մ. Խաչատրյան, Արդարադատության հասկացությունը, «Իրավունք և օրինականություն», 1994, թիվ 1:
6. Ղազինյան Գ.Ս., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում, Երևան, 2001:
7. Соловьев А.Б., Багаутдинов Ф.Н., Филиппов М.Н., Прокурорский надзор за всесторонностью, полноЗой и объективностью расследования преступлений, М., 1996:
8. Михайлов В.А., Процессуальный порядок прекращения уголовных дел в стадии предварительного расследования, Волгоград, 1970:
9. Щейфер С.А., Прекращение дел в советском уголовном процессе, М., 1963:
10. Давыдов П.М., Мирский Д.Я., Прекращение уголовных дел в советском уголовном процессе, М., 1963:

11. Дубинский А.Я., Прекращение уголовного деля в стадии предварительного расследования, М., 1975:
12. Дугин А.Т., Проблемы борьбы с уголовно-процессуальным правонарушениями при расследовании преступлений средствами прокурорского надзора. М., 1995:
13. Жогин Н.В., Фаткуллин Ф.Н., Предварительное следствие в советском уголовном процессе, М., 1965:
14. Зеленин С., Рассмотрение жалоб на постановление о прекращении уголовного дела //Рос. юстиция. 1996, N 9:
15. Карев Д.С., Советский уголовный процесс, М., 1980:
16. Лазарева В., Судебная власть и ее реализация в уголовном процессе, Самара, 1999:
17. Ларин А.М., Расследование по уголовному делу. Планирование, организация, М., 1970:
18. А.М. Ларин, Э.Б. Мельникова, В.М. Савицкий, Уголовный процесс России, Лекция-очерк, М., 1997

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՀԱՆՐՈՒՅԹՈՒՄ

Անի Հայրապետյան

Ընտանիքը որպես հասարակության կարևորագույն կառուցվածքային միավոր իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք եղել և մնում են կենսականորեն կարևոր ինչպես յուրաքանչյուր մարդու անհատական կյանքի, այնպես էլ տվյալ հանրույթի բնականոն կենսագործունեության տեսակետից: Որքան ավելի ռեֆերենտային է ընտանիքն իր անդամների համար, այնքան ավելի ամուր է ընտանիքը:

Քաղաքակրթական զարգացման ներկայիս փուլում ընտանիքը կրում է որոշակի փոփոխություններ և այդ դինամիկայի մեջ զգալի է ամուսնալուծությունների կտրուկ աճը: Չափազանցություն չի լինի ասել, որ քաղաքակրթությունն այսօր կանգնած է ընտանիք հասկացության կառուցվածքային և սկզբունքային լուրջ փոփոխությունների առջև: Դրա վկայությունն, է օրինակ, «պարտնյորային ընտանիքների» առաջացումը, միասեռ ամուսնությունները և այլն: Զարգացող երկրներում ընտանիքի դերն անհատի համար ավելի մեծ է, քան տնտեսապես զարգացած երկրներում: Հայկական էթնիկական հանրույթում ընտանիքի կառույցը բավականին ամուր է, բայց և այնպես նրանում նույնպես նկատվում են որոշակի բացասական միտումներ. այդ մասին է վկայում ամուսնալուծությունների աճը: Հայաստանում այսօր ամուսնալուծությունների թիվը գնալով մեծանում է և դրանց մեջ բավականին մեծ տոկոս են

կազմում երիտասարդ ընտանիքները: Ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալներով Հայաստանում ամուսնալուծությունների քանակն ավելացել է 3,1 %-ով: Այսպես, 2012թ.-ի 9 ամիսների ընթացքում Հայաստանում գրանցվել է 13828 ամուսնություն, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 6,6 %-ով, իսկ ամուսնալուծությունները ավելացել են 3,1 %-ով՝ կազմելով 2441 դեպք:[1]

Շատ հայտնի հոգեբաններ և սոցիոլոգներ կարևորում են ամուսնության առաջին տարիները: Դա պատահական չէ, քանի որ հոգեբանական ադապտացիայի տեսակետից նորաստեղծ ընտանիքները գտնվում են ավելի խոցելի իրավիճակում: Այսինքն, կոնֆլիկտայնության տեսակետից նորաստեղծ ընտանիքները գտնվում են հոգեբանական ռիսկային գոտում: Այս հարցում կարևոր դեր է խաղում հոգեբանական համատեղելիության գործոնը: Ա Ն. Օբոզովան առանձնացրել է ամուսնական համատեղելիության 4 ասպեկտներ.

1. Հոգևոր համատեղելիություն, որը բնութագրվում է ընդհանուր նպատակի, արժեքային կողմնորոշումների, պահանջմունքների, հետաքրքրությունների, աշխարհայացքի, կարծիքների առկայությամբ:

2. Անհատական համատեղելիություն, որը բնութագրվում է անձի կառուցվածքային-դինամիկական յուրահատկությունների, բնավորության, հուզակամային ոլորտի համապատասխանությամբ: Անհատական համատեղելիության չափանիշներից մեկը միջանձնային հարաբերություններում դերակատարումների հոգեբանորեն գրագետ բաշխումն է:

[1] http://www.crossnews.am

3. Ընտանեկան համատեղելիություն, որում արտահայտվում են ամուսնական զույգերի ֆունկցիոնալ բնութագրերը. ընտանիքի մասին պատկերացումների համապատասխանությունը, դերային սպասումների և պահանջների համապատասխանությունը: Այստեղ կարևոր չափանիշ է երեխաների դաստիարակության արդյունավետությունը:

4. Ֆիզիոլոգիական համատեղելիություն, որը բնութագրվում է ֆիզիկական մտերմությունից բավարարվածության զգացումով:[2]

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ամուսնական զույգի համատեղելիությունը միշտ չէ, որ միանգամից հասունանում է:

Խորքային անհամատեղելիությունը դրսևորվում է վարքում կոնֆլիկտների ձևով: Կոնֆլիկտում, անկասկած, կա հարաբերությունների ոչնչացման ռիսկ, ճգնաժամը չհաղթահարելու վտանգ, սակայն կան նաև հարաբերությունների նոր մակարդակի հասնելու, ճգնաժամի կառուցողական լուծման և նոր կենսաոճի ձեռք բերման հնարավորություններ: Ժամանակակից հայ հանրույթում ամուսնալուծությունների հիմնական պատճառները բացահայտելուն է ուղղված սույն հետազոտության փորձարարական մասը:

Կանայք ամուսնալուծության պատճառ են համարում (դասակարգումը տրված է ըստ պատճառների կարևորության)՝

1. Անտարբերությունը միմյանց նկատմամբ

2. Հարբեցողությունը, թմրամոլությունը, խաղամոլությունը

3. Սեռական անհամատեղելիությունը

---

[2] Андреева Т. В. Психологические проблемы супружеских отношений //Вестник Санкт-Петербургского университета. Сер. 6. 1999.

4. Սոցիալական ծանր պայմանները
5. Ամուսնական դավաճանությունը

Տղամարդիկ ամուսնալուծության պատճառ են համարում՝

1. Ամուսնական դավաճանությունը
2. Մինչ ամուսնությունը միմյանց լավ չճանաչելը
3. Սեռական անհամատեղելիությունը
4. Անտարբերությունը միմյանց նկատմամբ
5. Հիգիենային չհետևելը:

Ինչպես տեսնում ենք, նշված պատճառների որոշ մասը համընկնում է տղամարդկանց և կանանց մոտ, սակայն դրանց կարևորության աստիճանը տարբեր է: Սա վկայում է այս հարցում տղամարդկանց և կանանց մտածելակերպի տարբերության մասին:

ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՐԵՆ ԳՐԱԳԵՏ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Դավիթ Ջամալյան
հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ

Զինված ուժերի առօրյայի հոգեբանորեն գրագետ լուսաբանման խնդիրը ներկայումս ծառացած է իր ողջ սրությամբ: Հոգեթերապևտիկ աշխատանքի հիմնական կանոններից մեկը հնչում է հետևյալ կերպ. «մի՛ վնասիր»: «Հոգեբանորեն գրագետ» լուսաբանման հիմքում մենք տեսնում ենք ահա այդ «մի՛ վնասիր» սկզբունքը: «Մի՛ վնասիր» ասելով մենք հասկանում ենք այնպիսի մի դիրքորոշում, ուր առկա է առողջ, կառուցողական քննադատություն, առավելագույն անաչառություն, ինչպես նաև՝ բանակի հանդեպ սրտացավություն: «Մի՛ վնասիր» դիրքորոշումը ենթադրում է մուտք գործել զորամաս, տեսնել ու գնահատել այստեղի դրական փոփոխությունները, միաժամանակ նկատել նաև առկա խնդիրները, և ամենակարևորը, հետևողականորեն ուշադրության կենտրոնում պահելով այդ խնդիրները, վերահսկել դրանց վերացման գործընթացը: Այս սկզբունքը որդեգրելու դեպքում ՋԼՄ-ները կարող են վերածվել բանակի հասարակական վերահսկողության արդյունավետ գործիքի: Ավելին, այս դեպքում ՋԼՄ-ները մեծապես նպաստում են բանակում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ամրապնդմանը, հասարակության շրջանում բանակի հեղինակության բարձրացմանը:

Եվ, թերևս, ամենակարևորը՝ «մի՛ վնասիր» ակզբունքով բանակային անց ու դարձը լուսաբանել նշանակում է անընդհատ հիշել, որ մենք դեռևս պատերազմող երկիր ենք, հետևա-

պես մեր բանակի խնդիրների մասին հարկավոր է խոսել զգուշորեն, որպեսզի նրա խոցելի կողմերը թշնամուն ակամա չհրամցվի: «Մի՛ վնասիր» սկզբունքով լուսաբանելու անհրաժեշտությունն է՝լ ավելի հրատապ է դառնում զինված ուժերում երբեմն տեղի ունեցող արտակարգ միջադեպերի դեպքում:

Հասարակական հնչեղություն ունեցող արտակարգ միջադեպերը լռության մատնելը պարզապես հակացուցված է, քանզի պաշտոնական օպերատիվ տեղեկատվության բացակայության պայմաններում տեղեկատվական վակումը շատ արագ կլրացնեն ասեկոսեները: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ ասեկոսեներում տեղեկությունները, որպես կանոն, աղճատվում են: Այստեղից հետևությունը մեկն է. արտակարգ միջադեպի վերաբերյալ հանրությանը սպառիչ տեղեկատվության տրամադրումը այլընտրանք չունի: Նման դեպքերում հատկապես կարևոր է քաղաքացիական ԶԼՄ-ների և պաշտպանության նախարարության սերտ համագործակցությունը, լուծելու համար անաչառ ու գրագետ լուսաբանման բարդ խնդիրը:

Հարկավոր է հաշվի առնել հետևյալ օրինաչափությունը: Բանակում տեղի ունեցած ցանկացած արտակարգ միջադեպի մասին տեղեկությունն իր անսպասելիության և բացասական բնույթի պատճառով մեծ ռեզոնանս է առաջացնում հասարակության մեջ, ունենում ցնցող ազդեցություն: Նման դեպքերում, որպես կանոն, կոնկրետ միջադեպի հանդեպ հասարակության բացասական վերաբերմունքը ակամա տարածվում է ողջ բանակի վրա: Հետևաբար ցանկացած արտակարգ միջադեպ այս կամ այն չափով ստվերում է բանակի կերպարը:

Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի նման իրավիճակում միջադեպի հոգեբանորեն գրագետ լուսաբանումը: Նման իրադրությունում հարկավոր է հասարակության մոտ միջադեպի առա-

ջացրած բացասական հույզերի ողջ ներուժը ուղղորդել տվյալ միջադեպի կոնկրետ մեղավորների վրա, և ինչն ամենակարևորն է. զերծ մնալ ամեն տեսակ ընդհանրացումներ պարունակող իռացիոնալ, թունոտ մեկնաբանություններից: Շեշտենք, որ բանակի կերպարը ստվերելու տեսանկյունից վտանգավորը ոչ թե ինքնին տեղեկությունների հրապարակումն է, այլ դրան հաջորդող թունոտ ընդհանրացումները, որոնք մակերեսային հետևություններով տվյալ արտակարգ միջադեպի բացասական տրամադրությունները տարածում են ողջ զինված ուժերի կերպարի վրա: Ցանկացած արտակարգ պատահար վնասում է բանակի կերպարը, ընդ որում որքան մեծ է վերջինիս հասարակական ինչեղությունը, այնքան մեծ է այդ վնասը: Ցավալի է, բայց փաստ, որ բանակի դրական կերպարը ամրապնդելու ուղղությամբ տարվող ամիսների հետևողական աշխատանքը միանգամից ջուրն է լցվում մեկ արտակարգ միջադեպի բացասական ռեզոնանսով: Բանն այն է, որ բացասական տեղեկություններն ավելի տպավորիչ են, քանզի անակնկալ լինելու պատճառով մեծ ուշադրություն են բևեռում իրենց վրա՝ առաջացնելով բուռն հուզականություն: Դրան նպաստում է նաև այն, որ բազմաթիվ լրատվամիջոցներ միաժամանակ անդրադառնում են տվյալ միջադեպին: Արդյունքում արտակարգ միջադեպերը հասարակական հոգեկանում արմատավորում են բանակի մասին բացասական կարծրատիպերը: Հետևապես, անաչառ լրագրողի խնդիրը պետք է լինի ամեն կերպ խուսափել այդպիսի զարգացումները սաստկացնելուց: Նման պայմաններում ցանկացած թունոտ հրապարակում (ոչ թե քննադատական) էլ ավելի է խթանում հանրային հոգեկանում բանակի, նրա հրամանատարության, սպայակազմի մասին բացասական կարծրատիպերի ամրապնդման գործըն-

թացը: Մեր համոզմամբ դժբախտ պատահարի, արտակարգ միջադեպի դեպքում հարկավոր է նկարագրել միջադեպը՝ խուսափելով տառապանք պատճառող առանձին մանարամասնություններից, հստակորեն մատնանշել կոնկրետ մեղավորներին, վստահեցնել վերջիններիս արդարացի պատժի անխուսափելիության մեջ, զուգահեռաբար շեշտելով, որ քննության ողջ ընթացքը, ընդհուպ մինչև դատավճռի կայացումը անընդհատ լինելու է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, և, որ ամենակարևորն է՝ մատնանշել նման միջադեպերը կանխելու նպատակով հրամանատարության կողմից ձեռնարկվող միջոցառումները:

Ինչպես նշվեց վերևում, «մի՛ վնասիր» սկզբունքը ենթադրում է հոգատար վերաբերմունք բանակի հանդեպ: Իսկ հոգատար դիրքորոշում ունեցող լրագրողի, հասարակական գործչի քննադատությունը անխուսափելիորեն կլինի միայն կառուցողական: «Մի՛ վնասիր» սկզբունքից զերծ լրագրողը, որն ի սկզբանե հակված է վատաբանելու, վարկաբեկելու բանակը, երբեք չի նկատի դրականը, նրա կանխակալ հայացքը միշտ որոնելու է թերին: Թերությունները քողարկելը, զինված ուժերի կույր գովաբանությունը պակաս վտանգավոր չէ, քանի որ կարող է լճացման և ամենաթողության պարարտ հող ստեղծել: Հետևաբար, բանակին հարկավոր է օբյեկտիվ և վերահսկող լրագրողական հայացք՝ ի սկզբանե հոգատար դիրքորոշման հետ զուգորդված:

Զինված ուժերի «հոգեբանորեն գրագետ» լուսաբանման տրամաբանությունը նրա անընդհատ բնույթն է. անընդհատ, հետևողական աշխատանք, ուղղված մեկ նպատակի՝ ամրապնդել բանակի հեղինակությունը հասարակության շրջանում: Այդ նպատակով հարկավոր է բոլոր լրատվամիջոցներով

կայուն պարբերականությամբ հանրությանը տեղեկացնել բանակում առկա ցանկացած դրական փոփոխության մասին: Խոսքը ոչ թե շինծու PR-ի, այլ աշխատանքը հանրությանը ներկայացնելու մասին է: Առաջին հայացքից կարող է թվալ, թե բանակում տեղի ունեցող դրական փոփոխությունների մասին հետևողականորեն տրամադրվող տեղեկությունների հանդեպ մարդիկ մնում են անտարբեր: Իսկապես, դրական այս կամ այն տեղեկությունը մարդկանց մոտ բուռն հուզականություն չի առաջացնում: Հերթական դրական նորությունը մարդիկ ընկալում են իբրև սովորական, այլ ոչ իբրև արտառոց մի բան: Բանակի մասին հետևողականորեն տրամադրվող դրական տեղեկությունների արդյունքը կարող է տվյալ պահին տեսանելի չլինել, քանզի դրանք արտակարգ միջադեպի պես հզոր իրադրական-հուզական ազդեցություն չունեն մարդկանց վրա: Սակայն հետևողականորեն տրամադրվող դրական տեղեկությունները օդ ու ջրի նման անհրաժեշտ են, քանի որ մարդկանց հոգեկանում աստիճանաբար ձևավորում են բանակի մասին հիմնավոր, կայուն դրական դիրքորոշումներ: Փոքրիկ, սակայն կայուն չափաբաժիններով դրական տեղեկությունները «նստվածք են տալիս» մարդկանց ենթագիտակցության մեջ, ինչի արդյունքում աստիճանաբար ձևավորվում է բանակի դրական կերպար: Հատկապես կարևոր է, որպեսզի լրատվական ծրագրերում բանակի մասին դրական տեղեկությունները գերակայեն, այդ դեպքում հանկարածահաս արտակարգ միջադեպի կարծրատիպացնող ազդեցությունը էապես կնվազի:

Գրականության ցանկ

1. Ա. Ա. Նալչաջյան, «Սոցիալական հոգեբանություն», «Զանգակ-97», Երևան, 2003:
2. Караяни А. Г.. Сыромятников И. В. Прикладная Военная психология, “ПИТЕР”. Москва. 2006.
3. Налчаджян А. А. Атрибуция, диссонас и социальное познание. “Когито – Центр”. Москва. 2006.
4. Назаретян А. П. Агрессивная толпа, массовая паника, слухи. “ПИТЕР”. Мсоква. 2003.

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լիանա Մանուկյան

Ժամանակակից հասարակությունն անհնար է պատկերացնել առանց հանցագործության և հանցավոր աշխարհի: Ճիշտ է, այն իր բնույթով նոր երևույթ չէ, այնուամենայնիվ անհրաժեշտ է որոշակի միջոցառումների կազմակերպում և տարաբնույթ հետազոտություններ, քանի որ այս երևույթը դարձել է լուրջ սոցիալական չարիք: Այս պարագայում առանձնակի ուշադրություն են պահանջում անչափահաս հանցագործները:

Հանցագործ աշխարհի զգալի տոկոսն են կազմում հենց անչափահաս հանցագործները:

Ըստ օրինաչափության՝ առավել հաճախ հանցագործ են դառնում «դժվար դեռահասները»: Իսկ «դժվար դեռահասի» անձի ձևավորման կարևորագույն գործոններ են անբարենպաստ ընտանեկան պայմանները, ծնողների հարաբերությունները, վարքը և մի շարք այլ հանգամանքներ:

Ընդհանրապես, անչափահասների վարքին և նրանց անձին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնք կարծես թե հոգեբանական նպաստավոր պայմաններ են ստեղծում սոցիալական վարքի և հարաբերությունների համար: Դրանցից են կենսափորձը, ինքնաքննադատության ցածր մակարդակը, բարձր հուզական գրգռվողականությունը, իմպուլսիվությունը, հուզական անտարբերությունը, ընդօրինակելու ձգտումը, ներշնչվողականությունը, անկախության սրված զգացումը, ռեֆերենտ խմբում հեղինակային տեղ զբաղեցնելու ձգտումը, նեգատիվիզմը, գրգռման և արգելակման

գործընթացների անհավասարակշռությունը: Այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև մի շարք անձնային անբարենպաստ որակներ՝ գլուխ գովելը, մեծամտությունը, բարձր հավակնությունները, կասկածամտությունը, անվստահությունը և այլն:[1]

Անչափահասությունը հոգեբանության մեջ մեծ կարևորություն ներկայացնող շրջան է, որն արդեն բավականին երկար ժամանակ հոգեբանական գիտության ուսումնասիրության առարկաներից է: Անչափահասների հանցավորությունը պայմանավորված է արտաքին միջավայրի բացասական գործոնների (անմիջական կամ միջնորդավորված) և անչափահասի անձի ազդեցությամբ:

Ժամանակակից հոգեբանության մեջ անձի զարգացման տարիքային ճգնաժամերից մեկը դիտվում է դեռահասության շրջանում: Այս շրջանին բնորոշ անցումային շրջանի հոգեբանական «կոտրվածքը», չձևավորված կայուն բարոյական հայացքները, շատ երևույթների սխալ մեկնաբանումը, իմպուլսիվությունը, խմբային ազդեցություններին ենթարկվելը կարևորագույն հանգամանքներ են, որոնք պետք է հաշվի առնվեն դատաքննչական գործունեության մեջ:[2]

Դեռահասությունն իր բնույթով ճգնաժամային շրջան է: Դեռահասության տարիքային ճգնաժամը ունի **փուլային** բնույթ: Ճգնաժամի առաջին փուլում հիմնովին փոխվում է դեռահասի վերաբերմունքն իր և աշխարհի նկատմամբ, իսկ երկրորդ փուլում զարգանում է ինքնագիտակցումն ու ինքնորոշումը:[3]

---

[1] Էդիլյան Գ., Դատական հոգեբանություն կամ հոգեբանության կիրառումը դատավարության ժամանակ, Երևան, 2000թ.
[2] Գրին Է., Դատական գործունեության հոգեբանություն, «Զանգակ-97», 2002թ.
[3] www.koob.ru

Ճգնաժամի երկարատևությունն ու սրությունը ֆիզիկական և մտավոր զարգացման հետ է կապված, որի արդյունքում նոր պահանջմունքներ են ի հայտ գալիս: Պահանջմունքների դեպրիվացիան այս փուլում շատ ուժեղ է, և այն դժվար է հաղթահարել՝ կապված դեռահասի ֆիզիկական, հոգևոր և սոցիալական զարգացման արագության անհամապատասխանության հետ:

Դեռահասն իր համար ձևավորում է իդեալական կերպարներ, որոնց ձգտում է նմանվել: Եթե նա չի կարողանում իդենտիֆիկացվել (նույնականանալ) իր իդեալի հետ, նրա ներաշխարհում կատարվում են մի շարք փոփոխություններ, որոնք բերում են ֆրուստրացիայի:[4]

Դեռահասի առաջնային պահանջմունքներից մեկը ինքնահաստատման պահանջմունքն է: Ինքնահաստատումն այս տարիքում կարող է իրականացվել փոխկապակցված փոքր խմբերի շրջանակներում, ինչը երբեմն իր հետ բերում է մի շարք նեգատիվ երևույթներ: Դրա համար դեռահասի ընդգրկումը բազմապիսի սոցիալական խմբերի, լայն սոցիալական կապերի մեջ համարվում է անչափահասների շրջանում հանցագործության կանխարգելիչ հիմնական միջոցառումներից մեկը:

Դեռահասության անցումային շրջանն ավարտվում է ինքնորոշման՝ անձնային նորագոյացության ձևավորմամբ, որն էլ հենց ճգնաժամի էությունն ու իմաստն է կազմում: Սա կապված է ճգնաժամի երկրորդ փուլում ձևավորվող հետաքրքրությունների, աշխարհայացքի և նաև մասնագիտության ընտրության հետ:[5]

Չգտնելով իր ինքնահաստատման համար դրական

---

[4] Чуфаровский Ю. В. Юридическая психология. М., 2006. С – 472.

[5] Блекборн Р. – Психология криминального поведения. – СПБ.: Питер, 2004. – 496с.: ил. – (Серия “Мастера психологии”).

նպաստավոր միջավայր՝ դեռահասն ակտիվ կերպով փնտրում է ռեֆերենտ խումբ, ընկերներ ու բարեկամներ: Նրանց գտնելով՝ նա փորձում է ինքնահաստատվել այդ խմբերում:

Հաճախ նման «ինքնահաստատումը» նրան դարձնում է «դժվար դեռահաս»:

Անչափահաս հանցագործների ուսումնասիրությունները վկայում են, որ նրանք ամենից հաճախ հանցանք են գործում իրենց տարեկիցների կամ մեծերի միջնորդավորված ազդեցությամբ՝ ենթարկվելով նրանց ճնշմանը:

Կարևոր հանգամանք է այն, որ դեռահասների հոգեկանը բնութագրվում է բարձր կողմնորոշիչ-հետազոտական գործունեությամբ, իրադարձությունների, որոշակի երևույթների հանդեպ առանձնակի ուշադրությամբ, ուշադրության կենտրոնացմամբ անսովոր իրադարձությունների վրա, անմիջականությամբ, անկեղծությամբ, ճշտախոսությամբ և այլն:

Անչափահասների հանցավորությունն արդի հասարակության առջև ծառացած խնդիրներից է: Ուսումնասիրելով անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ դրանք պայմանավորված են կենսաբանական («գենետիկական»), հոգեկան և սոցիալական գործոններով:

Այսպիսով, դեռահասները հասարակության այն «խոցելի» խումբն են, որը ներծծում է դրանում եղած թե դրական, թե բացասական կողմերը: Դեռահասը ոչ միայն ընկալում ու սեփականացնում է արտաքին միջավայրի անբարենպաստ ազդեցությունները, այլև կարող է դրանք մերժել, ինչպես նաև պայքարել դրանց դեմ:[6]

---

[6] Արզումանյան Ս., Գրին Է., Իրավաբանական հոգեբանություն: Դասագիրք բուհերի համար, Եր., «Զանգակ – 97», 2004, 432էջ:

ՍԹՐԵՍԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Աննա Նադոյան

Ոչ բոլոր մարդիկ են արձագանքում սթրեսոգեն իրավիճակին ուժերի թուլացմամբ, ընկճվածության բարձրացումով կամ հոգեսոմատիկ խանգարումներով: Մարդկանց մեծամասնությունը այս պայմաններում կարողանում է պահպանել կամ արագ վերականգնել աշխատունակությունը և գործառնական հուսալիությունը, չնայած նրանցից յուրաքանչյուրը քիչ թե շատ ունենում է բացասական զգացումներ, էմոցիոնալ գրգռվածություն կամ հոգեկան ճնշվածություն:

Հետազոտողներից մի քանիսը բացատրում են դրանք անձնային առանձնահատկությունների վրա իրենց ազդեցությամբ[1], մյուսները՝ բիոլոգիական նախահակմամբ[2], երրորդները՝ արտաքին պայմաններով և այլն[3] :

Սթրեսը հաղթահարել սովորելը ինքնին հետաքրքիր և կարևոր է: Սթրեսի հաղթահարման մասին գիտության վերածնունդը և զարգացումը կապված է արտասահմանյան մի շարք հոգեբանների անձի գործնական, կոնսերվատիվ մշակումների հետ: Ինչպես նշում է Լ.Ի. Անցիֆերովան[4], դեռ 1937թ.-ին Գ.Օլ-

---

[1] Kobasa S. Stressful life events, personality and health:An inquiry into hardiness // J. of Personality and Social Psychology.1979. Vol. 37.

[2] Murphy L.B. Moriarty A.E. Vulnerability,coping and growth. New Haven:Yale University Press, 1976

[3] Cohen S., Evans G.W. Stokols D., Krantz D.S. Behavioral, health, and environmental stress. New York: Poenum,1986

[4] Billings A.G., Moos R.H.- Coping, stress and social resources among adults with unipolar depression //J. of personal and social psychology.// J. of Personality and Social Psychology.1984. Vol. 46

պորտը ուշադրություն դարձրեց անձի ակտիվ ստեղծարար էությանը և պարզեց նրա ձգտումը դեպի ավելի բարդ խնդիրների որոնում և որոշում, իսկ Կ. Ռոջերսը և Խ. Տոմեն նշել են, որ այցելուները կարող են ինքնուրույն լուծել շատ կենսական խնդիրներ:

Սթրեսի հաղթահարման խնդրի վերաբերյալ աճող ուշադրությունը կապված է ողջ կյանքի ընթացքում մարդու գործունեության, կյանքի բոլոր ոլորտներում նրա դերի, դրսևորումների հետ, այդ թվում նաև մասնագիտության հետ: Սթրեսային իրավիճակների և գործոնների (կյանքի դժվար պայմաններ, սոցիալական ճգնաժամեր, արտակարգ իրավիճակներ և այլն) բազմազանությունը, ինչպես նաև անձի անհատական հատկանիշները կանխորոշում են տվյալ իրավիճակում մարդու վարքի տարբեր ձևերը (ռազմավարություն և ոճ) և արձագանքները[5]:

Սթրեսին հակազդելու խնդիրը, դրա պրոֆիլակտիկան (զարգացման կանխումը) և շտկումը (նվազեցումը, սթրեսային ռեակցիայի լիկվիդացումը, նորմալ ֆունկցիոնալ իրավիճակի վերականգնումը) արևմտյան հետազոտողների մոտ արտացոլվում է «coping stress» և «coping behavior» հասկացություններով:

Սթրեսին «հակազդումը» կայանում է ինչպես սթրեսի կանխարգելմամբ, այնպես էլ դրա շտկմամբ: «Coping» հասկացությունը անգլերեն «cope» բառից է, որը օգտագործվում է «հաղթահարել, հաջողությամբ իրականացնել» իմաստով: Ս.Կ. Նարտովա-Բոչավերը նշում է, որ «եթե առաջ էական էր դիրքորոշումը այն մասին, որ coping-ը գործողության մեջ է

[5] Бодров В.А. Психологический стресс: развитие и преодоление.- М. : ПЕРСЭ, 2006. – 528с.

մտնում, երբ խնդիրների բարդության աստիճանը բարձրանում է և նոր լիցքերի կարիք է լինում, իսկ սովորականները բավարար չեն»[6], ապա ժամանակի ընթացքում այս հասկացությունը սկսեց օգտագործվել ոչ միայն արտակարգ պայմանների, այլև կյանքի դժվար իրավիճակներում մարդկանց մոտեցումների, սթրեսորների խրոնիկ ազդեցության և ամենօրյա վատ ու լավ իրադարձությունների նկարագրության համար:

Դիմակայումը համարվում է մի պրոցես, որի ընթացքում անձի և պայմանների փոխազդեցությունը մշտապես փոխվում է: Բազմաթիվ փոփոխություններ, որոնք արտացոլում են հենց սթրեսի հաղթահարման պրոցեսը, նոր տեղեկություններ են տալիս՝ վերադառնալով դեպի անձը և փոխելով իրավիճակի գնահատականը:

Այսպիսով, հնարավոր է համարել, որ «հաղթահարման վարքի» գործընթացը հանդիսանում է շրջապատող աշխարհի հետ փոխազդեցության անհատական միջոցների դրսևորում (սոցիալական, պրոֆեսիոնալ այլ իրավիճակներ), որում ի հայտ են գալիս սուբյեկտի հնարավորությունները և իրավիճակի բնորոշումները, որոնցում արտահայտված են արժեքների, նշանակության, դժվարությունների և կոնկրետ իրադրության հաջորդականության հետևանքները արտացոլված գիտակցության մեջ:

Այսպիսով, սուբյեկտի նմանատիպ վարքը հանդես է գալիս որպես դիմակայման, պաշտպանության, հակազդման միջոց սթրեսի զարգացման, պայմանների վերացման կամ թուլացման նպատակով:

---

[6] Нартова-Бочавер С.К. “Coping behavior” в системе понятий психологии личности Психологический журнал. 1997. N5, С. 20-30

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Սիլվի Թարջումանյան

Դեպրիվացիան հոգեկան այն վիճակն է, որն առաջանում է կյանքի այնպիսի պայմաններում, երբ անհատին որոշակի ժամանակահատվածում հնարավորություն չի ընձեռվել բավարարել իր որոշ հիմնական հոգեկան պահանջմունքները բավարար չափով: Այսօր այն հոգեբանության, մասնավորապես տարիքային հոգեբանության կենտրոնական խնդիրներից մեկն է, որը գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դեպրիվացիան մանկական տարիքի հոգեախտաբանության, դպրոցական դաստիարակության մեջ մեծ տեղ է գրավում: Այս ուղղությամբ ձեռք են բերվել արժեքավոր հետազոտական տվյալներ, սակայն շատ հարցեր դեռ կարոտ են մանրակրկիտ հետազոտման:

Դեպրիվացիայի երևույթը առանձնապես սուր է դրսևորվում այն երեխաների մոտ, որոնք ներգրավված են սոցիալական օգնության տարատեսակ կազմակերպություններում: Խնդիրը գտնվում է հոգեբանների, սոցիալական աշխատողների, հատուկ մանկավարժների և բժիշկների հետաքրքրության ոլորտում (Զ. Ֆրոյդ, Ռ.Ա. Շպից, Դ. Վ. Ուինիկոտ, Ջ. Բոուլբի, Ի. Լանգմեյեր, Զ. Մատեյչեկ և ուրիշներ):

Ինչպես հայտնի է, ընտանիքը կենտրոնական դեր ունի երեխայի հոգեկանի զարգացման հարցում: Այստեղ ամեն մի անդամը իր դերն է կատարում և բավարարում է երեխայի կենսական ֆիզիկական, հուզական, իմացական և բարոյական պահանջմունքները: Թեև մայրական դեպրիվացիան ավելի

խոր և բացասական ազդեցություն է թողնում երեխայի հոգեկանի զարգացման վրա, սակայն հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ հայրական դեպրիվացիան մեր իրականության մեջ ավելի հաճախակի հանդիպող երևույթ է և երեխայի հոգեկան զարգացման վրա թողնում է իր ուրույն բացասական հետևանքները:

Ինչպես դասական դարձած, այնպես էլ ժամանակակից շատ հետազոտություններում հիմնական ենթադրությունն այն է, որ գոյություն ունի դեպրիվացիայի հետևանքների հետևյալ պատկերը. հոսպիտալիզմ, անալիտիկ դեպրեսիա, պսիխոպատիա կամ ուղղակի «դեպրիվացիոն սինդրոմ»: Սակայն վերջին շրջանի մի շարք հետազոտությունները գալիս են ապացուցելու, որ «դեպրիվացիոն սինդրոմ»-ի վերոհիշյալ դրսևորումները միշտ չէ, որ ցայտուն արտահայտություններ են ունենում[1]:

Դեպրիվացիայի հետևանքը կարող է արտահայտվել նորմալ էմոցիոնալ պատկերի սահմաններից դուրս չեկող փոքր շեղումներով, որոնք կարող են զուգորդվել մտածողության, բնավորության, ինչպես նաև հոգեմարմնային (փսիխոսոմատիկ) որոշակի բացասական փոփոխությունների հետ:

Այսպիսով պարզ է, որ դեպրիվացիան տարբեր մարդկանց վրա տարբեր հետևանքներ է թողնում, կազմելով նրանց անձնային հուզական կերպարը: Տարբերությունը ավելի ցայտուն է երևում այն երեխաների մոտ, ովքեր տարբեր հասա-

---

[1] Боулби Дж., Привязанность; Перевод с английского; Данное издание выпущено в рамках проекта “Translation Project” при поддержке Института “Открытое общество” (Фонд Сороса) – Россия и Института <<Открытое общество>> - Будапешт, 2003 г.; Лангмейер И., Матейчек З.. Психическая депривация в детском возрасте. Аввценум. Медицинское издательство Прага, ЧССР. Издание 1-ое русское- 1984 г.; Ainsworth, M. IX: The Effects of Maternal Deprivation. In: Deprivation of Maternal Care WHO, Geneve, 1962, p. 124

կում են դեպրիվացվել, տարբեր պատճառներով, դեպրիվացիայի տարբեր տիպերի արդյունքում:

Մեր կողմից կատարված փորձարարական հետազոտությունը ցույց տվեց, որ կան որոշակի ընդհանուր երևույթներ, որոնք շատ հաճախ են կրկնվում դեպրիվացված երեխաների մոտ: Դրանք են խոսքի զարգացման ուշացումը, սոցիալական և հիգիենիկ խնամք վարելու ունակությունների բացակայությունը, մկանային համակարգի անբավարար զարգացածությունը: Դեպրիվացված երեխաները զիջում են այս խնդիրը չունեցող երեխաներին սոցիալական կոմպետենցիաների, իրավիճակների ադեկվատ գնահատման և մի շարք հարակից հարցերում, մասնավորապես դժվար են կազմակերպում իրենց շփումները այլ մարդկանց հետ: Ինքնուրույն աշխատելու նրանց հմտությունները թույլ են զարգացած լինում, կողմնակի գրգռիչների ազդեցության տակ հեշտությամբ շեղվում են, սակայն միևնույն ժամանակ լավ են ընկալում հանձնարարությունները և արդյունավետ գործում են ուղիղ ղեկավարման պարագայում:

Հետազոտության արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ չնայած դեպրիվացիայի թողած ակնհայտ բացասական ազդեցություններին, դրանք կարող են հաղթահարվել հոգեկանի կոմպենսատոր մեխանիզմների շնորհիվ և շատ խորը ախտաբանական ազդեցություն չթողնել անձի վրա:

ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Լիլիթ Մակարյան
Պ.գ.թ.

«Արաբական գարունն» ընդգրկեց նաև Սիրիան, որը, սակայն, տարբերվում է նախորդ սցենարներից, քանի որ այստեղ առկա է նաև էթնո-կրոնական գործոնը: Չնայած երկրի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կազմում են սունիի մահմեդականները (74 %), սակայն իշխանությունը գտնվում է ալավիների ձեռքում (12 %): Սիրիայի նախկին նախագահ Հաֆեզ Ասադի իշխանությունը լեգիտիմացնելու համար 1973թ. շիա իմամների հրապարակած հրովարտակով ալավիականությունը համարվեց շիա իսլամի ճյուղ: 2011թ. մարտին Սիրիայում տեղ գտած հակակառավարական ցույցերը կարճ ժամանակահատվածում վերաճեցին ռազմական գործողությունների[1], որն էլ իր հերթին հանգեցրեց պատերազմի, և դեռևս պարզ չէ, թե ինչ հանգուցալուծում կստանա հիմնախնդիրը: Արաբական երկրներում ժողովրդավարություն հաստատելու քողի ներքո սկսեցին լայնորեն միջամտել Արևմուտքի երկրները, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում է աշխարհաքաղաքական առանձին շահ: Սիրիայի անկայունությունը ձեռնտու էր նաև տարածաշրջանում գերիշխող դիրքի ձգտող երկրներին, առաջին հերթին Թուրքիային, որը հետևողակա-

[1] http://panorama.am/am/politics/2013/06/12/siria/

նորեն փորձում է իրականություն դարձնել իր կայսերապետական երազները: Այս առումով մեզ համար հրատապ են Սիրիայի հայկական համայնքի հիմնախնդիրները: Սիրիայում հայերը բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից, երբ դեռևս Ք.ա. I դարում Տիգրան Մեծը Ասորիքը ընդգրկեց հայկական տերության կազմում: Սիրիայի հայ համայնքը Մերձավոր Արևելքի ամենահին ու կազմակերպված համայնքներից է, որը հիմնականում համալրվել էր հայոց ցեղասպանությունից և Կիլիկիայի հայաթափումից հետո[2]: Որոշ տվյալներով Սիրիայում այսօր մնացել է մոտ 50 հազ. հայ, իսկ մինչ հակամարտությունը այնտեղ պաշտոնական տվյալներով ապրում էր 80 հազ. հայ (շրջանառվում է նաև 100 հազ. թիվը): Նշենք որ հայերը հիմնականում կենտրոնացած էին Հալեպում, Լաթաքիայում, Հոմսում, Քամիշլիում, Հասաքեում, Յակուբիայում, Ռաքքայում և մայրաքաղաք Դամասկոսում:

Սիրիական ճգնաժամը 2012թ. ամռանը վերաճեց բացահայտ պատերազմի՝ հստակեցնելով հակամարտող կողմերի գործողությունները: Սիրիահայերի անվտանգության տեսանկյունից կարևոր էր տեղի հայկական կառույցների դիրքորոշումը հակամարտող կողմերի հարցում: Սիրիայում առկա հայկական 3 եկեղեցական համայնքների առաջնորդները 2012թ. սեպտեմբերին հանդես եկան հայտարարությամբ, որ այդ պատերազմում չեզոք դիրք են գրավում և դեմ են արյունահեղությանը և տեռորիզմին[3]: Այնուամենայնիվ համակրանքը Բաշար Ալ-Ասադի կողմն է, որը պայմանավորված է վերջինիս կողմից հայերի նկատմամբ հանդուրժողական քաղաքականությամբ և

---

[2] Տես Ա. Փաշայան, Լ. Հարությունյան, Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., 2011, էջ 9:
[3] http://www.aravot.am/2012/09/18/306584/

տրված արտոնություններով: Մասնավորապես՝ հայ համայնքը Սիրիայում միակն է, որին թույլատրված է դպրոցներում դասավանդել ազգային լեզուն[4]:

Սիրիայում Հայ առաքելական եկեղեցին ունի 2 թեմ՝ Բերիո (առաջնորդանիստը՝ Հալեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցի), որը ենթակա է Անթիլիասին, և Դամասկոսի (առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցի), որը ենթակա է Մայր աթոռ Ս. Էջմիածնին: Հոմսի եկեղեցին ևս ենթարկվում է վերջինին: Սիրիայում կան նաև կաթոլիկներ և ավետարաններ[5]: Բերիո թեմում տոն տվող է Դաշնակցությունը, իսկ Դամասկոսում՝ ՍԴ հնչակյան կուսակցությունը[6]: Սիրիայում հայ համայնքի հոգևոր և քաղաքական աղճատվածությունը լրջագույն խնդիր է և չի բխում մեր ազգային շահերից: Այս հակամարտության շրջանում կարելի է փաստել այն դրական հանգամանքը, որ տեղի հայ քաղաքական հոսանքները մի կողմ են դրել իրենց տարաձայնությունները և միահամուռ ուժերով զբաղված են հայրենակիցների անվտանգության, կեցության ապահովման և համայնքի պահպանման խնդիրներով: Այս առումով հատկապես անհանգստացնող է մեր թշնամի հարևանների՝ Թուրքիայի և Ադրբեջանի գործուն մասնակցությունը պատերազմին: 2013թ. օգոստոսին հայտնի է դարձել, որ Բ. Ասադի հակառակորդ ուժերի շարքերում կռվում է շուրջ 60 ադրբեջանցի զինյալ[7]: Ադրբեջանական ԶԼՄ-ների հաղորդմամբ՝ վերջերս Սիրիայում սպանվել է նրանց առաջ-

---

[4] Ա. Փաշայան, Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը: http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5811&sphrase_id=30054

[5] Տե՛ս Ա. Փաշայան, Լ. Հարությունյան, Սիրիայի հայ համայնքը.արդի հիմնախնդիրներ, էջ 12-13:

[6] Տե՛ս Կ. Դալլաքյան, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 179:

[7] http://razm.info/16822

նորդ Աբու Յահյան[8]: Այդ զինյալները հատուկ պատրաստություն են անցնում Թուրքիայում, որի ծրագրերի մեջ է մտնում նաև Սիրիայի հայ համայնքի կազմաքանդումը՝ բացառելու համար իր սահմանների մոտ ուժեղ հայկական գործոնը: Թե ի՞նչ արժեցավ «արաբական գարունը», «Bloomberg» գործակալության հաղորդմամբ վնասի չափը հաշվարկել են բրիտանական HSBC բանկի փորձագետները՝ ըստ որոնց 2011-2014 թթ. Թունիսի, Լիբիայի, Եգիպտոսի, Եմենի, Սիրիայի, Բահրեյնի և Հորդանանի համար այն կազմելու է 800 միլիարդ դոլար[9]: Իհարկե, այս թվի մեջ է նաև սիրիահայերի կրած նյութական վնասը, որը միլիոնավոր դոլարների է հասնում: Իսլամիստական խմբավորումների կողմից ավերվում են կրթական հատատություններ (Սիրիայում գործում էր 40-ից ավելի հայկական վարժարան)[10], մշակութային օջախներ, էապես տուժել է Դեյր Էզ-Զորում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանը, այրվել է Հալեպի Ս. Գևորգ եկեղեցին, զավթվել էին Հոմսի հայկական եկեղեցին և «Իսահակյան» վարժարանը, թալանվել ու պղծվել է Ռաքքայի հայ կաթողիկե Նահատակաց եկեղեցին, գնդակոծվել է Դամասկոսի հայ կաթոլիկ եկեղեցու թեմի շենքը: Նյութական վնասից զատ վտանգված է նաև հայերի կյանքը և որոշ տվյալներով հակամարտության ընթացքում զոհված հայերի թիվը արդեն հասնում է յոթ տասնյակի[11]:

Պատերազմի հենց սկզբից սիրիահայ համայնքին ցուցաբերվել է հնարավոր օգնություն՝ ՀՀ-ից և աշխարհասփյուռ հա-

---

[8] http://haqqin.az/news/9977

[9] http://www.bloomberg.com/news/2013-10-08/arab-unrest-to-cost-800-billion-as-u-a-e-benefits-hsbc-says.html

[10] Տե՛ս Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 182:

[11] http://www.panorama.am/am/comments/2013/08/30/zaqaryan/

յերից: Հատկանշական է «Օգնիր եղբորդ» նախաձեռնությունը, որի շնորհիվ Հալեպ և այլ հայաշատ բնակավայրեր հասցվեց հումանիտար և դրամական օգնություն: Այժմ հիմնադրամը աջակցում է Հայաստանում և Արցախում հաստատված սիրիահայերին[12]: Սիրիական հակամարտության արդյունքում շուրջ 10 հազ. սիրիահայեր իրենց ապաստանն են գտել Հայաստանում, որոնց հիմնախնդիրները գտնվում են ՀՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում և ցուցաբերվում է հնարավոր աջակցություն: ՀՀ կառավարության որոշմամբ Աշտարակ քաղաքի մոտ սիրիահայերի համար հիմնվելու է «Նոր Հալեպ» թաղամասը: Նրանց հիմնախնդիրները կանոնակարգելու համար ՀՀ սփյուռքի նախարարության անմիջական ջանքերով 2012 թ. ստեղծվել է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն, որի հետ միասին իրականացվել է 30-ից ավելի ծրագիր՝ ֆինանսական աջակցությունից մինչև հագուստի և սննդի տրամադրում: ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի և «Գալուստ Կյուլպենկյան» հիմնադրամի համատեղ ջանքերով փոխհատուցվելու են նաև 280 սիրիահայ ուսանողների 2013-2014 թթ. ուս.տարվա կրթավճարները[13]: Արտոնյալ պայմաններով վարկեր են տրամադրվում այն սիրիահայերին, ովքեր ցանկանում են սեփական գործ հիմնել հայրենիքում: Հայաստանում հաստատված սիրիահայերը ունեն բնակարանի և աշխատանքի խնդիր: Նյութական օգնությունից բացի, առաջին հերթին մեր հայրենակիցներին անհրաժեշտ է ցուցաբերել հոգեբանական աջակցություն, քանզի նրանցից յուրաքանչյուրն ունի մեր հոգածության ու բարի վերաբերմունքի կարիքը:

---

[12] http://www.aravot.am/2013/05/03/239014/
[13] http://www.mindiaspora.am/am/News/2717

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Արմեն Սարգսյան
Փ.գ.թ., դոցենտ

Հայ-ադրբեջանական ավելի քան հարյուրամյա շփումների արդյունքում ձևավորված խնդիրները, արցախյան հակամարտության ընթացքում ադրբեջանական կողմի պարտությունը կարող էին նորանկախ Ադրբեջանում հայերի հանդեպ բացասական հույզերի հիմք հանդիսանալ: Չանտեսելով այս գործոնի կարևորությունը՝ այնուամենայնիվ փաստենք, որ Ադրբեջանում հայատյացության գոյության և խորացման փաստը չի կարելի բացատրել տարերային ծագման գործոնով: Ավելին, Ադրբեջանում հայերի հանդեպ ատելության խորացումը և հայատյացությունը ոչ թե պատահականության, այլ պետականորեն մշակված և հետևողականորեն իրագործվող քաղաքականության հետևանք են: Ճիշտ է, Ադրբեջանի իշխանություններն ի ցույց չեն դրել *(կամ գոնե մեզ հայտնի չեն այդպիսիք)* «*Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությունը*» խորագրով կամ դրան իմաստային առումով առնչակից որևէ պաշտոնական փաստաթուղթ, սակայն դա չի նշանակում, թե Ադրբեջանում հայատյացության պետական հիմքերը փաստող ցուցիչներ գոյություն չունեն:

Ադրբեջանում պետական մակարդակով հակահայկական քարոզչությունն իրականացվում է տարբեր ուղղություններով և ոչ միշտ է, որ պետական կառույցներն են հանդես գալիս այդ քարոզչության *բացահայտ* սուբյեկտների կարգավիճակով: Իսկ սա նշանակում է, որ Ադրբեջանում հայատյացությու-

նը պետականորեն ծրագրվում և աջակցվում է ինչպես *անմիջական, այնպես էլ միջնորդավորված կերպով*: Հայատյացության անմիջական սուբյեկտի կարգավիճակում պետությունը հանդես է գալիս ի դեմս պետական իշխանության մարմինների ու դրանց ներկայացուցիչների գործունեության: Ադրբեջանի հակահայկական քաղաքականության միջնորդավորված իրագործումը տեղի է ունենում ոչ պետական կառույցների միջոցով, որոնք, իրականում հանդիսանում են պետական իշխանության de facto կցորդներ կամ արբանյակներ: Ադրբեջանում միջնորդավորված և անմիջական հակահայկականության պետական հիմքերի մասին են վկայում հետևյալ ցուցիչները.

1. Ադրբեջանի նախագահի և բազմաթիվ պետական պաշտոնյաների, քաղաքական գործիչների ռասիստական, հայատյացություն սերմանող կամ խրախուսող հայտարարությունները *(օրինակ, Ի. Ալիևի կողմից համայն հայությանը թշնամի հռչակելը, Ռ. Սաֆարովի արտահանձնման ու հերոսացման փաստի առնչությամբ տրված գնահատականները և այլն)*:

2. Ադրբեջանի կրթության նախարարության կողմից հաստատված և կրթական հաստատություններում շրջանառության մեջ դրված ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի, հեքիաթների, կրթական ծրագրերի բովանդակությունը[1]: Վերջինս մի կողմից կոչված է հաստատելու հայատյացության գոյության փաստը, իսկ մյուս կողմից՝ դրա պետականորեն հովանավորված լինելը *(Ադրբեջանի կրթության նախարարությունը պետական կառույց է և համապատասխան ոլորտում իրականացնում է պետական քաղաքականություն)*:

[1] Այս մասին տե՛ս **www.azerichild.info** կայքեջի համապատասխան նյութերը:

3. Ադրբեջանում օրենսդրական որոշ նախաձեռնությունների բնույթը[2] և միջազգային տարբեր կառույցներ կամ կազմակերպություններ ներկայացնող հայերին մուտքի վիզա չտրամադրելու, երկրից արտաքսելու մասին պատկան կառույցների որոշումները:

4. Հասարակական տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների գործունեությունը, որոնք ունենալով պետական հովանավորություն կամ աջակցություն՝ մշակութային, գիտական և այլաբնույթ նպատակների հռչակման քողի ներքո փորձում են միջազգային հարթակ տեղափոխել հակահայկականությունը (օրինակ, «Հեյդար Ալիևի հիմնադրամը»):

5. Ադրբեջանական ԶԼՄ-ներում հայկական թեմատիկայով բազմաթիվ հրապարակումները և դրանց գերակշռող մեծամասնության հայատյաց բնույթը: Միջազգային տարբեր կառույցների կամ կազմակերպությունների, փորձագետների ու քաղաքական գործիչների գնահատականներով Ադրբեջանում խոսքի ազատությունն անմխիթար վիճակում է, այլախոհությունն իշխանությունների կողմից խստորեն դատապարտվում և պատժվում է: Իսկ սա նշանակում է, որ հարավկովկասյան այս պետության մեջ առավելապես անարգել գործում են իշխանական կամ իշխանության կողմից հավանության արժա-

---

[2] Օրինակ, դեռևս 2011թ. Ադրբեջանի խորհրդարանում նախատեսվում էր անունների մասին նոր օրենքի ընդունում, որը նախատեսում էր անունների տրման «լուսացույցի» մեխանիզմը (վերջինս մշակվել էր Ադրբեջանի ԳԱԱ տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտի կողմից): Ըստ այդ օրենքի՝ «կանաչ ցուցակի» մեջ են ընդգրկված Ադրբեջանի ազգային, մշակութային, գաղափարախոսական արժեքներին համապատասխանող, «դեղին ցուցակի» մեջ՝ ոչ ցանկալի, այլ լեզուներով ոչ բարեհունչ և ծաղր առաջացնող անունները: Մինչդեռ «կարմիր ցուցակի» մեջ ընդգրկվածներն արգելված են: Դրանց շարքին են պատկանում այն մարդկանց անունները, որոնք իբր ագրեսիա են իրականացրել ադրբեջանցիների դեմ: Իսկ սա, ինչպես խոստովանում է այս մեխանիզմը մշակող կառույցի տնօրեն Ռասիմ Ալիգուլիևը, նշանակում է, որ Ադրբեջանում հայկական անունները ընկնում են արգելքի տակ:

նացած ԶԼՄ-ները, ինչը կոչված է փաստելու այն, որ, օրինակ, ադրբեջանական էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ներում «կարմիր թելի» պես անցնող հայատյացությունը ադրբեջանական իշխանությունների նպատակադիր գործունեության կամ հավանության արդյունք է:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Նարեկ Գրիգորյան

Դիվանագիտության պատմությունը վկայում է, որ բոլոր փուլերում այն ձգտել է ամրապնդել, պաշտպանել, ընդլայնել պետությունների և ազգերի տիրապետությունը: Ընդսմին, այդ նպատակներին հասնելու միջոցները եղել են տարբեր՝ բացահայտ ուժ, սպառնալիք, հոգեբանական ճնշում, նուրբ դիվանագիտական բանակցություններ և այլն: Սակայն մեր օրերում առավել կարևոր տեղ է զբաղեցնում դիվանագիտությունը: Այս առումով մեծ դեր է սկսել խաղալ արդյունավետ դիվանագիտության իրականացումը: Իսկ ի՞նչ է արդյունավետ դիվանագիտությունը և ի՞նչ նախադրյալներ են հարկավոր դրա համար: Արդյունավետ դիվանագիտությունը պետությունների կողմից մշակված և իրականացվելիք քայլերն են, որոնք պետք է ապահովեն արդյունավետ ելք, այսինքն՝ ապահովեն պետությունների կենսական շահերը: Արդյունավետ դիվանագիտության նախադրյալները, կախված ժամանակաշրջանից, պետությունից, խնդրի բնույթից, տարածաշրջանից և այլն, տարբեր են: Ընդհանրացման կարգով կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնք հիմնարար անմիջական նշանակություն ունեն: Դրանցից են՝ ա) պետության իրական շահի և նպատակի ճիշտ ըմբռնումը, բ) այդ նպատակին հասնելու արդյունավետ միջոցների ընտրությունը, գ) այդ միջոցների հմուտ կիրառումը: Պետությունների համար դրանք միանշանակ չեն, բայց դրանց արդյունավետությունը մեծ մասամբ նման է դիվանագիտության պատմական փորձին:

Արդյունավետ դիվանագիտության կարևորագույն գրավականը, թերևս, երկրի ներքին կայունությունը և հզորությունն է: Եթե երկրում չկա կարգ ու կանոն, կան լուրջ դժգոհություններ, ներքաղաքական հուզումներով լի իրավիճակ, ապա նման պայմաններում այն զուրկ է ներքին հենարանից, ուստի, արտաքին քաղաքականության ասպարեզում մեծ արդյունքների հասնել չի կարող: Զուր չէ Քոֆի Անանն ընդգծել՝ «դիվանագիտությամբ շատ բաներ կարելի է անել, բայց եթե նույն դիվանագիտության հետևում կանգնած է հզոր ուժ, ապա՝ կանես ավելին»: Ուստի որքան հզոր է պետությունը, այնքան մեծ են նրա լծակներն ազդեցության գոտիներում թելադրելու համար: Պատահական չէ, որ գոյութուն ունի մեծ և փոքր պետությունների դիվանագիտություն հասկացությունը:

Հաջորդ գործոնը երկրի տնտեսական հզորությունն է: Եթե պետությունն ունի ազդեցության գոտիներ, որտեղ նա տնտեսական հովանավորչություն կամ օժանդակություններ է անում, ապա դա նպատակաուղղված է իր շահերին, իր դիվանագիտական կուրսին նպաստելուն: Այսպես, աֆրիկյան երկրներում գերտերությունները մեծ տնտեսական ու քաղաքական ազդեցություն են ձեռք բերում տարբեր նվիրատվություններ կատարելով: Դրանով նրանք ավելի են ապահովում իրենց դիվանագիտության արդյունավետությունը: Շատ կարևոր նախադրյալ է նաև մեծ գիտելիքների և հմտությունների տեր դիվանագետների առկայությունը: Սա, ըստ երևույթին, շարժիչ ուժն է մյուս այն նախադրյալների, որոնք անհրաժեշտ են արդյունավետ դիվանագիտության համար: Հայտնի է, որ տաղանդավոր, փայլուն դիվանագետները մեծ ազդեցություն են ունեցել իրենց պետության ապագայի վրա:

Կարևոր է նաև ժողովրդի և իշխանությունների փոխադարձ վստահությունը և միմյանց աջակցելու պատրաստակամությունը: Իհարկե սա միանշանակ չէ և շատ դեպքերում այս երկուսի անհամատեղելիությունը կարող է խոչընդոտ չհանդիսանալ, սակայն ժողովրդի աջակցությունն ընդհանուր առմամբ բարձրացնում է երկրի դիվանագիտության արդյունավետությունը:

Էական նախադրյալներից է նաև տեղեկատվության արագ ապահովումը և օպերատիվ քայլերի իրականացումը: Սա հատկապես վերաբերում է մերօրյա իրականությանը, չնայած նախկինում այն նույնպես շատ կարևոր էր: Փորձագետների կողմից ստուգված և ճշգրիտ տեղեկատվության առկայության դեպքում կարելի է գլխիվայր շուռ տալ դիվանագիտության կուրսը: Բացի այդ, կարելի կլինի համապատասխան քայլեր կատարել, որոնք երաշխիք կհանդիսանան անորոշ ելքերի բացառման համար, հնարավորություն տալով նոր ռազմավարությունների մշակման կամ հների ձևափոխման համար:

Իսկ վերջում հարկ է նշել, որ կանխորոշիչ դեր ունի միջազգային բարենպաստ իրադրությունը: Սա, թերևս, ամենակարևոր ու ամենաընդհանուր նախադրյալն է, քանի որ եթե չկան համապատասխան բարենպաստ պայմաններ, ապա մնացած քայլերն ըստ ամենայնի դատապարտված կլինեն անհաջողության: Ուստի այստեղ կարևորվում է իրավիճակի ճիշտ գնահատումը: Անհրաժեշտ է հնարավորինս ճիշտ վերլուծել իրավիճակի նպատակահարմարությունը, այլապես ցանկացած զգացմունքային քայլ կհանգեցնի տվյալ դիվանագիտության ձախողմանը և ստվեր կգցի այդ պետության հետագա դիվանագիտական հեղինակության վրա իր բացասական հետևանքներով հանդերձ:

Աղբյուրներ

1. Նավասարդյան Ա., Դիվանագիտություն, 496 էջ, Եր., 2010
2. Попов В. И., Современная дипломатия: Теория и практика, 576 стр., М., 2000
3. Алексеев И. С., Искусство дипломатии. Не победить, а убедить, 284 стр., М., 2010
4. Kenneth W. Thompson, Traditions and Values in Politics and Diplomacy: Theory and Practice, 353p., 1992
5. Andrew F. Cooper, Jorge Heine, Ramesh Thakur, The Oxford Handbook of Modern Diplomacy, 953p., 2013

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ

Նարեկ Գալստյան
Ք.գ.թ., դոցենտ

Որոշ հեղինակներ ԵՄ-ն համարում են առավելապես նորմատիվային, այլ ոչ թե ռացիոնալ արտաքին քաղաքական դերակատար, որի հիմքում ընկած են անդամ-երկրների համար ընդհանրական արժեքներ ու նորմեր (խաղի կանոններ), և այդ ներքին նորմատիվային էությունն արտացոլվել է նաև ԵՄ-ի արտաքին քաղաքականության վրա: Ըստ այդմ, ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ գնալով մեծ նշանակություն են ստանում որոշակի նորմերի արտահանումն ու միջազգայնացումը: Անգամ տարբերում են արտահանման «փափուկ» և «կոշտ» տեսակները: Առաջին դեպքում ԵՄ-ն առաջարկում է վարքի այլընտրանք, որն այնքան հրապուրիչ է, որ այլ դերակատարներ որոշում են ընդօրինակել այն, իսկ երկրորդը ենթադրում է ունակություն՝ խթանելու նորմատիվային փոփոխություններ՝ օգտագործելով միջազգային հարաբերությունների ավանդական մեթոդները, ներառյալ՝ ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումը: Սակայն ակնհայտ է, որ ԵՄ-ն առավել արդյունավետ է նորմերի «փափուկե արտահանման հարցում, որն արտահայտվում է անդամակցության թեկնածու, իսկ որոշ դեպքերում՝ նաև գործընկեր-պետությունների նորմատիվային փոխակերպման՝ եվրոպականացման գործում:

Այս մոտեցումն ունի նաև քննադատներ: Մասնավորապես, ոմանք պնդում են, որ Միջերկրածովյան տարածաշրջանում ԵՄ-ի ժողովրդավարացման ու ազատականացման

ձգտումներն իրականում ուղղված են ընդամենը տեղի ավտորիտար վարչակարգերի «զսպմանն» ու դրանց՝ տարածաշրջանում ԵՄ-ի (աշխարհա)տնտեսական քաղաքականության վրա հնարավոր բացասական ազդեցությունը սահմանափակելուն: Որոշ հեղինակներ էլ նկատում են, որ ԵՄ պետությունները բոլորովին էլ չեն հրաժարվել իրենց ազգային արտաքին քաղաքականությունից, իսկ ԵՄ-ի ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը շարունակում է մնալ միջկառավարական համագործակցության հարթակ: Այս իմաստով ԵՄ-ն չի հանդիսանում ոչ նորմատիվային և ոչ էլ տնտեսական դերակատար, այլ, ավելի շուտ, ոչ տիպիկ դերակատար է, որը ծառայում է անդամ-պետությունների հավաքական (հաճախ՝ հակասական) շահերի առաջխաղացմանը:

Այս համատեքստում տեղին է հիշատակել արտաքին քաղաքականության տիպավորման մի մոտեցում, որը հենվում է միջազգային դերակատարների արտաքին քաղաքական նպատակների ու դրանց իրագործման համար կիրառվող միջոցների հարաբերակցության վրա (տես Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Արտաքին քաղաքականության տիպերը:

		Արտաքին քաղաքական նպատակներ	
		Նորմատիվային	*Ոչ նորմատիվային*
Արտաքին քաղաքականության միջոցներ	*Նորմատիվային*	*Նորմատիվային*	Ստատուս քվո
	Ոչ նորմատիվային	Կայսերական	Realpolitik
		Արտաքին քաղաքականության տիպ	

Նորմատիվային արտաքին քաղաքական տիպը ենթադրում է նորմատիվային արտաքին քաղաքական նպատակի և դրա իրագործման նորմատիվային միջոցների առկայություն, իսկ դերակատարի քաղաքականությունն, ըստ այդմ, ուղղված կլինի միջազգային իրավունքի ու ինստիտուտների ամրապնդմանը: *Realpolitik* տիպի դեպքում դերակատարն իր արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար օգտագործում է ողջ «զինանոցը», ներառյալ՝ հարկադրանքի մեթոդները: *Կայսերական* տիպի դեպքում դերակատարն իբր հանդես է գալիս նորմատիվային նպատակներով, սակայն դրանցով չի սահմանափակվում և միջազգային նորմերի փոխարեն նա օգտագործում է իր արտաքին քաղաքական ողջ «զինանոցը» նորմեր ներմուծելու համար, եթե անգամ դա հակասում է միջազգային իրավունքին: *Սթատուս քվո* տիպի դեպքում դերակատարը գործում է առկա միջազգային համակարգի շրջանակներում, իրականացնում իր ներքին ու միջազգային պարտավորություններին համապատասխան քաղաքականություն: Նա չունի նորմատիվային արտաքին քաղաքական նպատակներ, այլ ընդամենը պահպանում է առկա միջազգային ստատուս քվոն: Սակայն հեղինակները նկատում են, որ արդյունավետ նորմատիվային արտաքին քաղաքականության համար նպատակի ու միջոցների համապատասխանությունը դեռ բավարար չէ, և դերակատարը պետք է նաև ունենա որոշակի նորմատիվային ազդեցություն: Վերջինս պետք է լինի ակնկալվող, իսկ հակառակ դեպքում քաղաքականության արդյունքները կլինեն չակնկալված:

Վերոնշյալներն իդեալական տիպեր են, և իրականում կարելի է խոսել միայն դերակատարի վարքում այս կամ այն տիպի գերակայության մասին: Ավելին, նորմատիվային բա-

ղադրիչի վրա շեշտադրումը դեռ չի խոսում դերակատարի հզորության մասին. այդպիսի տիպը կարող է լինել նաև ներքին սահմանափակումների, հարաբերական թուլության արդյունք կամ էլ այդ քաղաքականության անբավարար արդյունավետությունը կարող է լինել «անբարենպաստ միջավայրի» հետևանք (օրինակ, ազդեցիկ այլ դերակատարների հետ մրցակցությունը կամ անկառավարելի տարածաշրջանային իրադրությունը):

Կարծում ենք՝ պետք չէ ոչ իդեալականացնել, ոչ էլ թերագնահատել ԵՄ-ի նորմաստեղծ ունակությունը: Իրականում ԵՄ-ի նորմատիվային ուժը՝ եվրոպականացման ունակություններն ունեն իրենց սահմաններն ու սահմանափակումները, և եթե այն բավական արդյունավետ է անդամ ու թեկնածու պետությունների դեպքում, ապա անդամակցության հեռանկար չունեցող գործընկեր երկրների համար այդ էֆեկտը բավական սահմանափակ է: Ավելին, կախված ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականության նպատակներից՝ կոնկրետ տարածաշրջանի երկրների ու նրանց փոխհարաբերությունների եվրոպականացումը կարող է ծառայել այլ՝ առավել ռացիոնալ կամ պրագմատիկ շահերին:

Գրականություն

1. *Adrian H.-P.* «Normativeե power Europe: a realist critique. Journal of European Public Policy, 13.2, March 2006
2. *Cavatorta F., Tonra B.* Normative Foundations in the EU Foreign, Security and Defence Policy. The Case of the Middle East Peace Process: A View from the Field, School of Law and

Government, Dublin City University, Glasnevin, Dublin 9, Ireland, 2007

3. *Manners I.* The normative power of the European Union in a globalised world, *in* Laudi Z. (Ed.), EU Foreign Policy in a Globalized World Normative power and social preferences, Routledge, 2008
4. *Samir A., Kenz A. E.* Europe and the Arab World: Patterns and prospects for the new relationship. New York, NY: Zed Books, 2005
5. *Tocci N. (Ed.).* Who is a Normative Foreign Policy Actor? The European Union and its Global Partners, CEPS, Brussels, 2008

ОСНОВНЫЕ ПРАВИЛА ПЕРЕВОДА ТЕКСТА ПРИ МАШИННОМ ПЕРЕВОДЕ

Кристина Арутюнова
к.ф.н

Ключевые слова: машинный перевод, морфологический, синтаксический, анализ, недискретные, математическое моделирование, поверхностно-синтаксическая структура

Лингвистическое обеспечение автоматического перевода – это обеспечение понимания текста на языке, с которого он переводится, и формирование реального, понятного текста на языке, на который текст переводится. Вся система лингвистической обработки информации в существующих на сегодняшний день программах сводится к следующим этапам: обработка текста ввода (T1) – перевод – выдача готового текста на другом языке (T2). Все три шага работают вне зависимости друг от друга – во избежание переноса ошибки одной системы на другую. Анализ предполагает прежде всего морфологическую обработку текстовой информации (определение морфологических значений словоформ, их синтез в слово), затем задается синтаксическая обработка, в которой текст, разбитый на предложения, рассматривается как некий смысл. Цель морфологического анализа – установление синтаксических функций словоформ, по которым возможно построение синтаксиса предложения или фразы. Традиционный синтаксический анализ осуществляется

покомпонентно, рассматривается синтаксическая функция каждого члена предложения. Формальные подходы используют грамматики непосредственно составляющих и трансформационные грамматики. Первые представляют собой набор правил, при переходе от одного из них к другому из отдельных слов и словосочетаний образуется предложение (при синтаксическом анализе предложения правила работают в обратном направлении: от предложения к составляющим), которое представляется в виде дерева зависимостей. Трансформационная грамматика использует процедурные правила наряду с правилами преобразования предложения. “Анализ с применением трансформационной грамматики дает синтаксическое дерево – глубинную структуру предложения, получаемую с помощью базового компонента, и дерево – поверхностную структуру, которая строится с применением трансформационного компонента. При несовпадении деревьев глубинная структура подвергается трансформациям и строится новая поверхностная структура. Анализ считается правильным при совпадении обеих структур” **[1, с.72].** Когда синтаксическая структура предложения Т1 преобразована в синтаксическую структуру предложения Т2, начинается этап перевода. Перевод реализуется на уровне синтаксиса предложения. На этом этапе используется символический язык-посредник, который позволяет описать в одних и тех же формулах, схемах и правилах оба языка (с которого переводят и на который переводят). Далее символическое предложение передается средствами Т2, происходит морфологическое описание (морфологическая коррекция) текста, окончательный вид которого, по идее, должен соответствовать

нормативным речевым образцам Т2. “Преобразование синтаксической структуры языка Т1 в синтаксическую структуру языка Т2 – это порождение нормальной синтаксической структуры Т2, что представляет собой нормально расположенную цепь (дерево) зависимостей” **[2, с.75].** В связи с этим по морфологическим характеристикам слов структуры Т1 подбираются слова с морфологическими характеристиками структуры Т2.

Вторым шагом этапа собственно перевода является “лексическое” преобразование синтаксической структуры Т1 в синтаксическую структуру Т2. Для синтаксического преобразования вводятся правила нормализации, убираются возможные сочетаемостные ошибки (например, двое девушек → две девушки), продолжается линеаризация синтаксической структуры Т2, начатая на предыдущих этапах, т.е. устанавливается тот порядок слов, который характерен для языка, на который переводится. Выход из этапа линеаризации есть вход в этап синтаксического синтеза предложения Т2. Здесь устанавливаются морфологические словоформы и ставятся знаки препинания. При установлении морфологических форм применяются общие и частные правила. “Общими являются правила, действующие на всем протяжении языка и прерывающие свое действие (или варьируясь) на частном пространстве” **[3, с.259].** Например, винительный падеж прямого дополнения совпадает с именительным, однако для имен со значением одушевленности он равен родительному (первое правило – общее, второе – частное). Далее следует этап морфологического синтеза, который предполагает графическое оформление перевода и

осуществляется в порядке, обратном морфологическому вводу. Например, TAKE ind.prst,3 sg. → TAKE нсв. наст. 3л.

Последний этап работы - лексический перевод. "Под лексическим значением слова понимается семантика знака и та часть его прагматики, которая включается в модальную рамку толкования. Лексическое значение слова обнаруживается в его толковании, которое представляет собой перевод слова на особый семантический язык" **[4, с.69]**. Правила лексического перевода, применяемые в современных программах МП, делятся на "простые и сложные" (тривиальные и нетривиальные **[4, с.69]**). Простые правила регулируют перевод единиц, не осложненных омонимией и полисемией.

Последним этапом синтеза МП является глубинно-синтаксический синтез. На вход процедуры развертывания поступает русская структура, полученная в результате перевода нормализованной английской структуры. Этот процесс называется развертыванием и, следуя непосредственно за переводом, приводит полученную на русском языке синтаксическую структуру в нормализованный вид.

Как показали промышленные образцы программ машинного перевода, существующие результаты дают возможность полагать, что в скором будущем можно получить более обнадеживающие результаты. К сожалению, все программы построены так, что ни одно звено в их структуре не выполняет приписанных ему действий полностью. Обусловлено это и тем, что язык является слишком сложной структурой для интегрального, досконального описания. Математическое описание и недискретные исследования пока остаются вне общего лингвистического пространства, в то

время как только они и могут решить вопросы, связанные с МП.

Использованная литература

1. Апресян Ю.Д. Лингвистическое обеспечение системы ЭТАП-2. М., Наука, 1989, 72 с.
2. Кобозева И.М. Лингвистическая семантика. М., МГУ, URSS, 2009, 75 с.
3. Леонтьева Н.Н. Автоматическое понимание текстов: системы. модели. ресурсы. М., Изд. Академия, 2006, 259 с.
4. Леонтьева Н.Н. и др. Семантический компонент в системах автоматического понимания текстов. Машинный перевод и автоматизация информационных процессов. М., ВЦП, 1982, 69 с .

ПСИХОЛИНГВИСТИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ЭФФЕКТА “ОБМАНУТОГО ОЖИДАНИЯ”

Рузанна Геворкян
Кандидат филологических наук

Стилистические эффекты создаются не языковой единицей как таковой, не фактом ее присутствия и не фактом ее адекватности или несоответствия к денотату, а фактом совместной встречаемости, соотнесенности в тексте с другой единицей. Возможность появления одних стилистических эффектов уже заложена в языковой единице, другие стилистические эффекты возникают в результате встречаемости, сочетаемости языковых единиц. Можно предположить, что появление таких единиц является непредсказуемым для получателя речи. Следовательно, можно сказать, что стилистический эффект – это “стилистическое впечатление”, которое возникает у слушателя/читателя в результате появления в речи непредсказуемого (нейтрального или стилистически окрашенного) элемента, обуславливающего особую смысловую организацию высказывания/текста.

Для того, чтобы понять суть эффекта “обманутого ожидания” как психолингвистического явления, необходимо обратиться к психологической стороне вопроса о восприятии отклонения от нормы, то есть к некоторым положениям психологии речевосприятия, а именно к современным данным о вероятностном прогнозировании, под которым понимается “способность человека использовать имеющуюся в его прошлом опыте информацию для прогноза вероятности

наступления тех или иных событий в имеющейся или предстоящей информации".[1]

Прошлый опыт индивида содержит не только сведения о прошлых событиях, но и представления о частотах, с которыми эти события и их комбинации происходили и повторялись. Одни события (высказывания) ожидаются с большей вероятностью, другие – с меньшей. При этом субъективная вероятность может не совпадать с объективной. Чем больше неожидана для человека ситуация, тем сильнее эмоциональное потрясение, переживаемое им.

Не следует забывать, что контраст между более вероятным (типичным) и менее вероятным (неожиданным) выражается в терминах предсказуемости и непредсказуемости, где ожидание можно рассматривать как главное условие предсказуемости, которая представляет собой "способность приемника предугадывать в ходе временного или пространственного развертывания сообщения, исходя из уже переданных элементов, какой элемент сообщения последует, способность экстраполировать временную и пространственную последовательности элементов сообщения, представлять будущее какого-либо явления, исходя из его прошлого".[2] Иными словами, реципиент ожидает сообщения определенного типа, при чтении настраивается на получение определенного рода информации, воспринимает, например, смысл строчки, которую читает, и одновременно предсказывает содержание последующего отрезка исходя из предыдущего. Результатом продвижения читателя по тексту является возрастающая

---

[1] Арнольд И.В. Стилистика современного языка, М.: Просвещение, 1990 - 59 с.
[2] Моль А. Теория информации и эстетическое восприятие, М.: Мир, 1996 – 117 с.

интенсивность ожидания. Если ожидания оправдываются полностью, объем информации в сообщении близок к нулю, так как читатель не получил ничего, чего бы не знал раньше.

Этого же мнения придерживается и К.А. Серова, считающая, что читатель имеет дело с текстом, несущим минимум информации, если в процессе чтения, при наполнении знаками традиционного концепта, выхода за рамки стандартного тезауруса не происходит.[3] Следовательно, ценность сообщения связана с его неожиданностью, непредвиденностью и оригинальностью. Наибольшую информацию несет нарушение ожидаемого порядка, в основе которого лежит определенная дезориентация привычных мыслей, восприятий, которая может приводить к перестройке уже сложившейся "картины мира" в сознании читателя.

Таким образом, эффект "обманутого ожидания" возникает на основе взаимодействия двух противоположных явлений психолингвистического характера – предсказуемости и непредсказуемости, где нарушение предсказуемости составляет основу экспрессивности. Важным фактором является усиление ожидания, то есть увеличение упорядоченности элементов контекста непосредственно перед появлением элемента малой предсказуемости. Отсюда возникает расположение последовательностей слов по линиям наивысшей и наименьшей вероятности. При этом, чем неожиданнее совмещение элементов, тем сильнее эффект "обманутого ожидания", что приводит к более глубокому восприятию текста.

---

[3] Серова К.А. К проблеме восприятия и анализа текста, http./www.amursu.ru/

THE CONCEPT FAILURE IN BRITISH AND ARMENIAN LINGUO-CULTURES

Lilit Badalyan
Candidate of Philological Sciences

The most important concepts are encoded in language. Some linguists maintain that the central concepts are reflected in the grammar of language and it is the grammar that forms the patterns reflected in lexis. Others are of the opinion that lexical meanings are closely related to concepts. They are sometimes identified with concepts. But concept is a purely logical category, whereas meaning is a linguistic one. *Concept*, as is known, is versatile; it is characterized by a number of properties. Meaning takes one of these properties and through it represents the concept as a whole. The same concept can be represented "in a number of linguistic manifestations (meanings) but, however each manifestation causes a slight (and sometimes considerable) modification of the concept, in other words, discloses latent or unknown properties of the concept"[1].

The given paper aims to study the linguistic means (both lexical and phraseological) of expressing the concept "Failure" in English and Armenian. "Failure" is one of the most dreaded concepts in any culture in spite of the fact that it does not exist and is a fabrication of mind. Although most people hate to be labeled a failure and love to be labeled a success, it is only through failure that most of life's greatest successes are achieved.

---

[1] Болдырев Н. Н. (2004). *Концептуальное пространство когнитивной лингвистики // Вопросы когнитивной лингвистики*. № 1. стр. 13

In English the linguistic units comprising the semantic component of “failure” have been singled out through thorough excerption from “Oxford Advanced Learner’s Dictionary”, “Longman Dictionary of Contemporary English” and “Merriam Webster Thesaurus” (75 verbs, 45 nouns, 13 adjectives, 37 phraseological units). In Armenian the same units have been extracted from E. Aghayan’s “Modern Armenian Explanatory Dictionary”, A. Suqiasyan’s “Dictionary of Armenian Synonyms” and A. Suqiasyan’s “Dictionary of Armenian Phraseological Units” (35 verbs, 45 nouns, 20 adjectives, 80 phraseological units).

The contrastive study of the material reveals the following differences between the two languages:

- In English the verbs have concrete meanings for they have distinguishing semantic components in their meanings while in Armenian the verbs possess general meaning and are mainly synonymous for they have derived from the same base built on the pattern *ձախ+suffix*. In the case of rare exceptions when the words are not synonyms, they are words with general meaning and express the given meaning metaphorically in certain collocations.It is worth mentioning that according to H. Acharyan[2] in Armenian like many other Indo-European languages the word *ձախ* meant bad luck and there was a taboo on the word.
- The lexico-semantic group (LSG) of verbs in English is richer as compared with the LSG of verbs in Armenian due to the fact that in English the LSG comprises verbs

[2] *Հայերեն արմատական բառարան*, Երևան 1977, էջ 142.

used in colloquial speech. Besides in English 21 phrasal verbs expressing the meaning "to fail", most of which are colloquial, comprise an essential part of the LSG under study.

- In English the LSG of nouns includes many colloquial nouns denoting "a person or thing that is a failure" while in the corresponding Armenian LSG there are no colloquial nouns.
- In Armenian 10 out of 45nouns have derived from the same base *ձախ*.
- The phraseological units in both languages are of frequent use in colloquial language.
- In Armenian the concept "failure" is mainly expressed by phraseological units, as the latter form the prevailing majority in the vocabulary domain that covers the given concept (80 out of 180 Armenian vocabulary units under study are phraseological units).
- In English the phraseological units can be classified according to their common meaning into concrete semantic groups, like the words in the semantic field, while in Armenian we cannot distinguish concrete semantic groupings.
- In Armenian, the phraseological units are mainly formed with parts of body, animal names or images based on the words *sky, fire*, and *devil* while in English the phraseological units are not based on vivid images.

The study and comparison of lexical and phraseological means expressing the concept "failure" leads us to conclude that:

- In English failure refers to the state of not meeting a desirable or intended objective because of lack of money, bad organization, etc.
- In Armenian the concept “failure” is mainly attributed to “having lack of fate, being not fortunate”. That is why, in Armenian there are not many words expressing “just failure to do sth” and they all have the semantic component “not to achieve sth or not to manage to do sth because of fate or lack of fortune”. Thus, for the Armenians failure is mainly treated as a result of bad luck.

STRUCTURE OF DECISION SUPPORT SYSTEM FOR IT INVESTMENT PROJECTS EVALUATION

Arman Grigoryan

ABSTRACT

